



**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԻՐԱՏԵՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Կանանց ռեսուրսային կենտրոնի կողմից իրականացված Կանանց կազմակերպությունների և նախաձեռնությունների կարիքների գնահատմանը և Հայաստանում Կանանց հիմնադրամի ստեղծման հնարավորությունների վերհանմանը նվիրված ծրագրի հետազոտական թիմը իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր մասնակիցներին, ովքեր իրենց ուժերի ներածին չափով և ավելին, տրամադրելով իրենց ժամանակը և կիսելով իրենց սպասումները, անգնահատելի ներդրում են ունեցել հետազոտության իրականացման գործում: Շնորհակալություն ենք հայտնում նաև ձեր կարծիքների, փոփոխություններին միտված առաջարկությունների, ինչպես նաև քննադատական մոտեցում ցուցաբերելու համար, ինչի շնորհիվ հնարավորություն ենք ունեցել իրականացնել հնարավորին ճափ անաչառ վերլուծություն: Հուսով ենք, որ այս արդյունքները մտածելու և ավելի համախմբված աշխատելու հնարավորություն կտան բոլորիս և ավելի լայն հարթակ կստեղծեն հետագա ավելի սերտ համագործակցության համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ..... 4

ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱԲՅՈՒՄ..... 5

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՆԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ 21

ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԱՌԱՆՁՆՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ..... 26

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 30

ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ 37

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ՀՍՏՈՒԹՅՈՒՆ 44

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԵՏ..... 47

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ 53

LIST OF KEY INFORMANTS 66

ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այսօր աշխարհի մի շարք երկրներում (Միացյալ Նահանգներ, Բոսնիա և Հերցեգովինա, Աֆրիկայի երկրներ՝ Ուգանդա, Քենիա, Նիգերիա, Տանզանիա, և այլ երկրներ) ստեղծվում են հիմնադրամներ, որոնք որպես իրենց կողմից տրամադրվող աջակցության թիրախ ընտրում են կանանց՝ անհատներին, հետազոտողներին, ակտիվիստներին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, որոնք հիմնադրվում(ել) և ղեկավարվում(ել) են կանանց կողմից, և, որոնց գործունեությունն ուղղված է կանանց իրավունքների պաշտպանությանը և կանանց օրակարգի առաջխաղացմանը կյանքի տարբեր բնագավառներում:

Նմանատիպ հիմնադրամների աջակցությունը չի սահմանափակվում միայն տարատեսակ ծրագրերի ֆինանսավորմամբ: Կանանց հիմնադրամները առանձնանում են հատկապես կարողությունների, գիտելիքների և հմտությունների զարգացման մեջ իրենց ներդրումով. դրանք ոչ միայն գումար են տրամադրում և պահանջում հաշվետվություններ, այլ դրամաշնորհառուների հետ միասին անցնում են ծրագրի ուղին՝ մշտական աջակցությունների և խորհրդատվությունների միջոցով ապահովելով վերջիններիս անձնական և աշխատանքային կարողությունների կատարելագործումը: Այս հետազոտությունը նպատակ ունի մատնանշելու ոչ միայն կանանց հիմնադրամների կարևորությունը, այլ նաև այն ոլորտները, որոնցում վերջիններս աջակցություն են ցուցաբերում իրենց թիրախային խմբերին:

Չնայած գործունեության ոլորտների ընդհանուր տարբերություններին, կանանց հիմնադրամների հիմնական նպատակը հանդիսանում է կանանց և աղջիկների կյանքի և կենսագործունեության, ինչպես նաև իրավունքների լիարժեք իրացման համար ավելի բարենպաստ պայմանների ստեղծումը:

ԿԱՆԱՆՑ ԶԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Վերջին տասնամյակներում կանանց և ֆեմինիստական կազմակերպությունները անցնում են փոխակերպման տարբեր փուլեր և հարմարվում են անընդհատ ընթացող սոցիալական փոփոխություններին, ինչպես նաև պատասխանում են աճող ֆունդամենտալիզմին, ռազմականացմանը (միլիտարիզմին), ծայրահեղական ազգայնականացմանը (նացիոնալիզմին) և այլ շարժումներին, որոնք դեմ են դուրս գալիս կանանց իրավունքներին և գենդերային հավասարությանը:

Ամբողջ աշխարհում կանանց կազմակերպությունների գործունեությունը ուղեկցվում է մի շարք խոչընդոտներով, և, ինչպես փաստում է «Կանանց իրավունքները զարգացման մեջ» ասոցիացիայի (Association for Women's Rights in Development, AWID) կողմից իրականացված «Ո՞րտեղ է կանանց իրավունքների համար գումարը» հետազոտությունը, վերջին հինգ տարիների ընթացքում կանանց կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական աջակցությունը զգալիորեն նվազել է:¹ Նվազումը զգալի է հատկապես Լատինական Ամերիկայում, Միջին Արևելքում և Հարավային Աֆրիկայում, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում՝ ներառյալ հետխորհրդային տարածքը:² Օրինակ, համաձայն 2006 թվականին AWID-ի կողմից անցկացված **հետազոտության արդյունքների, հարցմանը մասնակցած կազմակերպությունների 33%-ի տարեկան եկամուտը 10 000 դոլար և ավելի քիչ է կազմել:**³

Մինչդեռ կանանց կազմակերպությունների աջակցության հիմնական աղբյուրը ներկայումս դարձել են ոչ թե մեծ միջազգային դոնորները կամ տեղական իշխանությունները, այլ կանանց աջակցության տեղական հիմնադրամները: Ինչպես նշում է Բոսնիայի և Հերցեգովինայի կանանց հզորացման հիմնադրամի տնօրեն Դուբրավկա Կովաչևիչը՝ «ոչինչ մեզ համար առանց մեզ»:⁴

Կանանց հիմնադրամների առավելությունները այսպես կոչված մեյնսթրիմ հիմնադրամների համեմատ կարելի է ամփոփել հետևյալ կետերով՝⁵

- Կանանց հիմնադրամները կարող են տրամադրել **փոքր, ճկուն դրամաշնորհներ:**
- Կանանց հիմնադրամները ազատ են տրամադրել տեղական կազմակերպություններին **հիմնական ֆինանսավորում (core funding)**՝ ի տարբերություն զուտ ծրագրային ֆինանսավորման:

¹https://www.awid.org/sites/default/files/atoms/files/assessing_resources_and_role_of_donors_fundhe r.pdf

² Ibid

³ Building Feminist Movements and Organizations: Global Perspective, ed. By Lydia Alpizar Duran, Noel D. Payne, Anahi Russi,

⁴ Հատված ԿՌԿ-ի կողմից իրականացված փորձագիտական հարցումից

⁵ <https://www.womankind.org.uk/docs/default-source/resources/briefings/leadersforchange-final.pdf?sfvrsn=6>

- Կանանց հիմնադրամները առավել հաճախ տրամադրում են **մի քանի տարվա կայուն ֆինանսավորում**, որպեսզի տեղական կազմակերպությունները կարողանան իրականացնել երկարաժամկետ ծրագրեր և ապահովել կայունություն իրենց գործունեության մեջ:
- Կանանց հիմնադրամների կողմից պահանջվող դրամաշնորհային **դիմումները, մոնիթորինգի և գնահատման գործընթացները, շատ ավելի պարզեցված են**: Օրինակ, շատ կանանց հիմնադրամներ ընդունում են դիմումներ տարբեր լեզուներով, ոչ անպայման գրված շատ լավ անգլերենով, ինչպես նաև դիմումները հաճախ բավական կարճ և հեշտ են դրանք լրացնելու տեսանկյունից:
- Կանանց հիմնադրամները ունեն շատ **սերտ կապեր տեղական կազմակերպությունների հետ** և հասանելիություն նույնիսկ մայրաքաղաքից հեռավոր վայրերում գտնվող կանանց խմբերին, ինչպես նաև մարզինալ և շատ անգամ ձայնի հնարավորություն չունեցող խմբերին, քանի որ պարբերաբար իրականացնում են տարբեր տեսակի կարիքների գնահատումներ և իրենք էլ կազմում են կանանց շարժման անբաժան մասը:
- Կանանց հիմնադրամները աջակցում են այն խմբերին, որոնք աշխատում են տվյալ հասարակությունում **զգայուն և տաքուացված հիմնախնդիրների** շուրջ, որոնց լուծմանը շատ հաճախ չեն ցանկանում աջակցել մեյնսթրիմ և մեծ դոնորները:

Ըստ AWID-ի հետազոտության արդյունքների կանանց կազմակերպությունները ավելի շատ ժամանակ են ծախսում ֆոնդահայթայթման (ֆանդայզինգի) վրա առանց կոնկրետ արդյունքների, հաճախ էլ ստիպված են «հարմարեցնել» ծրագրերը դոնորների պահանջներին: Շատերը փաստում են, որ ստիպված են աջակցություն փնտրել պետական գրանտերից, ինչը ևս ցանկալի չէ, քանի որ զգալիորեն նվազեցնում է տեղական իշխանություններին քննադատելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, գրեթե անհնարին է դառնում ստանալ ինստիտուցիոնալ աջակցություն, ինչը կապահովեր կազմակերպությունների կայունությունը և կնպաստեր գործողությունների հաջողականության ապահովմանը:

Վերոնշյալ պայմաններում հրատապ է դառնում կանանց կողմից իշխանության և կարևոր դերակատարի դերի նվաճումը, կանանց կազմակերպությունների հզորացումը և գլոբալ ֆեմինիստական շարժման զարգացումը: Սյուօրվա գլոբալ մարտահրավերներին լիարժեք պատասխան տալու ռազմավարություններից մեկն է դառնում կանանց կողմից ղեկավարվող և կանանց համար ստեղծված հիմնադրամների ձևավորումը և վերջիններիս կողմից կանանց կազմակերպությունների հզորացումը՝ ուժեղ քաղաքական դերակատարներ և որոշումներ կայացնողներ դառնալու համար:

Կանանց հիմնադրամների առաքելությունն է մոբիլիզացնել ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսներ՝ տեղական կանանց կազմակերպություններին,

նախաձեռնություններին, անհատներին աջակցելու և նրանց գործունեությունը առավել կայուն դառննելու համար: Կանանց հիմնադրամները վճռորոշ դեր են խաղում այն կազմակերպություններին աջակցություն տրամադրելու գործում, որոնք չափազանց ռիսկային և փոքր են գնահատվում մեյնսթրիմ դոնորների կողմից: Կանանց հիմնադրամները, լինելով քաղաքական շարժիչ ուժ և ունենալով բավական իշխանություն փոփոխությունների իրականացման առումով, տարբեր երկրներում կանանց քաղաքական օրակարգը առաջ են մղում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, անհատների, հետազոտողների և այլ կանանց միջոցով, ովքեր ֆինանսավորում են ստանում իրենց կողմից: Օրինակ՝ Կանանց հիմնադրամը, բարձրաձայնելով ընտանեկան բռնության վտանգավոր հետևանքների մասին, կարող է աջակցել ընտանեկան բռնության մասին օրենսդրական փոփոխությունների իրականացմանը անուղղակի կերպով՝ ընտանեկան բռնության հարցերով զբաղվող կազմակերպությունների ծրագրերին և ջատագույնության միջոցառումներին աջակցելով: Բացի այդ, կանանց հիմնադրամների գլխավոր սկզբունքներից է այն, որ վերջիններս ընդունում և տեսնում են կանանց հնարավորությունների սահմանափակումները ժամանակակից աշխարհում և **վստահ են, որ կանայք կարող են անել ավելին, քան գենդերային դերերի հիման վրա իրենց բաժին ընկած «գործերը»:**

Առաջին Կանանց աջակցման/հզորացման հիմնադրամը հիմնադրվել է Նիդերլանդներում 1983 թվականին: Հետագայում նմանատիպ հիմնադրամներ ստեղծվել են ԱՄՆ-ում, Մեքսիկայում, Բրազիլիայում, Չիլիում, Նեպալում, Ուկրաինայում, Սերբիայում և այլ երկրներում: Կանանց աջակցման ֆոնդերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանց կողմից տրամադրված դրամաշնորհները համեմատաբար փոքր են (10000-20000 ԱՄՆ դոլար), սակայն տրամադրվող աջակցությունը երկարաժամկետ է և ուղղված է կազմակերպության զարգացմանը, այլ ոչ թե կոնկրետ ծրագրերին: Միջազգային մակարդակում աշխատող ամենահայտնի հիմնադրամները ներկայումս երկուսն են՝ Mama Cash-ը և Global Fund for Women-ը: 2006 թվականին նրանց կողմից տրամադրված աջակցությունը կազմել է 13 000 000 միլիոն ԱՄՆ դոլար:⁶ Ըստ «Ո՞րտեղ է կանանց իրավունքների համար գումարը» հետազոտության թեև կանանց աջակցման հիմնադրամները, ինչպես և շատ այլ դոնորներ, պահանջում են իրենց շահառու կազմակերպություններից հաշվետու լինել, ներկայացնել պահանջվող ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ, այնուամենայնիվ հարաբերությունները տեղական հիմնադրամների և կանանց կազմակերպությունների միջև այլ, ոչ հիերարխիկ և գործընկերային հարթության վրա են գտնվում, քան այլ միջազգային և բյուրոկրատացված մեծ հիմնադրամների հետ: Ըստ ետևյալի, հավասարության, համագործակցության և հարգանքի վրա հիմնված հարաբերությունները ավելի են նպաստում կանանց կազմակերպությունների և նախաձեռնությունների կայունացմանը, նոր գաղափարների ակտիվացմանը, ինչպես նաև մարզինալ խմբերի (LFS կանայք, հաշմանդամություն ունեցող կանայք, գյուղի կանայք և այլն) ներկայացուցիչների հնարավորությունների ընդլայնմանը, քանի որ հաճախ տեղական կանանց հիմնադրամները միակն են, որոնք աջակցում են կանանց ոչ արտոնյալ խմբերին:

⁶ <http://www.oecd.org/social/gender-development/38902246.pdf>

Կանանց հիմնադրամների մեծամասնությունը անդամակցում է Կանանց հիմնադրամների միջազգային ցանցերին: Անկախ նրանից, թե աշխարհի որ մասում են գործում հիմնադրամները, նրանց գործունեության ռազմավարական ոլորտները նույնն են.⁷

- Բոլոր հիմնադրամները կենտրոնացած են **կանանց կողմից ղեկավարվող կազմակերպությունների/նախաձեռնությունների վրա և ներդրումներ են անում կանանց կողմից առաջարկվող լուծումների հիման վրա:** Օրինակ, աջակցում են միայն կանանց, իսկ ավելի հաճախ հենց տվյալ խնդիրը կրողների կողմից առաջարկվող ռազմավարություններին՝ ընտանեկան բռնության, սեռական բռնության, կանանց տնտեսական զարգացման և այլն: Օրինակ, Բոսնիայի և Հերցեգովինայի հիմնադրամի աջակցությամբ Բոսնիայում սկսեցին իրականացվել ծրագրեր պատերազմի ժամանակ բռնաբարության զոհ դարձած կանանց համար. հիմնախնդիր, որին մինչ այդ որևէ մեկը չէր անդրադարձել:
- **Հիմնադրամների հիմնական առաքելությունը սոցիալական փոփոխություններին նպաստելն է՝** թիրախավորելով այնպիսի ծրագրեր, որոնք ուղղված են համակարգային փոփոխություններին, ինչպես նաև դիրքորոշումների և սոցիալական նորմերի վերախմաստավորմանը: Կանանց հիմնադրամների ցանցի կողմից իրականացված հետազոտության համաձայն հիմնադրամների 98%-ը որպես գործունեության առաջնայնություն նշել է կանանց իրավունքների և գենդերային հավասարության ոլորտում սոցիալական փոփոխությունների իրականացումը: Որպես սոցիալական փոփոխության կարևորագույն ոլորտ կանանց հիմնադրամների զգալի մեծամասնությունը կարևորում է կանանց իրավունքների ոլորտում տնտեսական արդարության հասնելը:
- **Հիմնադրամների մեծամասնությունը դրամաշնորհներ տրամադրելուց զատ զբաղվում է նաև դիվերսիֆիկացմամբ (բազմակողմանի զարգացմամբ):** Այսինքն՝ բացի ֆինանսական աջակցությունից, հիմնադրամները պարբերաբար իրականացնում են կարիքների գնահատումներ, հետազոտություններ, աջակցում են կանանց և նրանց կողմից ղեկավարվող կազմակերպություններին զարգացնել առաջնորդական և այլ անհրաժեշտ կազմակերպչական հմտություններ, ինչպես նաև տարբեր տիպի կարողությունների զարգացման դասընթացներ են անցկացնում՝ ելնելով կազմակերպությունների կարիքներից:
- Ուսումնասիրված հիմնադրամների 90%-ը համարում է, որ իրենք զբաղված են նաև բարեգործության վերախմաստավորմամբ: Այսինքն, կանանց **հիմնադրամները վերաձևակերպում են և նոր լույսի ներքո են ներկայացնում հայրիշխանական համակարգում ձևավորված բարեգործություն հասկացությունը՝** շեշտը դնելով հավասարության, համերաշխության և հարգանքի վրա բարեգործություն անողի և ստացողի միջև: Ինչպես նաև, կանանց հիմնադրամները ձևավորում են մի համակարգ, որտեղ յուրաքանչյուրը կարող է լինել բարեգործ:

⁷ <http://www.womensfundingnetwork.org/wp-content/uploads/2014/03/TheRoleofWomensFunds.pdf>

Անդրադառնալով բարեգործության հարցին, Վրաստանի կանանց հիմնադրամի ծրագրերի համակարգող Սալոմե Չալեգիշվիլին նշեց հետևյալը. «Կարծում եմ շատ բան է փոխվել Հիմնադրամի ստեղծումից հետո: Կանանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերը (ներառյալ Վրաստանի տարբեր շրջաններից) իրականացնում են հետաքրքիր ծրագրեր և միջոցառումներ կանանց պաշտպանության ոլորտում: Ֆեմինիզմի գաղափարը նույնպես մեծ տարածում է ստացվել հասարակությունում (հիմնադրամի ստեղծումից առաջ նույնիսկ կանանց կազմակերպությունները հաճախ իրենց հեռվացնում էին ֆեմինիզմից): Զվիրակտիվիստները և սվեյլի բացահայտ սկսեցին արտահայտվել իրենց խնդիրների և իրավունքների մասին: Հիմնադրամի կարևորագույն առաքելությունն է նաև ֆեմինիստական բարեգործությունը, ինչը ներկայումս տարածում է ստանում հասարակությունում: Վերջապես, Հիմնադրամը կարողացել է դիրքավորել իրեն որպես սոցիալական փոփոխությունների համար աշխատող գործակալ, այլ ոչ միայն պարզապես եկամուտներ բաժանող բյուրոկրատական ինստիտուտ»:⁸

- Կանանց հիմնադրամների առաջնայնություններից է նաև այսպես կոչված **գենդերային լինգաների (ոսպնյակների)**⁹ օգտագործումը ցանկացած քաղաքական, տնտեսական, սոցիալական հիմնախնդիր վերլուծելու համար:
- Կանանց հիմնադրամները նպաստում են նաև տարբեր տեսակի **սոցիալական ցանցերի ձևավորմանը**, ինչպես նաև կանանց շրջանում սոցիալական կապիտալի կուտակմանը:

Անկասկած, կանանց հիմնադրամների ստեղծումը ուղեկցվում է նաև մի շարք խնդիրներով: Նրանցից ամենամեծը **միջոցների/ֆոնդերի հայթհայթումն** է: Ներկայումս կանանց հիմնադրամները փորձարկում են տարբեր մոտեցումներ գումարներ հայթհայթելու ուղղությամբ: Օրինակ, ինչպես նշեց Դուբրավկա Կովաչևիչը, ներկայումս նրանք դիմում են տարբեր բիզնես կազմակերպությունների և անհատների՝ հիմնադրամի համար տարածք ձեռքբերելու համար, ինչպես նաև իրականացնում են առցանց իրազեկման արշավներ (Kick starter, Indigogo և այլ հարթակների միջոցով), քանի որ այլևս չեն կարող ապավինել միայն դոնորների աջակցությանը:¹⁰

Աֆրիկյան կանանց զարգացման Հիմնադրամի ներկայացուցիչների կարծիքով էլ հիմնական բարդությունները, որոնք իրենք հանդիպել են գործունեության մեջ հետևյալն են.

- անընդհատ ապացուցելը, որ Հիմնադրամը կարող է արդյունավետ գործել,

⁸ Հատված ԿՌԿ-ի կողմից հետազոտության շրջանակներում իրականացված փորձագիտական հարցումից:

⁹ Անն Ռանյանը և Վ. Սպայկ Պիտերսոնը «Նոր հազարամյակում գլոբալ գենդերային խնդիրները» (WestView Press, 2013) գրքում հատկապես առանձնացնում են «գենդերային ոսպնյակների» (gender lenses) օգտագործումը, ինչը ենթադրում է տարբեր բնագավառների խնդիրների ուսումնասիրություններում գենդերային բաղադրիչի ներմուծումը և գենդերի՝ որպես հետազոտական չափորոշիչի (միավորի) օգտագործումը:

¹⁰ Հատված ԿՌԿ-ի կողմից իրականացված փորձագիտական հարցումից

- աշխատանքը դոնորների հետ և նորաստեղծ խմբերին աջակցելու կարևորությունը անընդհատ հիմնավորելը դոնորների շրջանում,
- ֆոնդայթայթման հետ կապված բարդություններ:

Բացի դրանից, հիմնադրամները հաճախ դիտարկվում են որպես մրցակիցներ տեղական հասարակական կազմակերպությունների կողմից, քանի որ հաճախ նրանք մրցակցում են նույն ֆոնդերի համար և նախընտրությունը հիմնականում տրվում է կանանց հիմնադրամներին և ոչ փոքր կազմակերպություններին:

Կանանց և աղջիկներին տրամադրվող նյութական և ոչ նյութական աջակցության վերաբերյալ այլ հետազոտությունները ցույց են տալիս, որ բացի կանանց հիմնադրամներից կանանց աջակցում են նաև գործունեության միանգամայն այլ ուղղվածություն ունեցող կառույցներ: Այդպես, 2010 թվականին Weisblatt & Associates ֆրանսիական խորհրդատվական կազմակերպության կողմից իրականացված հետազոտությունը ընտրանքում ներառում է 145 հիմնադրամներ աշխարհի 19 երկրներից:¹¹ Նշված հետազոտությունը դուրս է բերել մի շարք հետաքրքիր արդյունքներ:¹²

- Եվրոպական երկրներում գործող հիմնադրամների մոտ 3/4-ը (73%) ակտիվ համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ կրթության ոլորտում:
- Եվրոպական հիմնադրամների հիմնական թիրախ խումբ և շահառու հանդիսանում են երեխաները և երիտասարդները (74%):
- Հիմնադրամների մոտ 1/3-ը աջակցել է կանանց և աղջիկների հիմնախնդիրները թիրախավորող ծրագրեր առնվազն 1 դրամաշնորհի միջոցով:
- 2009 թվականի տվյալների համաձայն կանանց և աղջիկների աջակցությանն է ուղղվել եվրոպական դրամաշնորհների ընդամենը 4.8%-ը:¹³
- Հիմնադրամների միայն 1/3-ն է թիրախավորում կոնկրետ կանանց և աղջիկների զարգացումը, դրանց ավելի մեծ մասը գործում է տարբեր ոլորտներում վերջիններիս հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Կանանց հիմնախնդիրների 8 առաջնային ոլորտների շարքում առաջին 3 տեղերը զբեղեցնում են կանանց նկատմամբ բռնությունը (74%), աղքատությունը կանանց և աղջիկների շրջանում (73%) և կրթության հասանելիությունը կանանց և աղջիկների համար (71%): (Տես Պատկեր 1)
- Լեսբի, բիսեքսուալ (երկսեռական) և տրանսգենդեր անձանց հիմնախնդիրները ամենաքիչ ուշադրությանն են արժանացել հիմնադրամների կողմից:
- Բոլոր ծրագրերի գրեթե կեսը՝ 45%-ը, նվիրված է եղել ծառայությունների մատուցմանը:

¹¹ Seema Sh., Lawrence T. McGill, and Karen Weisblatt, *Untapped Potential: European Foundation Funding for Women and Girls*, 2011

¹² Նույն տեղում:

¹³ Այս տվյալները հիմնվում են ավելի քան 42 հիմնադրամների կողմից տրված 9100 դրամաշնորհների վերլուծության վրա (տես նույն տեղում):

- Ի տարբերություն այլ հիմնադրամների՝ կանանց և աղջիկների հիմնախնդիրներին արձագանքող հիմնադրամները զգալիորեն ավելի շատ են հակված եղել ներգրավված լինել գուլգահեռաբար նաև մարդու իրավունքների և սոցիալական արդարության ծրագրերի ֆինանսավորման գործընթացներում:

Աշխարհի ամենահին կանանց հիմնադրամը հանդիսանում է **Mama Cash** հիմնադրամը, որը ստեղծվել է 1983 թվականին՝ Նիդերլանդներում: Կազմակերպության նպատակն է արդյունավետ պաշտպանել և առաջ մղել կանանց և աղջիկների մարդու իրավունքները:¹⁴ Տարբեր դոնորների հետ համագործակցության արդյունքում հավաքագրված գումարների միջոցով հիմնադրամը կարողանում է աջակցել աշխարհի ավելի քան 100 կազմակերպությունների և կանանց, աղջիկների, ինչպես նաև տրանս անձանց խմբերի՝ Աֆղանստանից մինչև Մադագասկար, Հայաստանից մինչև Նիդերլանդներ: Ինչպես իրավացիորեն և օբյեկտիվորեն նշվում է հիմնադրամի պաշտոնական կայքում՝ «Բոլոր այդ կազմակերպություններն ունեն առնվազն մեկ ընդհանրություն. նրանք ոտքի են կանգնում իրենց իրավունքների համար առանց վախի: Նման կազմակերպությունները անկյունաքարային նշանակություն ունեն կանանց, աղջիկների և տրանս անձանց հանդեպ խտրականության և բռնության դրսևորումներին վերջ տալու գործում»:¹⁵ Mama Cash հիմնադրամը օգնում է առանձին խմբերի, կազմակերպությունների, ցանցերի և համագործակցում է այլ կանանց հիմնադրամների հետ: Կառույցի թիրախային խմբում են սեռական և էթնիկ փոքրամասնությունները, դեռահաս աղջիկները, տրանս անձիք, տեղաբնակ (բնիկ), ցածր եկամուտներ ունեցող կանայք, միայնակ մայրերը, հաշմանդամություն ունեցող, միգրանտ, սեռական ծառայություններ մատուցող, գյուղական բնակավայրերում ապրող, ինչպես նաև տնտեսության ֆորմալ և ոչ ֆորմալ հատվածներում աշխատող կանայք:¹⁶

Կանանց հիմնադրամների գործունեությունը ուսումնասիրելիս անհնար է անտեսել դրանցից ակտիվներին: Համաշխարհային կարևոր նշանակության և հատկապես կանանց երիտասարդական շարժումը խթանող կառույցներից է FRIDA հիմնադրամը, որը համագործակցում է աշխարհի տարբեր երկրների կազմակերպությունների և ֆեմինիստական խմբերի հետ սկսած 2009 թվականից: FRIDA հիմնադրամի գործունեության հիմնաքարը կարելի է ասել **բազմազանությունն է**, քանի որ այն «աշխատում է ամբողջ աշխարհում, իսկ FRIDA-ն ձևավորող անհատներն ունեն տարբեր պատմություններ, մասնագիտություններ, խոսում են տարբեր լեզուներով, սակայն նրանց բոլորին միավորում է ֆեմինիստական երիտասարդական շարժումը»¹⁷: Հիմնադրամն առանձնանում է նաև նրանով, որ գործում է այն սկզբունքների հիման վրա, որոնք ստեղծում են FRIDA-ն՝ ճկունություն (Flexibility), ռեսուրսներ (Resources), ներառականություն (Inclusivity), բազմազանություն (Diversity), գործողություն (Action):¹⁸

¹⁴ Seema Sh., Lawrence T. McGill, and Karen Weisblatt, *Untapped Potential: European Foundation Funding for Women and Girls*, 2011

¹⁵ MamaCash, <http://www.mamacash.org/>

¹⁶ MamaCash, <http://www.mamacash.org/>

¹⁷ FRIDA – Young Feminist Fund: <https://youngfeministfund.org/>

¹⁸ FRIDA – Young Feminist Fund: <https://youngfeministfund.org/>

Բացի FRIDA հիմնադրամից միջազգային կարևոր նշանակության հիմնադրամներից է նաև The Match Կանանց միջազգային հիմնադրամը, որը ծագում է 1976 թվականին ստեղծված The MATCH International կանադական կազմակերպությունից: The MATCH International-ը Կանադայի առաջին կազմակերպություններից է, որը կանանց հիմնախնդիրները գնահատել է առաջնային կարևորության և փորձել է դրանց արձագանք տալ: Արդեն 2013 թվականի հոկտեմբերին կազմակերպությունը հիմնել է The Match Կանանց միջազգային հիմնադրամը, որը միջոցներ է տրամադրում կազմակերպություններին, որոնք զբաղվում են **կանանց հզորացմամբ և կանանց իրավունքների պաշտպանությամբ**:¹⁹

Հատկանշական է, որ **կանանց հիմնադրամները նաև գործում են ցանցային սկզբունքով**: Այդպես, հանրահայտ **Պրոսպերա հիմնադրամի**²⁰ գործունեության հիմնական նպատակն է միջոցներ և ռեսուրսներ հավաքագրել կանանց, աղջիկների և տրանս անձանց համար, որոնք կներդրվեն տարբեր ծրագրերում ի նպաստ կանանց զարգացմանը և հնարավորությունների ընդլայնմանը: Ըստ Եռության Պրոսպերան առանձնանում է նրանով, որ, լինելով ինքնուրույն հիմնադրամ, իրենից ներկայացնում է տարբեր հիմնադրամների ցանց և ներառում է գործունեության շատ ավելի լայն շրջանակ, քան մյուս հիմնադրամները: Պրոսպերայի նպատակներից է նաև ավելի զարգացնել կանանց աջակցություն տրամադրող այլ հիմնադրամների միջև համագործակցությունը, զարգացնել վերջիններիս անհրաժեշտ հմտությունները և, ի վերջո, մոբիլիզացնել ռեսուրսներ՝ ավելի շատ կանանց օգնելու և կանանց իրավունքների իրացման հնարավորություններն ընդլայնելու համար:

Այժմ Պրոսպերային անդամակցում են տեղական, տարածաշրջանային և միջազգային 38 կանանց հիմնադրամներ: Դրանք ունեն բազմաթիվ աշխատանքային ուղղություններ՝ արվեստից մինչև բիզնես ծրագրերի ֆինանսավորում, և գործում են աշխարհի տարբեր մասերում՝ Աֆրիկա, Ասիա, Լատինական Ամերիկա, Եվրոպա և այլն: Յուրաքանչյուր տարի Պրոսպերա միջազգային հիմնադրամը միջինում 66.3 մլն դոլարի դրամաշնորհներ է տրամադրում աշխարհի 170 երկրների գրեթե 1800 կանանց հիմնախնդիրների հաղթահարմամբ զբաղվող կազմակերպություններին:²¹

Պրոսպերայի հիմնադրամների Աֆրիկյան ցանցում տեղ են գտել այնպիսի կազմակերպություններ ինչպիսիք են Աֆրիկայի կանանց զարգացման հիմնադրամը²² (Գանա), Կոնգոյի կանանց հիմնադրամը²³ (Կոնգոյի դեմոկրատական հանրապետություն), Միջերկրածովյան կանանց հիմնադրամը²⁴ (Ֆրանսիա), Աֆրիկայի հրատապ գործողությունների հիմնադրամը²⁵ (Urgent Action Fund – Africa, Բենիա), WHEAT Trust հիմնադրամը²⁶ (Women’s Hope

¹⁹ The Match International Women’s Fund: <http://matchinternational.org/>

²⁰ Prospera: International Network of Women’s Funds: <http://www.prospera-inwf.org/#!/-about-prospera/>

²¹ Prospera: International Network of Women’s Funds: <http://www.prospera-inwf.org/#!/-about-prospera/>

²² African Women’s Development Fund: <http://awdf.org/>

²³ Fondation Pour les Femmes Congolaise: <http://www.ffcrdc.org/>

²⁴ Mediterranean Women’s Fund: <http://www.medwomensfund.org/>

²⁵ Urgent Action Fund-Africa: <http://urgentactionfund-africa.or.ke/>

²⁶ Women’s Hope Education and Training Trust (WHEAT Trust) Fund: <http://www.wheattrust.co.za/>

Education and Training Trust, Հարավային Աֆրիկայի Հանրապետություն), Տանզանիայի կանանց հիմնադրամը²⁷ (Տանզանիա):

Պրոսպերային անդամակցող **ասիական երկրների հիմնադրամները** նույնպես տարաբնույթ են: Ինչպես աֆրիկյան, այնպես էլ ասիական հիմնադրամները հիմնվել և գործում են տարբեր երկրներում՝ Հոնկոնգ վարչական շրջան (HER Fund²⁸), Հարավային Կորեա (Կանանց կորեական հիմնադրամ²⁹), Մոնղոլիա (MONES -Մոնղոլացի կանանց հիմնադրամ³⁰), Շրի Լանկա (SAWF – Հարավային Ասիայի կանանց հիմնադրամ³¹), Նեպալ (TEWA հիմնադրամ³²):

Լատինական Ամերիկայի հիմնադրամների ցանցը նույնպես տպավորիչ գործունեություն է ծավալում և ներառում է տարածաշրջանի մի շարք հիմնադրամներ, ինչպիսիք են Բոլիվիայի կանանց հիմնադրամը³³, Բրազիլիայի սոցիալական ներդրումների հիմնադրամը³⁴, Չիլիի Fundo Alquimia հիմնադրամը³⁵, Կենտրոնական Ամերիկայի կանանց հիմնադրամը³⁶ Նիկարագուայում, Արգենտինայի կանանց հիմնադրամը³⁷, որը գործում է երկու հարևան երկրներում ևս՝ Ուրագվայ և Պարագվայ, Կոլումբիայի կանանց հիմնադրամը³⁸, Պերուի բնիկ կանանց միջազգային հիմնադրամը³⁹, Մեքսիկայի Semillas հիմնադրամը⁴⁰, Լատինական Ամերիկայի հրատապ գործողությունների հիմնադրամը Կոլումբիայում⁴¹ և այլն:

Եվրոպական կանանց հիմնադրամների գործունեության ոլորտները տարատեսակ են՝ մարդու իրավունքներ, իրավունակություն, կրթություն, համայնքային զարգացում և համայնքային կյանք, տնտեսական հնարավորություններ, գեղերային հիմնախնդիրներ, առողջապահություն, երիտասարդ կանանց և աղջիկների հիմնախնդիրներ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացում:⁴² (Տես **Պատկեր 1**)⁴³ Եվրոպական կանանց հիմնադրամները համագործակցում են ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան և միջազգային հիմնադրամների և կազմակերպությունների հետ: Եվրոպական հիմնադրամներից կարելի է առանձնացնել Բուլղարիայի կանանց հիմնադրամը⁴⁴, Իսպանիայի կանանց հիմնադրամը⁴⁵, Խորվաթիայի կանանց հիմնադրամը⁴⁶, Գերմանիայի կանանց

²⁷ Women's Fund Tanzania: <http://wft.or.tz/>

²⁸ Her Fund: https://www.herfund.org.hk/index_en.php

²⁹ Korean Foundation for Women: <http://womenfund.or.kr/eng>

³⁰ MONES – Mongolian Women's Fund: <http://mones.org.mn/en/>

³¹ SAWF – South Asian Women's Fund: <http://www.sawf.info/>

³² TEWA: <http://www.tewa.org.np/>

³³ APTHATI-JOPUETI Bolivian Women's Fund: <http://www.prospera-inwf.org/#!/-latin-american-region/>

³⁴ ELAS Fundo de Investimento Social: <http://www.fundosocialelas.org/>

³⁵ Fundo Alquimia: <http://www.prospera-inwf.org/#!/-latin-american-region/>

³⁶ FCAM Fundo Centroamericano de mujeres: <http://fcmujeres.org/>

³⁷ Fundo de mujeres del Sur: <http://mujeresdelsur.org/sitio/>

³⁸ Fondo Lunaria Mujer: <http://www.fondolunaria.org/>

³⁹ International Indigenous Women's Fund: <http://www.fimi-iiwf.org/index-fondo.php>

⁴⁰ Semillas- Sociedad Mexicana por Derechos de la Mujer: <https://semillas.org.mx/en/>

⁴¹ Urgent Action Fund – Latin America & Caribbean: <http://www.urgentactionfund-latinamerica.org/>

⁴² Seema Sh., Lawrence T. McGill, and Karen Weisblatt, *Untapped Potential: European Foundation Funding for Women and Girls*, 2011

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Bulgarian Women's Fund: <https://bgfundforwomen.org/en/>

⁴⁵ CALALA Fundo de Mujeres: <http://www.calala.org/?lang=en>

հիմնադրամը⁴⁷, Բալկանյան հիմնադրամը, որն աշխատում է միևնույն ժամանակ և ԱՄՆ-ում, և Բալկանյան երկրներում (Սերբիա, Մակեդոնիա, Կոսովո, Խորվաթիա և այլն)⁴⁸, Նիդերլանդների WomenWin⁴⁹ հիմնադրամը, Միջերկրածովյան կանանց հիմնադրամը, որն աշխատում է նաև Աֆրիկայում⁵⁰, Սերբիայի՝ «Վերակառուցում» կանանց հիմնադրամը⁵¹, Սլովակյան և չեխական հիմնադրամը, որն ունի երկու տարբեր գրասենյակներ Սլովակիայում և Չեխայում⁵², Վրաստանում կանանց հիմնադրամը⁵³, Ուկրաինայի կանանց հիմնադրամը⁵⁴:

Եվրոպական և ամերիկյան հիմնադրամների ծախսերի և ռեսուրսների բաշխման համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ում զգալիորեն շատ են այն հիմնադրամները, որոնք 1-9% իրենց բյուջեից ուղղում են կանանց հիմնախնդիրների լուծմանը: Չնայած ավելի շատ եվրոպական հիմնադրամներն են, որ կանանց տրամադրում են դրամաշնորհներ բյուջեի 25-49% չափով (14% եվրոպական և 2% ամերիկյան):⁵⁵

Ներկայում ԱՄՆ-ում հիմնված և գործող ամենահայտնի հիմնադրամներից է Կանանց համաշխարհային հիմնադրամը (Global Fund for Women), որն ինքն իրեն և իր գործունեությունը դիտարկում է որպես «**բարձրախոս բոլոր այն կանանց համար, ովքեր պայքարում են հավասարության համար**»:⁵⁶ Կանանց համաշխարհային հիմնադրամը նույնպես հանդիսանում է հարաբերականորեն վաղ շրջանում հիմնված կառույց: Այն հիմնվել է 1987 թվականին Պալո Ալտոյում (Կալիֆորնիա) 4 խիզախ կանանց՝ Անն Ֆիրթ Մյուրրեյի, Ֆրենսիս Քիսլինգի, Լաուրա Լեդերերի և Նիտա Բարրոուի կողմից: Նրանք փաստում էին, որ կանանց մարդու իրավունքները հիմք են հանդիսանում **սոցիալական, տնտեսական, ինչպես նաև քաղաքական ցանկացած փոփոխության համար**: Մտահոգված լինելով կանանց իրավունքների հարցերը ֆինանսավորելու նկատմամբ տարածվող անտարբերությամբ նրանք հիմնեցին կազմակերպությունը և սկսեցին

⁴⁶ Ecumenical Women's Fund: <http://www.eiz.hr/?lang=en>

⁴⁷ Filia- die frauenstiftung: <http://www.filia-frauenstiftung.de/en/home/home.html>

⁴⁸ Heart and Hand Women's Fund: http://kerrylobel.typepad.com/heart_and_hand_fund/

⁴⁹ WomenWin: <https://womenwin.org/>

⁵⁰ Mediterranean Women's Fund: <http://www.medwomensfund.org/en/>

⁵¹ Reconstruction Women's Fund: <http://www.rwfund.org/eng/>


⁵² Slovak-Czech Women's Fund: <http://www.womensfund.sk/blade/s/3/index.html>

⁵³ Women's Fund in Georgia: <https://www.womenfundgeorgia.org/ka/Main>

⁵⁴ Ukrainian Women's Fund: <http://www.uwf.org.ua/en/>

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Global Fund for Women, <https://www.globalfundforwomen.org/>



աջակցել անմիջական ծառայություններ մատուցող և կանանց կողմից ղեկավարվող և առաջնորդվող կազմակերպություններին և շարժումներին:⁵⁷ Կանանց համաշխարհային հիմնադրամը մինչ օրս համագործակցում է նաև հասաստանյան հասարակական կազմակերպությունների և ֆեմինիստական նախաձեռնությունների հետ, ինչպես նաև աշխատում է առանձին անհատների հետ՝ որպես խորհրդատուներ: Հիմնադրամը աշխատում է նաև կազմակերպությունների և կանանց հզորացման ուղղությամբ, համախմբում է տարբեր պատմություններ, հիմնախնդիրներ և նպատակներ ունեցող կանանց՝ կազմակերպելով տարատեսակ միջոցառումներ, ուղղակիորեն ֆինանսավորում է առանձին կազմակերպությունների և նախաձեռնությունների ծրագրերը, ինչպես նաև համագործակցում է կանանց տեղական հիմնադրամների հետ: Հիմնադրամի համար առաջնային են համարվում **բռնությունը հաղթահարելու, կանանց տնտեսական և քաղաքական հզորացման, ինչպես նաև սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի** թեմատիկ ոլորտները:⁵⁸

Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում կանանց հիմնադրամները տարբեր են ըստ նահանգների և դրանցում կանանց հիմնախնդիրների: Այդպես, Վիսկոնսին նահանգի Մեդիսոն քաղաքի կանանց հիմնադրամը նպատակ ունի խթանել կանանց բարեգործության մշակույթը, հզորացնել կանանց և աղքիկներին, ինչպես նաև ոգեշնչել կանանց՝ օգնելու այլ կանանց:⁵⁹ Կոնեկտիկուտ նահանգի Արևմտյան Հարթֆորդի կանանց և աղքիկների Ավրորա հիմնադրամի նպատակն

⁵⁷ Նույն տեղում:
⁵⁸ Նույն տեղում:
⁵⁹ Madison Community Foundation A Fund for Women: <https://www.madisongives.org/partners/a-fund-for-women>

Ե համայնքի և նահանգի տարածքում ապահովել ավելի բարենպաստ պայմաններ կանանց համար:⁶⁰ Նույն նպատակն է հետապնդում նաև Պենսիլվանիա նահանգի Չեստեր շրջանի կանանց և աղջիկների հիմնադրամը:⁶¹ Վաշինգտոն նահանգի Սիթլ քաղաքում գործող Չենել հիմնադրամի (Channel Foundation) նպատակն է խթանել կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանությունն ամբողջ աշխարհում դրամաշնորհների, ջատագովության և կանանց տարբեր ցանցերի հետ համագործակցության միջոցով:⁶² ԱՄՆ մի շարք այլ հիմնադրամներ, ինչպիսիք են Չիկագոյի⁶³, Դալասի⁶⁴, Այովայի⁶⁵, Կենտուկիի⁶⁶, Նյու Յորքի⁶⁷ հիմնադրամները, աշխատում են տարբեր թեմատիկ ուղղություններով. կանանց և աղջիկների տարատեսակ հնարավորությունների ընդլայնում, սոցիալական փոփոխություններ և կանանց արվեստ, տնտեսական ապահովություն, արդարություն և այլն:⁶⁸

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Աֆրիկայի երկրների կանանց հիմնադրամները և հիմնադրամային ցանցերը: Աֆրիկացի կանանց զարգացման հիմնադրամը 2001 թվականից ի վեր հիմնվել է “աֆրիկացի կանանց կողմից”, աշխատում է “աֆրիկացի կանանց հետ” և “աֆրիկացի կանանց համար”:⁶⁹ Ամեն տարի ԱԿԶԳ-ը (AWDF) դրամաշնորհներ է տալիս ավելի քան 100 խմբերի, նախաձեռնությունների, կազմակերպությունների և կառույցների, որոնք կիսում են հիմնադրամի գաղափարները և նպատակները Աֆրիկայի կանանց աջակցելու վերաբերյալ: Վերջին 15 տարիների ընթացքում ԱԿԶԳ-ը 26 մլն. դոլարի աջակցություն է տրամադրել աֆրիկյան 42 երկրների կանանց կողմից ղեկավարվող 1235 կազմակերպությունների:⁷⁰ Աֆրիկացի կանանց զարգացման հիմնադրամը աշխատում է այնպիսի թեմատիկ ոլորտներում, ինչպիսիք են **մարմնի և առողջության իրավունքը, կանանց տնտեսական ապահովությունը և արդարությունը, առաջնորդությունը, տարբեր ոլորտներում մասնակցությունը և խաղաղությունը:**

Մեկ այլ աֆրիկյան կազմակերպություն՝ Նյու Ֆիլդ (New Field) հիմնադրամը, իր գործունեությունը սկսել է 2004 թվականից և նպատակ ունի աջակցելու գյուղական բնակավայրերում ապրող կանանց և աղջիկներին՝ հաղթահարելու իրենց համայնքներում **աղքատությունը, բռնությունը և անարդարությունը:** Որպես իր նպատակների իրականացման մեխանիզմներ հիմնադրամն ընտրել է **տեղական նախաձեռնությունների համախմբումը, շարժումների ստեղծումը և համակարգային փոփոխությունները:** Նյու Ֆիլդ հիմնադրամն աշխատում է Աֆրիկայի տարբեր երկրներում՝ Սենեգալ, Գամբիա, Գվինեա Բիսաու, Գվինեա, Լիբերիա, Սիերա Լեոնե, Մալի և այլն:⁷¹

⁶⁰ Aurora Foundation for Women and Girls in Greater Hartford: <https://aurorafoundation.org/>

⁶¹ Chester County Fund for Women and Girls: <http://ccwomenandgirls.org/>

⁶² Channel Foundation: <http://www.channelfoundation.org/>

⁶³ Chicago Foundation for Women: <https://www.cfw.org/>

⁶⁴ Dallas Women's Foundation: <https://www.dallaswomensfdn.org/>

⁶⁵ Iowa Women's Foundation: <http://iawf.org/>

⁶⁶ Kentucky Foundation for Women: <http://www.kfw.org/>

⁶⁷ The New York Women's Foundation, Radical Generosity: <http://www.nywf.org/>

⁶⁸ Women's Funding network: <http://www.womensfundingnetwork.org/>

⁶⁹ African Women's Development Fund, http://awdf.org/our-work/#work_grid

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ New Field Foundation, <http://www.newfieldfound.org/index.html>

Կանանց ուղղված աջակցության կազմակերպման տեսանկյունից ևս մեկ կարևոր կառույց է հանդիսանում Հավայիի կանանց հիմնադրամը, որը դրամաշնորհային կառույց է՝ նվիրված բացարձակորեն Հավայիում կանանց և աղջիկներին աջակցության տրամադրմանը:⁷² Հավայիի կանանց հիմնադրամը դրամաշնորհներ է տրամադրում այնպիսի ծրագրերի համար, որոնք նպաստում են կանանց և աղջիկների՝ սեփական ներուժի գիտակցմանը և կանանց տնտեսական հզորացմանը, շեշտադրում են կանանց ուժեղ կողմերը և առաջնորդական կարողությունները: Կազմակերպությունը աջակցում է նաև այն կազմակերպություններին և նախաձեռնություններին, որոնք փորձում են հաղթահարել այն խոչընդոտները, որոնք առկա են կանանց հաջողությունների ճանապարհին՝ ներառյալ բռնությունը, դեռահասության շրջանում հղիությունը, ցածր ինքնագնահատականը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը, ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործումը, սեռական ծառայությունների մատուցումը, ազատագրվումը, միգրանտ կարգավիճակը, հոմոֆոբիան, երեխայի անբավարար ինամբը, անհավասարությունը սպորտում, վերարտադրողական իրավունքները, աղքատությունը, հաշմանդամության տարբեր դրսևորումները և ռասիզմը:⁷³

Կանանց հիմնադրամներ արդեն գործում են նաև Բալկանյան երկրներում: Բոսնիայի և Հերցեգովինայի կանանց հզորացման հիմնադրամը (Foundation of Women's Empowerment Bosnia & Hercegovina) հիմնվել է բոլորովին վերջերս՝ 2014 թվականին: Հիմնադրամի նպատակներն ու գործունեության ուղղություններն են⁷⁴

- Կանանց ոչ ֆորմալ խմբերին, նախաձեռնություններին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին տրամադրվող փոքր գրանտային ծրագրերը, որոնք ուղղված են կանանց հզորացմանը և կանանց մարդու իրավունքների իրացման հնարավորությունների բարելավմանը,
- Փորձագիտական խորհրդատվությունները կարողությունների զարգացման, գիտելիքների և հմտությունների կատարելագործման նպատակով,
- Դրամաշնորհային ծրագրեր նախապատրաստելու և միջոցների հավաքագրման ընթացքում աջակցությունը,
- Կանանց ցանցերին աջակցությունը և կանանց տեղական կազմակերպությունների և նմանատիպ այլ նախաձեռնությունների միջև կապերի և հնարավորությունների ընդլայնումը,
- Ակտիվիստ և հետազոտող կանանց աջակցությունը հետազոտությունների, հրապարակումների, գիտաժողովների, քննարկումների և կրթական ծրագրերի կազմակերպման միջոցով,
- Կանանց վիճակի բարելավմանը և նրանց հզորացմանը նվիրված այլ կառույցների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցությունը,
- Դոկտրինների, համապատասխան պետական կառույցների և նմանատիպ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությունը և գործընկերությունը,

⁷² Women's Fund of Hawaii: <http://womensfundhawaii.org/>

⁷³ Women's Fund of Hawaii: <http://womensfundhawaii.org/>:

⁷⁴ Foundation of Women's Empowerment Bosnia & Hercegovina: <http://www.fwebih.org/en/>

- Կամավոր ներդրումների և նվիրատվությունների միջոցով դրամաշնորհների տրամադրումը, ինչպես նաև ներքին և արտաքին իրավական և մասնավոր կառույցների աջակցության բաշխումը,
- Կանանց հզորացման նպատակով տեղական և արտասահմանյան դոնորների կողմից տրամադրվող ռեսուրսների բաշխման ընթացքում վերջիններիս աջակցության տրամադրումը:

Վերջին տարիներին հետսովետական և այժմյան ԵՄ Արևելյան գործընկերության անդամ երկրներից **Ուկրաինայում և Վրաստանում** նույնպես հիմնվել են Կանանց հիմնադրամներ, որոնք տեղական մակարդակում կյուբական և կարողությունների զարգացման աջակցություն են տրամադրում տեղական կազմակերպություններին և նախաձեռնություններին:

Ուկրաինայում կանանց հիմնադրամը միջազգային բարեգործական հիմնադրամ է, որը ստեղծվել է 2000 թվականին: Հիմնադրամն աշխատում է ոչ միայն Ուկրաինայի տարածքում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, այլ ֆինանսական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն է տրամադրում նաև Մոլդովայում և Բելառուսում:

Ուկրաինայի կանանց հիմնադրամը նպատակ ունի⁷⁵

- Նպաստել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների առաջընթացին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԸՀԿ) հզորացման միջոցով,
- Ավելի շատ ռեսուրսներ ներգրավել քաղաքացիական հասարակությանը աջակցելու համար՝ զարգացնելով բարեգործության մշակույթը Ուկրաինայում,
- Նպաստել համախմբված կանանց շարժմանը ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Մոլդովայում և Բելառուսում,
- Ընդլայնել տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացներում հանրային մասնակցության հնարավորությունները,
- Հանրային ուշադրության կենտրոն բերել բազմազանության և գենդերային հիմնախնդիրները:

Վրաստանում կանանց հիմնադրամը տեղական միջոցներ հավաքագրող և դրամաշնորհներ տրամադրող կազմակերպություն է, որն աջակցում է կանանց խմբերին և նախաձեռնություններին, որոնք միտված են սոցիալական փոփոխությունների իրականացմանը: Հիմնադրամի նպատակն է հզորացնել կանանց, որպեսզի նրանք կարողանան ավելի լավ պաշտպանել իրենց իրավունքները, լիարժեք իրացնել իրենց ներուժը և մասնակցել քաղաքացիական գործընթացներին: Այդ նպատակով հիմնադրամը տրամադրում է ֆինանսական և տեխնիկական աջակցություն, կարողությունների զարգացում և փորձում է զարգացնել ֆեմինիստական բարեգործությունը: Ստեղծման պահից մինչ այժմ կազմակերպությունը շնորհել է 571 դրամաշնորհ:⁷⁶

⁷⁵ International Charitable Foundation, Ukrainian Women's Fund: <http://www.uwf.org.ua/en/>

⁷⁶ Women's Fund in Georgia: <https://www.womenfundgeorgia.org/en/Main>

Վրաստանում կանանց հիմնադրամը ի սկզբանե հիմնվել է որպես Կրթական համագործակցության և զարգացման կենտրոն, որի թիրախում եղել է տեղական մակարդակում բարեգործության խթանումը՝ ուղղված կանանց հիմնախնդիրների հաղթահարմանը: Միայն 2005 թվականի մայիսի 24-ին կազմակերպությունը գրանցվել է որպես Վրաստանում կանանց հիմնադրամ, որի գործունեության հիմնական ուղղություններն են **կանանց իրավունքների պաշտպանությունը, կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնումը, կոնֆլիկտային/ հակամարտության շրջաններում կանանց աջակցությունը, իրավական նախաձեռնությունների և փոփոխությունների խթանումը, գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ հանրության գիտակցության բարձրացումը, համայնքներում կանանց հիմնախնդիրների նկատմամբ զգայունության բարձրացումը, ինչպես նաև կանանց շարժման ստեղծման աջակցությունը:**⁷⁷

Հայաստանում տեղական կանանց հիմնադրամների գոյությունն ըստ էության սահմանափակվում է Օքսեջեն հիմնադրամի գործունեությամբ, որը հիմնվել է Հայաստանում Օքսֆամ կազմակերպության ներկայացուցչության կողմից՝ որպես իրավահաջորդ կազմակերպություն տեղական մակարդակում: Հիմնադրամի նպատակն է կանանց և երիտասարդության իրավազորումը վերջիններիս տնտեսական և քաղաքական առաջընթացին և ապահովությանը նպաստելու միջոցով:⁷⁸ Բացի այդ հատկանշական է Մեծ Բրիտանիայում Կանանց սոլիդարության հիմնադրամի (Women's Solidarity Fund) գոյությունը, որը հիմնվել է Հասարակությունն առանց բռնության ՀԿ աջակցությամբ և որի նպատակն է ստեղծել բաց, անվտանգ և չեզոք տարածք Հարավային Կովկասի կազմակերպությունների համար գենդերային հիմքով բռնության և անհավասարության դեմ պայքարող կանանց խմբերի համար:⁷⁹

Բացի նշվածներից՝ Հայաստանում գործում են նաև այլ հիմնադրամներ, որոնց գործունեությունը անմիջականորեն ուղղված չէ կանանց և գենդերային հիմնախնդիրների լուծմանը, սակայն վերջիններս մի շարք այլ կարևոր հիմնախնդիրների հետ մեկտեղ առաջնային են համարում կանանց ուղղված ծրագրերի և ուսումնասիրությունների իրականացումը: Որպես ոլորտում ակտիվ հիմնադրամ հանդես է գալիս Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան-ը, որը բացի անհատական հետազոտական ծրագրերից նաև աջակցում է տեղական հասարակական կազմակերպություններին կանանց հիմնախնդիրների բարձրաձայնման և քաղաքականության փոփոխությանն ուղղված առաջարկություններ իրականացնելու գործում:⁸⁰ Գենդերային ժողովրդավարության հասնելու նպատակ ունի նաև Հարավային Կովկասում Հայնրիխ Բյուլ հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակը, որը գտնվում է Թբիլիսիում (Վրաստան) և Հայաստանում ֆինանսավորում է կանանց ուղղված

⁷⁷ Insight on conflict: <https://www.insightonconflict.org/conflicts/georgia/peacebuilding-organisations/womens-fund-georgia/>

⁷⁸ OxYGen Foundation, Armenia: <http://oxygen.org.am/index.php/hy/>

⁷⁹ Women's Solidarity Fund: <http://www.swv.am/index.php/en/what-we-do/most-recent/2-uncategorised/1178-women-s-solidarity-fund>

⁸⁰ Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, պաշտոնական կայք, <http://www.osf.am/?lang=am>

մի շարք ծրագրեր և հետազոտություններ, ինչպես նաև իրականացնում է “Կանաչ ակադեմիա”-նեղ տեղական ներկայացուցչության միջոցով:⁸¹

⁸¹ Հարավային Կովկասում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակ, <http://ge.boell.org/en/person/olya-azatyan>

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՆԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ

Հայաստանում կանանց և գենդերային հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունները և դրանց գործունեության ոլորտները տարբեր են և ներառում են մի շարք ուղղություններ: Տարբեր են նաև ոլորտում ակտիվ անհատների, հետազոտողների և նախաձեռնությունների գործունեության ուղղությունները, որոնք ներառում են ֆեմինիստական և ոչ ֆեմինիստական գործունեության լայն շրջանակ: Հետաքրքիր է, որ անգամ գործունեության սկզբունքների և մոտեցումների հաճախ հանդիպող հակասականության դեպքում կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների միջև ընդհանուր առմամբ առկա է համագործակցություն: Դրա մասին են վկայում ինչպես տարբեր ծրագրերի շրջանակներում փոխադարձ աջակցությունը, այնպես էլ կոալիցիաների ձևավորումը, որի վառ օրինակն է համարվում Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի գործունեությունը:⁸² Հատկանշական է մի հանգամանք ևս. Հայաստանում կանանց կազմակերպությունների և նախաձեռնությունների/խմբերի մի մասն աշխատում և ծրագրեր է իրականացնում (հիմնականում խաղաղաշինական բնույթի) նաև Լեռնային Ղարաբաղում:⁸³

Հետազոտության ընթացքում ուսումնասիրության են ենթարկվել կանանց և գենդերային հիմնախնդիրների նկատմամբ արձագանքի (կանխարգելում և հաղթահարում) ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների, նախաձեռնությունների, խմբերի և ոլորտում ակտիվ անհատների (ակտիվիստներ, հետազոտողներ և այլն) գործունեությունը, աշխատանքում և կյանքում ունեցած հաջողություններն ու ձեռքբերումները, խոչընդոտները, որոնց վերջիններս բախվել/ուժ են գենդերային հավասարության հասնելու տեսանկյունից, ինչպես նաև այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք հարցվողների կարծիքով անհրաժեշտ է ձեռք բերել և/կամ կատարելագործել:

Եթե խոսենք նախաձեռնությունների մասին, ապա նախ և առաջ պետք է նշել, որ դրանց գործունեության բնույթը բավական բազմազան է: Ըստ էության առաջին խմբում այն նախաձեռնություններն են, որոնք չունեն պաշտոնական գրանցում (ի տարբերություն ՀԿ-ների): Դրանք մարդկանց խմբեր են, որոնք իրենց համարում են մարդու, կանանց իրավունքների ջատագույներ, անհատներ, որոնք համախմբվել են մեկ նպատակի շուրջ և մի շարք հիմնախնդիրների (կանանց նկատմամբ բռնություն, կանանց ներգրավվումը խաղաղաշինական գործընթացներում, գենդերային հավասարություն և այլն) լուծումը միահամուռ ուժերով դիտարկում են որպես լավագույն տարբերակ հատկապես

⁸² Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, <http://coalitionagainstviolence.org/en/home/>

⁸³ Օրինակ՝ Կանանց ռեսուրսային կենտրոն, Դեմոկրատիա այսօր ՀԿ-ները:

համերաշխության (սոլիդարության) տեսանկյունից: Այս դեպքում նախաձեռնությունները ստեղծվում են որևէ կազմակերպությանը (հիմնականում հասարակական կազմակերպություններին) կից կամ վերջիններիս կողմից ֆինանսավորվող նախաձեռնությունների, աշխատանքային խմբերի ֆինանսավորման արդյունքում:⁸⁴ **Ոչ ֆորմալ նախաձեռնությունների** մի մասն իր խոսքով կցանականար ունենալ գրանցում և աշխատել ավելի մեծ կամ առհասարակ որևէ ֆինանսավորման միջոցով: Սակայն այս խմբում կան նաև այնպիսի նախաձեռնություններ, որոնք գտնում են, որ պաշտոնական գրանցումը և ֆորմալ կարգավիճակի առկայությունը նվազեցնում է իրենց գործունեության արժեքը և, ի վերջո, ելթադրում է տնտեսական շահի առկայություն, ինչն ի սկզբանե դեմ է «նախաձեռնության» ներքո հավաքված մարդկանց արժեքներին և սկզբունքներին, ինչպես նաև խորացնում է կապիտալիստական և հայրիշխանական արժեհամակարգի կողմից ճնշումը:

Նախաձեռնությունների երկրորդ խումբը, որն առանձնացվել է հետազոտության ընթացքում, գրանցված, հաճախ հասարակական կազմակերպության կարգավիճակ ունեցող, սակայն իրենց նախաձեռնությունն անվանող և «նախաձեռնություն» եզրն ավելի նախընտրող միավորումներն են⁸⁵: Այս կազմակերպություն/նախաձեռնություններն ի տարբերություն նախորդ խմբի նախաձեռնությունների գտնում են, որ ավելի լայն հնարավորություններ ունեն ֆինանսական ռեսուրսների հասանելիության տեսանկյունից, քանի որ, ունենալով պաշտոնական գրանցման փաստաթղթեր, ավելի հեշտորեն են դիմում տարատեսակ ֆոնդերի ֆինանսավորմանը: Առհասարակ նախաձեռնություններն իրենց ավելի ազատ են զգում գործունեության ձևերի տեսանկյունից, քանի որ ի տարբերություն կազմակերպությունների ստիպված չեն գրասենյակային աշխատանք իրականացնել որոշակի ֆորմալ գրաֆիկով:

Ըստ էության նախաձեռնություններն իրարից առանձնանում են նաև զուտ գաղափարական տեսանկյունից, քանի որ կան այնպիսիք, որ աշխատում են միայն կանանց հետ, մյուսները կանանց հիմնախնդիրների լուծման գործընթացին փորձում են ներգրավել նաև տղամարդկանց, ովքեր իրենց համարում են գենդերային հավասարության ջատագովներ:

Հետազոտության ընթացքում դուրս բերվեց հետաքրքիր և ոլորտի ընդհանուր զարգացումների առումով կարևոր հանգամանք. գենդերային հավասարությունը որպես այդպիսին որոշ նախաձեռնությունների դեպքում չի հանդիսանում նպատակ, որին պետք է հասնել: Ըստ նրանց գենդերային հավասարությունն այն չէ, ինչին պետք է հասնել: *«Մեր մոտ մի քանի բաներ կան, որ պիտի առանձին նշեն, մենք մի քիչ ուրիշ քաղաքական գիծ ունենք, օրինակ՝ իմ դիրքերի մասին ես*

⁸⁴ Օրինակ՝ Ոսկեպարի և Բերդավանի երիտասարդական նախաձեռնությունները Տավուշի մարզում, որոնք անդրադառնում են նաև երիտասարդ աղջիկների խնդիրների հաղթահարմանը (Դեմոկրատիան այսօր ՀՀ-ի հետ համատեղ), կամ Երևանի, Գյումրու, Վանաձորի կանանց նախաձեռնությունները, որոնք ի սկզբանե հանդես են եկել որպես Կանանց ռեսուրսային կենտրոն ՀՀ-ի ծրագրի մի մասը: Նման ծրագրերի նպատակն է (ավելի) ակտիվացնել առանձին համայնքներում կանանց և երիտասարդներին՝ հիմնվելով ինքնորոշման սկզբունքի վրա, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աջակցելով վերջիններին:

⁸⁵ Օրինակ՝ Women in Black/ Սևագետս կանայք միջազգային շարժումը:

չէի ասի գենդերային հավասարություն: Ավելի շատ ենթադրում աս որոշակի էր պատրիարխալ նորմերի դեմ, ոչ թե գենդերային հավասարության կողմ»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Որոշ նախաձեռնությունների ներկայացուցիչներ նույնիսկ հարցականի տակ են դնում գենդերային հավասարության դիկտուրը և հաճախ չեն էլ ցանկանում նույնականացվել գենդերային հավասարության համար պայքարի հետ:

«...ես հասել եմ մի փուլի, որ մտածում եմ, որ գենդերային հավասարությունը բացարձակապես էն չի, ինչ որ ես եմ ուզում ու խնդրականացնում եմ գենդերային հավասարության դիկտուրը, որովհետև իմ կարծիքով ինքը շատ վտանգավոր դիկտուրս աս և շատ հաճախ ծառայում աս նույն հայրիշխանական ինստիտուտներին, պատերազմի դիկտուրսին (պատերազմին աս ծառայում) և մի շարք այլ նպատակների համար յուրացվում ու կոոպտացվում աս գենդերային հավասարություն հասկացությունը, այդ իսկ պատճառով ես զգում եմ, որ այլևս չեմ ուզում ասոցացվեմ գենդերային հավասարության պայքարի հետ, հակառակը՝ ուզում եմ էն մարդիկ, ովքեր մտածում են, որ դա աս վերջնակետը, իրանք իրանց հարց տան՝ արդյո՞ք դա կարևոր աս, թե ոչ»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Հետաքրքրական է, որ ի տարբերություն նախաձեռնությունների, կազմակերպությունների դեպքում նման արձագանք ինչել է միայն մեկ ներկայացուցիչ կողմից, ինչից կարելի է ընդամենը ենթադրություն անել, որ Հայաստանում կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների մեծ մասը դեռևս գործունեություն է ծավալում **գենդերային մեյնսթրիմինգի** սահմաններում, ընդունում է գենդերային հավասարությունը որպես վերջնանպատակ և կարևորում է գենդերային կոմպոնենտի անհրաժեշտությունը կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում: Հետազոտողները նույնպես գենդերային հավասարության կողմնակիցներ էին և իրենց աշխատանքների նպատակը դիտարկում էին հենց գենդերային հավասարության հաստատումը Հայաստանում:

Եթե խոսենք կամակերպությունների մասին, ապա անհրաժեշտ է առանձնացնել նաև դրանց **այն տեսակները**, որոնք դուրս են բերվել հետազոտության ընթացքում: Նախ և առաջ, Հայաստանում գործունեություն ծավալող կանանց և գենդերային հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունները առանձնանում են ըստ գործունեության տևողության. կան կամակերպություններ, որոնք ունեն 1-2, մինչև 5, 5-ից ավելի, և մինչև 20 և ավելի տարիների աշխատանքային փորձ կանանց հիմնախնդիրների բարձրաձայնման և լուծման, ինչպես նաև գենդերային հիմնախնդիրների ուսումնասիրման բնագավառում:

Բացի այդ կամակերպությունները առանձնանանում են նաև իրենց գործունեության բնույթով՝ **թիրախային խմբերով և աշխատանքային ուղղություններով**: Ընդհանուր առմամբ նշված կամակերպությունները աշխատում են բոլոր կանանց համար (անկախ տարիքից, կարողություններից, հնարավորություններից և այլն), սակայն իրականացվող ծրագրերի առումով կան

ակնհայտ տարբերություններ: Այդպես, կարելի է առանձնանցնել **կազմակերպությունների աշխատանքային հետևյալ ուղղությունները.**

- Բռնություն՝ ընտանեկան բռնություն, գենդերային հիմքով բռնություն, սեռական բռնություն,
- Գենդերային հավասարություն և գենդերային արդարություն,
- Խաղաղաշինական գործընթացներ,
- Երիտասարդ կանանց և/կամ տղամարդկանց ներգրավում,
- Դեռահասների զարգացում և նրանց հետ աշխատանք,
- Սեռական և վերարտադրողական առողջություն,
- LFS և քուիր կանանց հզորացում և իրավունքների պաշտպանություն,
- Հաշմանդամություն ունեցող երիտասարդ կանանց հիմնախնդիրներ,
- Կրթություն և հատկապես գենդերային կրթություն,
- Մարդու իրավունքներ, մասնավորապես կանանց իրավունքներ,
- Կանանց հնարավորությունների ընդլայնման և գենդերային հավասարության հասնելու քաղաքականությունների մշակում,
- Կանանց և գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ:

Վերադառնալով նախաձեռնություններին պետք է ասել, որ Հայաստանում դրանք նույնպես ունեն տարբեր ոլորտային ուղղություններ՝ արվեստից մինչև խաղաղաշինություն, ատելության խոսքի դեմ պայքարից մինչև տարբեր գաղափարախոսություններ կրող ֆեմինիստական խմբեր: Նախաձեռնությունները իրենց գործունեության թիրախ են դիտարկում կանանց, երիտասարդ աղջիկներին, բոլոր այն մարդկանց, ովքեր որևէ կերպ առնչվում են կանանց և գենդերային հիմնախնդիրներին կամ մտահոգվում են դրանցով (ներառյալ տղամարդկանց), քաղաքական գործիչներին, ովքեր ներգրավված են որոշումների կայացման գործընթացներում, ֆեմինիստ կանանց և ընդհանրապես ֆեմինիստներին, արվեստագետ կանանց, քուիր, լեսբուհի և երկսեռական կանանց, ռազմական կոնֆլիկտների արդյունքում տուժած կամ երեխա(ներ) կորցրած կանանց և այլն: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ որոշ նախաձեռնությունների դեպքում, հատկապես նրանց, որոնք իրենց թիրախում ունեն բոլորին՝ առանց որևէ բացառության, և ունեն քաղաքական որոշումների վրա ազդելու նպատակներ, նախաձեռնությունների անդամների և մասնակիցների պաշտոնական գրանցումները ինչ-որ տեղ համարում են անհիմն: *«Շատ տարբեր... Մենք, հիմնականում էդ application form-երից փորձել ենք խուսափել: Իմ անունից խոսամ ես վախենում եմ իմ գործունեությունը սարքեմ application, երբ որ դու պիտի target group սահմանես և այլն...Էն ինչ որ ես անում*

եմ՝ բաց ա՝ ում հետաքրքրեց, ինքը կկպնի: Ես չեմ պատրաստվում ինչ-որ գենդերային, տարիքային, դասակարգային և այլ չափանիշներով կամ մասնագիտությամբ բաժանել, բայց նաև ինքը ուղղված ա որոշակի քաղաքական ընկերական համայնքի՝ ունենալ ինչ-որ մի տեղ, որտեղ pub-երից (սպառողական ժամանցի վայրերից) դուրս կարող են միասին լինել: Օրինակ, դու գիտես, որ event-ը քաղաքական ինչ-որ իրազեկման նպատակ չունի. ինքը իրավիճակ ա, որում դու ժամանց ես անցկացնում ու քեզ հետաքրքիր ա ու որը կարա վերածվի քաղաքականության գործողության և այլն: Ես շատ եմ կարևորում»: (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

«Ինձ թվում ա շատ տարբեր թիրախներ կան, բայց իմ համար առաջնային թիրախը հենց ֆեմինիստներն են՝ մարդիկ, ովքեր իրանց փորձառության շնորհիվ բավականաին բաների մասին են մտածել, բաների միջով են անցել, բայց իրանց փորձառությունը տեսականացնելու, գրքերի հետ աշխատելու հնարավորություն չեն ունեցել: Տարբեր կարող են լինել շահառուները, բայց իմ համար ամենաառաջնային թիրախը հենց էն մարդիկ են, ովքեր ինչ-որ մի ձևով իրանց ասոցացնում են ֆեմինիստական, քուիր, LGBS, գենդերային էդ պայքարների ու շարժումների հետ»: (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՆԱԽԱՃԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՆՁՆՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախաձեռնությունների կողմից իրենց գործունեության շրջանակների նկարագրությունը ևս բազմաբնույթ է՝ քաղաքականության վրա ազդեցություն, անմիջական ծառայությունների մատուցում, հանդիպումների, քննարկումների, վերապատրաստումների կազմակերպում, անհրաժեշտության դեպքում ապաստարանների տրամադրում (կազմակերպությունների հետ համագործակցելու միջոցով և/կամ սեփական ուժերով) և այլն:

Որպես **նախաձեռնության ստեղծման շարժառիթ** հանդես են եկել մի շարք հանգամանքներ: Այդպես, կան նախաձեռնություններ, որոնք ստեղծվել են որևէ ծրագրի ֆինանսավորման շրջանակներում դոնոր կողմի նախաձեռնությամբ: Կան նաև այնպիսիք, որոնք որևէ միջազգային նախաձեռնության կամ շարժման ներկայացուցիչներն են Հայաստանում: Որոշ խմբեր նաև ստեղծվել են իրենց սեփական նախաձեռնությամբ և երկար ժամանակ աշխատելով կամավորության հիման վրա կարողացել են ձեռք բերել սիմվոլիկ ֆինանսավորում: Նորաստեղծ նախաձեռնությունների շրջանում կան նաև այնպիսիք, որոնց հիմնադիր(ներ)ը, երկար ժամանակ աշխատելով հասարակական կազմակերպություններում, որոշակի արժեքների և դիրքորոշումների վերափոխադրման արդյունքում ավելի նպատակահարմար են գտնում նախաձեռնությունների շրջանակներում աշխատանքը: Թե կազմակերպությունների և թե նախաձեռնությունների անդամների խոսքում կա մեկ ընդհանրություն. դրանք բոլորը ստեղծվել են կանանց իրավիճակը բարելավելու ակնհայտ կարիքից դրդված:

Հայաստանյան **նախաձեռնությունները հիմնականում իրենց և իրենց գործունեությունը համարում են ֆեմինիստական՝** մի շարք հանգամանքներից ելնելով: Նախ և առաջ, նշված խմբերը գործում են ֆեմինիզմի ընդհանուր սկզբունքների հիման վրա՝ ուղղված են կանանց վիճակի բարելավմանը, կանանց իրավունքների համար ջատագովությանը, հակառազմականությանը, կանանց տեսանելիության և ներկայացուցչականության բարձրացմանը և այլն: Երկրորդ, դրանք ֆեմինիստական են, քանի որ հետապնդում են հենց ֆեմինիստական օրակարգն առաջ մղելու նպատակ: Այս դեպքում ֆեմինիզմի ընկալումները և դրսևորման ձևերը բազմաթիվ են, և կարող են ունենալ տարբեր բնույթ՝ լիբերալ, ռադիկալ, անարխիստ, քուրի և այլն:

«Ես գտնում եմ, որ կախված մարդու սեռից մարդ չպետք ա ենթարկվի ինչ-որ խտրականության՝ այսինքն, չպետք ա Էնպես լինի, որ տղամարդն ունենա ավելի շատ իրավունքներ, քան կինը կամ հակառակը, ու մի Էսպիսի բան Էլ կա, որ կանանց ներսում Էլ պետք ա Էդ ազատությունն ու հավասարությունը լինի, որովհետև չեմ Էլ հասկանում նաև Էն, երբ որ ասում են, որ իրանք ֆեմինիստ են, ու (լուրջ արմատական փոփոխությունների են սպասում չէ՞ մարդիկ

Ֆեմինիստներից), իրանց մեջ սենց հանդարտ վիճակ ա՝ «ես ուղղակի ուզում եմ ապրել նենց, ոնց ուզում եմ, ու չեմ ուզում, որ, կախված իմ սեռից կամ սեռական կողմնորոշումից, լինի սեռական խտրականություն և այլն...», ուղղակի պետք ա դիմացինին ընդունել նենց, ոնց որ ինքը կ»ա: Հիմա լիբերալներն ավելի հարագատ են ինձ: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

«Ես էս վերջերս հասել եմ էն բանին, որ բոլոր կանայք պետք ա լինեն ֆեմինիստ՝ անկախ նրանից, թե իրանք դա ուզում են, թե ոչ: Կանայք պիտի պայքարեն իրանց իրավունքների, իրանց ցանկությունների և իրանց կարիքների բավարարման համար: Էդ տեսակետից կարևորում եմ կանանց ֆեմինիստ լինելը, բայց, եթե կլինեն տղամարդիկ, ովքեր հետաքրքրված կլինեն Ես թեմայով, ես մենակ ավելի ուրախ կլինեմ, քանի որ իրենք են բռնարարները: Ես առումով ես շատ կուզեի, որ ընդգրկուն լիներ և ներառեր նաև տղամարդկանց, բայց թիրախային խումբս լինելու են երիտասարդ, կանայք և աղջիկները»:

(Նախաձեռնության ներկայացուցիչ, Լոռու մարզ)

Հարկ է նաև նշել, որ իրենց ֆեմինիստական չհամարող նախաձեռնությունները նույնպես տարբեր հիմքեր ունեն իրենց այդպիսին չկոչելու: Նախ, տարբեր նախաձեռնությունների ներկայացուցիչներն իրենք իսկ խոստովանում են, որ ի սկզբանե ֆեմինիստական նպատակներ և օրակարգ չեն ունեցել իրենց գործունեության հիմքում, այլ ավելի ընդհանուր աշխատանքներ են իրականացնում երիտասարդների, տարբեր սոցիալական խմբերի կանանց և դեռահասների, ինչպես նաև ֆեմինիստական արժեքներ չունեցող խմբերի շրջանում: Նման դեպքերում նախաձեռնություններն ունենում են և ֆեմինիստ և ոչ ֆեմինիստ անդամներ: Բացի այդ հենց կանանց նախաձեռնությունների շրջանում կան այնպիսիք, որոնք կտրականապես չեն ընդունում ֆեմինիստական օրակարգը, ֆեմինիզմի մասին ունեն հակասական, հաճախ իրականության հետ կապ չունեցող պատկերացումներ: Այս դեպքում ֆեմինիզմի և դրա դրսևորման մասին պատկերացումները ամբողջանում են սեռական ազատություն պահանջող, կիսամերկ կամ մերկ քայլարշավներ անցկացնող, ինչպես նաև ոչ ավանդական սեռական կողմնորոշում «քարոզող» կանանց կերպարում: Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ մարզերում նախաձեռնություններից մի քանիսը, ի սկզբանե չլինելով ֆեմինիստական և չկիսելով ֆեմինիստական արժեքները, հետագոտության ընթացքում նշեցին, որ փոխել են իրենց դիրքորոշումները ֆեմինիզմի վերաբերյալ, քանի որ մինչ այդ դրա մասին տեղեկություն չեն ունեցել:

«Եսպես ամեն ինչ սկսվեց մարզերում կանանց հիմնախնդիրների մասին ծրագրից, Ս.Ա.-ն Էր կազմակերպել, Էդ շատ լավ ծրագիր Էր, ու ահագին բան սովորեցրեց ինձ իրականում: Սովորեցրեց ֆեմինիզմի մասին, հատկապես ֆեմինիզմի մասին, որ մինչև Էդ շատ կարծրատիպային Էր իմ մոտեցումն ու տպավորությունը»:

(Նախաձեռնության ներկայացուցիչ, Լոռու մարզ)

Ըստ Էության նույնը կարելի է նշել նաև կազմակերպությունների մասին: Կազմակերպություններից շատերը նշում էին, որ իրենց գործունեությունը ֆեմինիստական է, դրա հիմքում ընկած են ֆեմինիստական արժեքները, բայց

շահառուների հետ աշխատանքում իրենք փորձում են խոսել «շահառուի լեզվով»՝ նրան աջակցելու, այլ ոչ թե վախեցնելու համար (հատկապես, որ ֆեմինիզմը և ֆեմինիստական մոտեցումները ընդհանուր դիտարկումներով չունեն դրական հեղինակություն հանրության շրջանում): «Ճիշտն ասած, թիմը նոր ա, դեռ պարզ չի, թե ով ինչ հայացքների տեր ա, բայց ինձ համար կարևոր ա հավասարությունը, ու կինը առաջնային ա: Ֆեմինիստ բառը ես ուրիշ ձև եմ հասկանում, մեկ ուրիշը՝ ուրիշ: Ես էն ծայրահեղ բաների կողմնակից չեմ՝ նենց տղամարդկանց վառել և այլն, սենց ծայրահեղ բաներ չունեմ: Ես չեմ ընդունում Էդ բանը՝ կնոջ իրավունք, տղամարդու իրավունք, իմ համար կա մարդու իրավունք: Ես համարում եմ ինձ ֆեմինիստ, բայց ոչ էն գոյություն ունեցող ուղղություններով՝ ես իմ համար առանձին մի հատ ուղղություն ունեմ»: (կազմակերպության ներկայացուցիչ, Լոռու մարզ)

«Բայց ես չեմ ուզում ղնել իմ առաքելությունը իբրև ֆեմինիստական, որովհետև դա կհայտարարեմ, և, կարող է շատ մարդիկ դրա պատճառով փակվեն և չեն մոտենա մեր կենտրոնին: Դրա համար ավելի դիվանագիտական եմ ուզում մոտենալ խնդրին: Ճիշտ է, մեր բոլոր թեյնիկները և մեր բոլոր սկզբունքները ֆեմինիստական են, բայց ես գտնում եմ (միայն ես չե՛մ ամբողջ անձնակազմը), որ Էդքան պետք չէ հայտարարել այդ ձևով»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Երևանում ավելի, քան մարզերում մասնակիցները նշել են, որ կազմակերպության գործունեության բնույթը կարող են համարել ֆեմինիստական: Մարզերում կանանց հիմնախնդիրների լուծմամբ զբաղվող որոշ կազմակերպություններում դեռևս առկա ֆեմինիստական գաղափարախոսության մերժում:

«Մի գուցե իրանք [դոնոր կազմակերպությունը] ուրիշ բնույթի լինեին, Էդ ֆեմինիզմը ամեն ինչից շուտ գար, սենց մդեր քայքայման, բայց իրանց [դոնոր կազմակերպության ներկայացուցիչների] և ինտելեկտը, և մարդկային տեսակը, և բազմակողմանի իմանալը, մի խոսքով Էդ նպաստեց, ու հիմա մենք ինչի էլ կհասնենք: (կազմակերպության ներկայացուցիչ, Արմավիրի մարզ)

Հատկանշական է, որ որոշ հետազոտողների պարագայում ևս առկա է ֆեմինիզմից օտարումը, ինչը իրենց խոսքով պայմանավորված է ֆեմինիզմի ժամանակակից դրսևորումների և դրանց նկատմամբ ձևավորված դիրքորոշումների վրա:

«Ո՛չ, բայց առաջ կասեի՝ այո, քանի որ ֆեմինիստական նշանակում է կանանց իրավունքների հավասարություն և այլն: Ես երկու ձեռքով կողմ եմ, ես կարող եմ ասել, որ այդ առումով ես ֆեմինիզմին սատարում եմ: Ցավոք սրտի, ես ունեմ այնպիսի տպավորություն, որ **Էդ ռադիկալ, էքստրեմալ ֆեմինիզմը տարածվում է**, և ես կարող եմ հասկանալ, որ գուցե դա նաև բնական երևույթ է, քանի որ, եթե մեր մոտ կանանց իրավունքներն ու գենդերային հարցերը, ամեն ինչ հարթ, հանգիստ առաջընթաց ունենար, մարդիկ շատ հանգիստ կզբաղվեին դրանով, իսկ եթե ճնշում են, պարզ է, որ հակահարված պիտի տաս ու Էդ ռադիկալ ֆեմինիզմը էլի ինչ-որ մի ձև է, ինքը ինչ-որ մարդկանց ոգևորում է, հնարավորություններ է տալիս, բայց ինձ դա դուր չի գալիս: Ինչի՞ համար եմ

ասում: Դա ինչ-որ տեսական բան չէ: Ես շփվել եմ և՛ Ամերիկայում, և՛ Եվրոպայում եղ ռադիկալ ֆեմինիստների հետ, ովքեր որ չեն ուզում նույնիսկ քո հետ խոսել: Իսկ ես գտնում եմ, որ դա սխալ ա, որովհետև, եթե դու նույնիսկ վերաբերում ես ինձ որպես թշնամի, այնուամենայնիվ, պետք է լսես, առավել ևս, որ ես թշնամի չեմ, ես դեմ չեմ քեզ»: (հետազոտող, Երևան)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախաձեռնությունների դեպքում հատկանշական է հատկապես այն, որ միևնույն գաղափարի շուրջ կարող են հավաքվել տարբեր դիրքորոշումներով մարդիկ, նրանց մի մասը կարող է լինել գաղափարակից, իսկ մյուսը՝ ոչ, սակայն բոլորը ընդունում են իրավիճակը փոփոխելու անհրաժեշտությունը: Կարևոր է նաև այն, որ նախաձեռնությունների դեպքում ավելի, քան կազմակերպությունների դեպքում, մասնակիցները/անդամները պլանավորում և իրականացնում են ծրագրեր և միջոցառումներ առանց որևէ վարձատրության: Նախաձեռնությունները առանձնանում են նաև նրանով, որ յուրաքանչյուր անդամ հաշվի է նստում մյուսի կարծիքի և դիրքորոշման հետ:

«Չէ, թե ինչ-որ մի բան անում ենք, անում ենք կամավորական սկզբունքով, տեևս հիմնական ֆինանսական աղբյուր չունենք: Էն փոքր ծրագրերը, որը արել ենք՝ ամեն մարզում փոքր գրանտի պես մի բան պետք ա շահեին ու անեին Էդ ծրագրերը: Էդ Էր ու մնացածը, երբ ինչ-որ բան փորձում են անել, հիմնականում դա կամավորական սկզբունքներով են անում»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

«Ես, իհարկե, շատ-շատ կուզեի, որ մենք շատ ակտիվ լինեինք ու բուռն արձագանքեինք ցանկացած իրողությունների, սակայն, հաշվի եմ առնում իմ ընկերներին և իրենց կարծիքը նույնպես: Եվ, չի լինում Էնպես, որ ես մի կարծիք եմ հայտնում ու Էտ կարծիքը պետք ա անցնի. մենք բոլորովս համաձայնության ենք գալիս կամ անհամաձայնության, և, ըստ այդմ Էլ, փորձում ենք մեր գործողությունները իրականացնել կամ որոշում կայացնել»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Նախաձեռնությունները հիմնականում իրենց գործունեությունը ծավալում են Հայաստանի տարածքում, սակայն դրանցից զգալի մասը ունեն գործընկերներ, սատարողներ և աջակիցներ աշխարհի տարբեր երկրներում:

«Նոր տարուց մի քանի օր առաջ որոշեցի առցանց crowdfunding՝ ռեսուրսների ներգրավման հարթակ բացել և դա շատ հաջողված նախաձեռնություն դարձավ, որովհետև հարցն այն չէ, որ կարողացա երկու շաբաթում 1000 դոլար հավաքել, այլ այն, որ տարբեր երկրներից շատ մարդիկ իմացան նախաձեռնության մասին և սկսեցին ռեսուրսներ ուղարկել: Ու տեևս դա վերածվել էր ավելի գլոբալ մի ֆեմինիստական նախաձեռնության, մարդիկ սահմաններից անդին ներդրում էին ունենում՝ ֆիզիկական գրքերի, Էլեկտրոնային գրքերի, նյութերի, հոդվածների տեսքով: Մարդիկ կային, որ համարյա 100 Էլեկտրոնային գիրք են ուղարկել: Դե շատերն Էլ ցուցաբերեցին դրամական օգնություն, որը դեռ ամբողջովին չի ծախսվել, դեռ ընթացքի մեջ ա»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Նախաձեռնությունների ոչ հեռու ապագայի (մինչև 3 տարի) մասին խոսելիս անդամների մի մասը նշում է, որ այն տեսնում է կազմակերպության վերածվելու

մեջ կամ ճիշտ հակառակը՝ գտնում են, որ նախաձեռնությունները չպետք է ինստիտուցիոնալացվեն (հասարակական կազմակերպություն, միություն և այլն), այլ հնարավորինս կարողանան պահպանել իրենց՝ դոնորներից անկախ գործունեությունը և չվերածվեն շահույթ հետապնդող կառույցների, ինչը բնորոշ է կապիտալիստական շուկայական համակարգին: «...*իդեալական vision-ը՝ ես կուզեի, որ ինքը միշտ նույն ձև մնար, ուղղակի մենք մշտական գումար ունենայինք, որ տարածքը մշտական գործեր, որովհետև մենք մեր գրանտի կեսը չենք օգտագործում՝ համարյա ոչ մի բան չենք առնում, ամեն ինչ donation-ներով ա...երբ մենք սկսում էինք, մենք ամեն ինչի համար ունեինք գումար, բայց որոշեցինք էդ գումարը չծախսենք, որ էդ կապիտալիզմի բաները... որ անընդհատ չգնանք խանութ, բան չանենք, կամ առնենք-լցնենք, հետո 6 ամսից տարածքը փակվի ու մենք չիմանանք՝ ինչ անենք... Ու որոշեցինք, որ ուղղակի փոստեր կանենք ֆեյսբուքի խմբում»:*

(նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

«Ես դեռ շատ լավ չգիտեմ, թե ինչ ա լինելու նախաձեռնությունը, բայց չեմ վախենում դրանից ու ձգտում եմ նրան, որ դա լինի, տեղի ունենա, ինչ-որ մի բանի հասնի, բայց ես չունեմ կոնկրետ պլան, որ ասեմ, որ էս ա իմ նպատակը ու եթե սա եղավ՝ ուրեմն հաջողված ա, եթե չեղավ՝ տապալված: Ավելի բաց ա ինքը, և հուսով եմ, որ տարբեր մարդկանց ներգրավածության շնորհիվ կդառնա ավելի շոշափելի ու ավելի լավ միասին կպատկերացնենք, թե դա ինչ ա, բայց ես ինքս մենակով չեմ ուզում պատկերացնեմք»:

(նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Հատկանշական է, որ տարբեր նախաձեռնությունների անդամներ հաճախ օգնում են մյուսներին կազմակերպչական և այլ հարցերում:

Ինչպես կազմակերպությունների, այնպես էլ նախաձեռնությունների շրջանակներում հատկապես մարզերում, գործունեության կայունությունն ապահովելու և կանանց ներգրավելու ու նրանց համար որևէ զբաղվածություն ապահովելու համար օգտագործվում է հենց վերջիններիս ներուժը հիմնականում գորգագործության, կարուձևի, մթերքների արտադրության ասպարեզներում: Նման ձևով ներգրավված կանանց նախաձեռնությունները ավելի շատ դիտարկում են որպես գործընկեր, քան շահառու: «Ես պահի դրությամբ մենք արդեն իրանց համարում ենք գործընկերներ, որովհետև մենք իրանց թելերն ենք տալիս, իրանք գործում են, կատարում են պատվերը, մենք էլ վճարում ենք իրանց արած աշխատանքի համար՝ արդեն պարտնյոր են: 8 հոգի ունենք մեր համայնքում, բայց մեր տարածաշրջանում շուրջ 65 կնոջ, աղջկա սովորեցրել եմ գործել, թել մանել, բացի դա՝ ևս 12 կնոջ և աղջկա հետ արել ենք կար ու ձևի դասընթացներ, իրանք սովորել են դա ավանդական տարագագործության միջոցով»:

(նախաձեռնության ներկայացուցիչ, Գեղարքունիքի մարզ)

Նմանատիպ **սոցիալ-ձեռնարկատիրական գործունեությունը** վերջիններիս բավական արդյունավետ է թվում, ինչով իսկ ըստ ելույթի արդարացնում է Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքում կատարված փոփոխությունը, որի հոդված 22-ի 5-րդ կետի համաձայն հասարակական

կազմակերպությունները կարող են *իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իրենց կողմից հիմնադրված ձեռնարկությունների միջոցով*:⁸⁶ Հարկ է նշել նաև, որ այս միտքն ավելի շատ հնչում է այն նախաձեռնությունների կողմից, որոնք հետագայում պլանավորում են իրենց կարգավիճակը պաշտոնականացնել որպես հասարակական կազմակերպություն: Միևնույն ժամանակ, անդրադարձ կատարելով վերը նշված օրենքին պետք է նշել, որ որոշ նախաձեռնությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ գտնում են, որ օրենքի փոփոխությունները անհիմն են, իսկ կայության ապահովմանը և ինքնաֆինասավորմանն ուղղված սոցիալ-ձեռնարկատիրական գործունեությունը մոտ ապագայում ոչ միայն կարող է գրկել իրենց մի շարք ֆինանսավորման աղբյուրներից, այլ նաև վերածել կազմակերպությունները շահույթ հետապնդող և սպառող հիմնարկությունների:

Միևնույն ժամանակ գործունեության ձեռնարկատիրական բնույթը ավելի բնութագրական է այն կազմակերպություններին, որոնք իրենց ոչ այնքան կամ ընդհանրապես չեն ասոցիացնում ֆեմինիստական նախաձեռնության հետ: *«Չեմ կարող սենց հստակ էդ բանը դնել՝ ֆեմինիստական ենք, թե չէ... Էնքանով, ինչքանով որ կանանց աջակցում ենք՝ ֆեմինիստական ենք, բայց էդ խիստ բանը, որ կա Երևանի ԿՌԿ-ում, անկեղծ ասեմ, որ ֆեմինիստական ավելի շատ էդ կազմակերպություններն են: Գուցե, որ մենք մարզային ենք՝ դրա համար ենք տենց, գուցե մենթալիտետը... Ամեն մեկն իրա ոլորտում ա աշխատում, եթե մենք Էսօր ձեր կազմակերպության նման գնան-ասենք մենք LQFS դեմոնստրացիա ենք անում, վաղը մեր առաջ բոլոր դռները կփակվի, որովհետև Էն որ ասում ա, որ և՛ կարիքից ելնելով, և՛ ռեալիստական, տենց ա մարզային կառույցում»:* (կազմակերպության ներկայացուցիչ, Սյունիքի մարզ)

Անդրադառնալով տեխնիկական և կազմակերպչական տարբերություններին՝ հարկ է նշել նաև, որ կազմակերպությունները առանձնանում են հստակ աշխատանքային գործընթացներով և աշխատաժամերով: Հարցվողները նշում են, որ անգամ ֆիքսված աշխատանքային ժամերի դեպքում իրենց գործունեությունն ավելի ճկուն է, երբեմն ավելի ծանրաբեռնված, քան այլ ոլորտներում, բայց միևնույն ժամանակ նաև հետաքրքիր՝ պայմանավորված ոլորտում տեղի ունեցող գործընթացների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումների բազմազանությամբ: *«Ես շատ հետաքրքրություններ ունեմ տարբեր կյանքում, բայց ինձ դուր ա գալիս, որ ես շատ սիրում եմ իմ աշխատանքը, որովհետև ես զբաղվում եմ, նախևառաջ, նրանով, ինչ շատ սիրում եմ: Հետո, ես ազատ եմ իմ գրաֆիկի մեջ, այսինքն, նենց չի, որ ես առավոտվա 9-ից եկա ու 6-ը լրացավ ու ես վազում եմ տուն ու սպասում եմ, որ 6-ը լինի, որ ես շուտ վազեմ տուն: Չէ՛ ես կարող ա գամ ժամը 1-ին, բայց ես աշխատեմ մինչև ժամը 10-ը, եթե ես էդ օրը գործ ունեմ անելու: Եթե ես էդ օրը գործ չունեմ անելու, ես էդ օրը չեմ էլ գալիս գրասենյակ: Ու, մեր մոտ շատերը, օրինակ աշխատում են մարզերում: ...Էդ ավելի շատ քեզ թույլ ա տալիս, որ դու, ապա ես ասած, creative լինես և նոր կապեր բերես, նոր հետաքրքրություններ*

⁸⁶ ՀՀ օրենքը հասարակական կազմակերպությունների մասին, <http://www.arlis.am/documentview.aspx?docid=337>

ունենաս, որովհետև, եթե զարգանում ես դու, զարգանում ա կազմակերպությունը, բնականաբար»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Կազմակերպությունները նաև ունեն իրենց գործունեության կանոնակարգված և հստակեցված ռազմավարություններ և առաքելություն: Հարցվողների համաձայն կազմակերպությունները ունեն միջազգային կառույցների հետ աշխատելու, համագործակցելու ավելի լայն հնարավորություններ, միջազգային դրամաշնորհների դիմելու և դրանց մասին տեղյակ լինելու առավելություններ: Բացի այդ, կազմակերպություններում տարատեսակ ծրագրերի շրջանակներում հնարավորություններն ավելի շատ են հետազոտական աշխատանքներ անելու, քան օրինակ՝ նախաձեռնությունների շրջանակներում:

Հետազոտությունը ցույց տվեց, որ մարզերում թե՛ կազմակերպությունները, թե՛ նախաձեռնությունները բախվում են ավելի մեծ դժվարությունների, հատկապես մարդու իրավունքների/իրավապաշտպան գործունեություն ծավալելիս: Կարևոր է նաև չանտեսել այն հանգամանքը, որ մարզերի դեպքում մեկ կազմակերպություն կարող է աշխատել ամբողջ մարզում. նման դեպքերում կազմակերպությունները կրկին բախվում են դժվարությունների կապված մարդկային և ֆինանսական ռեսուրսների հայթայթման և շահառուներին չհիասթափեցնելու հետ:

Ընդհանուր առմամբ կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների աշխատակազմերը բավական փոքր են՝ պայմանավորված մարդկային ռեսուրսների սակավությամբ և շատ աշխատակիցներ ունենալու հետ կապված ծախսերի հետ: Մինևույն ժամանակ աշխատանքային խմբերը կարող են ընդարձակվել և նեղանալ՝ կախված ծրագրերի առկայությունից կամ բացակայությունից: Հետազոտության դաշտային աշխատանքների ընթացքում մասնակից կազմակերպություններից մի քանիսը տվյալ պահին չունեին որևէ ֆինանսավորում, որոշ դեպքերում կար միայն տարածք, որում միայն մեկ հոգի էր՝ հիմնականում կազմակերպության նախագահը/հիմնադիրը, ով դեռևս վարձակալության մեջ գտնվող տարածքը կարող էր օգտագործել նախորդ ծրագրերի շահառուների հետ հանդիպման, կամավորության սկզբունքով միջոցառումներ, վերապատրաստման դասընթացներ և քննարկումներ կազմակերպելու նպատակով: Շատ հաճախ կազմակերպությունները չեն ունենում ֆինանսական ռեսուրսներ, սակայն հնարավորության սահմաններում փորձում են անձնական ներդրումներ անել: «Մեր մոտ ոչ մեկ գումարի համար չի աշխատում, որովհետև աշխատավարձ չկա, ծրագիր ենք անում, եթե գումար ա մտում թողնում ենք մեկ այլ ծրագրի համար, օրինակ՝ գրքերի համար: Եղել են, որ ինչ-որ գրանտներ ենք շահել, ու գրվող աշխատավարձերը շատ ժամանակ մենք հավաքում ենք մի տեղ ու ուղղում ենք կրթական ծրագրերին: Մեզ համար սա ապրուստի միջոց չի»:

(կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Վերը նշված իրավիճակում անգամ կազմակերպության ներկայացուցիչները վատատեսորեն չեն տրամադրված, քանի որ գտնում են, որ իրենց աշխատանքի

բնույթն առանձնանում է յուրահատուկ հետաքրքրությամբ, տարբեր մարդկանց հետ շփումով և փորձի փոխանակման ավելի լայն հնարավորություններով:

Նախաձեռնությունները Հայաստանում նույնպես առանձնանում են ակտիվ անդամների փոքր քանակով՝ 2, 5, 10, որոշ դեպքերում նաև ակտիվ անդամ է լինում միայն մեկը: Նախաձեռնություններից շատերը ունեն կարճ պատմություն, ավելի նոր են՝ ի տարբերություն կազմակերպությունների: Հատկանշական է, որ իրենց հնարավորությունների սահմաններում նախաձեռնությունները փորձում են կազմակերպել և իրականացնել բավական մեծ միջոցառումներ՝ ցուցահանդեսներից մինչև ընթերցումներ, քննարկումներից և դասընթացներից մինչև քայլարշավներ Երևանում և մարզերում:

Կազմակերպությունների և նախաձեռնությունների դեպքում նկատելի են թե դիրքորոշումների, թե գործունեության տիպերի **տարբերությունները մարզերում և Երևանում**: Մարզերում հարցվողների կողմից որպես հիմնական տարբերություններ են նշվում կառույցների (պետական և ոչ պետական, առհասարակ տարբեր կառույցների) հասանելիությունը, մայրաքաղաքում միջոցառումների կազմակերպման ավելի լայն հնարավորությունները (թե տեխնիկական, թե որակական, մասնակիցների ներկայության առումներով), այդ միջաջառումներին մասնակիցների քանակը և հետաքրքրվածությունը, թե մարզում և հատկապես գյուղական համայնքներում կոնկրետ թեմաների (գենդերային հիմնախնդիրների նեղ ասպեկտներ, սեռական կողմնորոշում և այլն) մասին խոսելու և քննարկումներ կազմակերպելու «անհնարինությունը»: Երևանում նախաձեռնությունները նույնպես գտնում են, որ տեխնիկական և կազմակերպչական առումներով շատ ավելի հեշտ է ծրագրեր իրականացնել և հանդիպումներ կազմակերպել, միևնույն ժամանակ վերջիններս նշում են, որ վերջին տարիների ընթացքում բավական շատ ծրագրեր են իրականացվում նաև մարզերում, որոնց արդյունքում մարզերում ևս ստեղծվում են տարբեր նախաձեռնություններ և կազմակերպություններ: Ըստ Էոլայան, հետազոտությունը ցույց տվեց, որ մարզերում հատկապես նախաձեռնությունների դեպքում ոչ միայն հնարավորություններն են սահմանափակ, այլ նաև ամբիցիաներն են ավելի համեստ:

Մարզերի որոշ նախաձեռնություններ ունեն նաև հետագայում մարզային մակարդակում հիմնադրամ հիմնելու նպատակներ: «Յետո՛, գյուղից դրսում ապրող մարդիկ շատ կան, ովքեր ֆինանսավորում են տարբեր բաներ՝ գյուղի հետ կապված: Էդ մարդիկ հիմնականում գումարները տրամադրում են գյուղապետարանին, բայց գյուղապետարանը մեխանիզմներ չունի թափանցիկ ու հաշվետու լինելու գումարների հետ կապված ու մենք շատ կուզեինք, որ դառնայինք Էսպիսի գյուղի զարգացման հիմնադրամ, որի միջոցով Էդ մարդիկ կկատարեին իրենց ներդրումները ու կվստահեին»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Տավուշի մարզ)

Հայաստանյան նախաձեռնությունների և կազմակերպությունների **ֆինանսական աղբյուրները հիմնականում արտասահմանյան և/կամ միջազգային են**: Հարցվողների կարծիքով տեղական ֆինանսավորումներ շատ

հազվադեպ են լինում, իսկ եթե լինում են, ապա բավական սուղ ռեսուրսներով: «Հայաստանում ցանցերի զարգացման համար ֆոնդեր չկան, որը իսկապես մեծ խնդիր ա, դրա համար մենք փորձում ենք ֆոնդեր գտնել նաև դրսում»: (կազմակերպության ներկայացուցիչ, Սյունիքի մարզ)

Միջազգային ֆինանսավորումները լինում են հիմնականում միջազգային ֆոնդերի կողմից, հազվադեպ (միայն 2-3 կազմակերպությունների և նախաձեռնությունների դեպքում) վերջիններս ունեն անհատական սվիրատվություններ: Այդ կազմակերպությունների համար շատ հաճախ գործում է միջոցների հավաքագրման crowdfunding տարբերակը ևս, որի հիման վրա հավաքվում են ինչ-ինչ գումարներ ուղղակի ծառայությունների մատուցման ծախսեր հոգալու համար՝ ապաստարանի տրամադրում, բնակարանի վարձում, հիգիենայի պարագաների գնում, բժշկական ծառայությունների համար վճարումների կատարում և այլն: Հետագոտությունը ցույց տվեց, որ crowdfunding-ի մշակույթը հայաստանյան կազմակերպությունների շրջանում այնքան էլ տարածված չէ:

Ի տարբերություն Երևանում գործող կազմակերպությունների՝ մարզային կենտրոնները երբեմն **ֆինանսավորում են ստանում համայնքային բյուջեներից** կամ համայնքապետարանները իրականացնում են սվիրատվություններ կազմակերպությունների համար ֆիզիկական տարածքների տրամադրման և/կամ վերանորոգման միջոցով:

«Օրինակ ես կոնկրետ մեր քաղաքապետի առումով կարող եմ ասել, որ ինչ հարցով դիմել ենք, աջակցել են: Ասենք խաղահրապարակի համար տարածքը մեզ անվճար տրամադրել են, մի բան էլ օգնել են, որ մաքրվի տարածքը, մեզ նստարաններ են տրամադրել, աղբարկղեր, ծառեր են տնկել, Նույնիսկ Էդ փողոցն են ասֆալտ արել: Ամբողջ մեր կենտրոնի փողոցը ասֆալտապատեցին՝ երկրորդական փողոց: Նույնիսկ Էս վերջերս խնդրեցինք, որ մեզ ինչ-որ տարածք տրամադրեն Գյումրիում, որտեղ մենք միգուցե դրամաշնորհի դեպքում, եթե ստանանք, կարողանանք կենտրոն կառուցել, իրենք մեզ խաղահրապարակի կողքի տարածում անվարձահատույց տրամադրեցին՝ ասելով՝ տեսնելով ձեր գործունեությունը, ձեր արած լավ գործը, մենք վստահում ենք ձեզ»: (կազմակերպության ներկայացուցիչ, Շիրակի մարզ)

«Մեր տեսլականը դա ա, որ հասնենք դրան: Ես մեր մարզպետին վերջին հանդիպմանը ասեցի, որ ես կարդացել եմ, որ իրա ընտրական ծրագրում գրված էր կանանց բաժնում, որ լինելու ա շարունակական աշխատանք ռեսուրս կենտրոնների հետ: Հիմա ասում եմ՝ «Դուք գիտե՞ք, որ Սյունիքի մարզը այդ իմաստով գտնվում է բավականին շահեկան կարգավիճակում և դուք ունեք Ձեր տրամադրության տակ 4 ռեսուրս կենտրոններ, նաև Քաջարանում էլ կա նախաձեռնող խումբ, այսինքն՝ ռեալ ռեսուրս ունեք, որոնց հետ կարող եք հստակ ծրագրեր անել, հիմա Դուք ո՞նց եք պատկերացնում մեզ հետ...»: ...Մենք 800000 դրամ մարզպետի ֆոնդից ենք բերել մեր տարածքի վերանորոգման համար»: (կազմակերպության ներկայացուցիչ, Սյունիք)

Չետաքրքրական է, որ եթե **նախաձեռնությունների դեպքում համախմբումը հիմնականում տեղի է ունենում ի սկզբանե կամավորական սկզբունքի հիման վրա** (չհաշված այն դեպքերը, երբ նախաձեռնությունը ֆինանսավորում ունի, որը, սակայն, միևնույն է ավելի շատ օգտագործվում է միջոցառումներ կազմակերպելու, քան անդամներին աշխատավարձով ապահովելու վրա), ապա կազմակերպությունները բացի ֆորմալ աշխատակիցներից ունենում են նաև կամավորներ, ովքեր հիմնականում կիսում են իրենց գաղափարները և միտված են դրական փոփոխություններ կատարելու կանանց կյանքում:

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Խոսելով իրենց կողմից հասած հաջողությունների մասին, կազմակերպությունների և նախաձեռնությունների անդամները մատնանշում են ոչ միայն աշխատանքային, այլ նաև իրենց **անձնական հաջողությունները**: Այդպես, գեղերային հավասարության հասնելու տեսանկյունից հաջողությունները տարբեր են: Հարցվողների մի մասը նշում է, որ իրենց աշխատանքի շնորհիվ տեղի են ունեցել այնպիսի փոփոխություններ, ինչպիսիք են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրենքի ընդունումը, ինչպես նաև նոր օրենքների՝ ընտանեկան բռնության, խտրականության արգելքի մասին օրենքների նախագծերի քննարկման գործընթացներում ակտիվ մասնակցությունը, ինչպես նաև ջատագովությունը այդ օրենքների կարևորության և ընդունման համար անգամ ոչ ֆորմալ մակարդակում: Հատկապես մեծ ձեռքբերում է համարվում այն, որ վերջին մի քանի տարիների ընթացքում կոնկրետ կազմակերպությունների աշխատանքի արդյունքում կանայք համեմատաբար ավելի շատ են սկսել բարձրաձայնել ընտանեկան բռնության մասին, ինչպես նաև հասարակությունը նույնպես սկսել է քննարկել խնդիրը:

Եթե խոսենք անձնային մակարդակում ձեռք բերած հաջողությունների մասին, որոնք գերակշռում են, ապա կարելի է առանձնացնել հետևյալը.

- **ոչ սեքսիստական դիրքորոշումների արտահայտումը**, դրանց ձևավորմանը նպաստումը – շատ հաճախ անգամ գեղերային հիմնախնդիրներով զբաղվող խմբերում և կազմակերպություններում տարբեր հիմնախնդիրների ուղղությամբ քննարկումները և դրանցում օգտագործվող լեզուն ունենում է սեքսիստական ոճ: Հարցվողների կարծիքով այն, որ որոշ դեպքերում հնարավոր է նվազագույնի հասցնել նման դիրքորոշումների արտահայտումը, արդեն իսկ կարելի է համարել որոշակի ձեռքբերում:
- **կրթական և ակադեմիական մակարդակում անձնական հաջողությունների հասնելը** – կանանց նախաձեռնությունների անդամներից շատերը երիտասարդներ են, ովքեր նաև ֆորմալ կրթության բնագավառում փորձում են ձեռք բերել իրենց հոգեհարազատ մասնագիտություն: Շատ հաճախ, հայաստանյան կրթական հաստատությունները հարցվողների կարծիքով որոշակի ճնշում են դրսևորում հետազոտական ուղղությունների ընտրության վրա: Այս առումով սեռական կողմնորոշման, գեղերային ինքնության և հարակից այլ թեմաների շրջանակներում հետազոտական աշխատանքները ըստ նրանց ավելի քիչ «ողջունելի են»: Ինչ վերաբերում է ակադեմիական հաջողություններին, ապա հարցվողների կողմից որպես մեծ ձեռքբերում է նշվում գիտաժողովների կազմակերպումը և մեծ մասշտաբի հետազոտությունների իրականացումը:

«Մեր կոնֆերանսն էր նաև ձեռքբերում... **Իսկ ինչո՞վ էր օրինակ կոնֆերանսը ձեռքբերում:** Էն իմաստով, որ մենք փորձում ենք հարթակ ստեղծել բոլոր Էն մարդկանց համար, ովքեր մտահոգված են այս հարցերի շուրջ ու Էդ մարդիկ իրենց համաձայնությունն են տվել, եկել են կիսվելու իրենց կատարած հետազոտություններով կամ փորձով... Ու որ չեն հրաժարվել դրանից, շատ կարևոր բան ա, նշանակում ա, որ մենք նշանակություն ունենք կամ (չեմ ուզում ասել արժեք ենք ներկայացնում), բայց գուցե ակտիվ ենք, գուցե փորձում ենք ինչ-որ բան անել, դրա համար էլ մեզ հաշվի են առնում»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

«Դե, տեսե՞ք՝ ես հաջողություն կհամարեմ վերջին աշխատանքս՝ գրում էի կուրսային աշխատանք, հիմնական նպատակն էր ներկայացնել կնոջ կերպարը: Ես, ի սկզբանե, պետք ա գրեի կարծրատիպերի հետ կապված ինչ-որ թեմա, բայց չուզեցին ամբիոնում, որ գրեի Էդպիսի թեմա, բայց գրեցի կնոջ կերպարի վերաբերյալ: Իրա մեջ գրված էր, թե ինչ կարծրատիպեր կան ու թե ինչով ա կինը զատվում տղամարդուց: Ես ներկայացրեցի, որ հայ իրականության մեջ կա Էդ տարբերությունը ու բարձր ստատուս ունեցող մարդկանցից մենք լսում ենք, որ Հայաստանում չկա խտրականություն, բոլորն Էդպես են ընդունում: Ես հաջողություն կարող եմ համարել Էդ, որ թեկուզ փոքր շրջանակում, բայց ես կարողացա ներկայացնել, ցույց տալ, թե ոնց կարելի ա դրանց լուծումները գտնել»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

- **սեփական կարևորության գիտակցումը ֆեմինիստական շարժման շրջանակներում** – հատկանշական է, որ մինչև բոլորովին վերջերս ֆեմինիստական շարժումը և նախաձեռնությունները ընկալվում էին որպես ոլորտի կազմակերպությունների “մենաշնորհ”. դրանք կազմակերպվում և հիմնվում էին կազմակերպությունների կողմից և հաճախ մնում դրանց շրջանակներում: Սակայն վերջին տարիների ընթացքում առանձին ֆեմինիստական խմբերի, ինչպես նաև անհատական նախաձեռնությունների համար նախատեսված տեղական և միջազգային աջակցությունների միջոցով վերջիններս կարողացան կազմակերպություններից անկախ գործունեություն ծավալել: Հարցվողներից շատերը այս հանգամանքը համարում են մեծ նվաճում հատկապես իրենց կողմից ֆեմինիստական նախաձեռնություններում ներդրում ունենալու կարևորությունը գիտակցելու տեսանկյունից:
- **ինքնագնահատականի բարձրացումը, ինքնընկալման փոփոխությունները, ինքնադրսևորման հնարավորությունների ընդլայնումը** – հաշվի առնելով այն, որ այսօր Հայաստանում ֆեմինիզմն ունի բավական հակասական ընկալումներ, որոնք առաջ են եկել հատկապես հակաֆեմինիստական խմբավորումների գործունեության արդյունքում, հարցվողների կարծիքով ֆեմինիստների շրջանում իրականացվող քննարկումները բոլոր առումներով նպաստում են ինքնագնահատականի բարձրացմանը և ինքնընկալման փոփոխությունները: Հարցվողների կարծիքով ֆեմինիստական

գաղափարներն իրենց օգնել են ինքնադրսևորվել և զարգացնել ինքնահարգանքը:

- **քաղաքական ասպարեզում հաջողությունները** – մարզերում սոցիալական կյանքում ավելի ակտիվ կանայք ավելի մեծ հնարավորություններ են ունենում դրսևորելու իրենց քաղաքական ակտիվություն (օրինակ՝ լինելու ավագանու անդամ): Նման փորձ ունեցող հարցվող կանայք նշում են, որ իրենց ներկայությունը որոշումների կայացման որևէ օղակում միանշանակ հնարավոր է դիտարկել որպես անձնային մակարդակի հաջողություն:

«Յիմա, եթե նայեմ գենդերայինով, ես տարածաշրջանում եմ կանանցից մեկն եմ, ում տղամարդիկ ինչ-որ գործնական հանդիպումների հրավիրում են, ու ես գնում եմ գործնական հանդիպմանը և լինում եմ միակ կինը էդ հանդիպմանը: Կարծում եմ, որ դա ձեռքբերում աս, ձեռքբերում աս նաև եմ, որ իրանք ինձ արդեն նայում են գործընկեր ու իրանց հավասար, որպես էդ ոլորտի մարդ, ոչ թե որպես կին, ում թողել են, որ գա իրենց հետ նստի՝ տենց չեն նայում, ու սա ինձ համար բավականին կարևոր բան աս, որովհետև ես պայքարել եմ, որ գա էդ օրը հասնի»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Գեղարքունիքի մարզ)

Մարզերում հարցվողների կարծիքով կանանց հզորացման և գենդերային հավասարության հասնելու առումով մեծ ձեռքբերում է արդեն իսկ այն հանգամանքը, որ տարբեր տարիքային խմբի կանայք «տանից դուրս են գալիս» և մասնակցում են իրենց կողմից կազմակերպվող միջոցառումներին՝ վերապատրաստումներ, քննարկումներ, կինոդիտումներ և այլն: *«Մեկ էլ էդ բռնությունների հարցը, որ շոր հագնել չթողելն էլ աս բռնություն, որ ոտնահարում աս քո իրավունքը, քո ցանկությունը: Իմ պապան, մաման, ախպերս էլ երբեք ինձ չեն ասել՝ Եսի մի՛ արա, Էնի մի՛ արա, իսկ դու վախենում ես ամուսնացած կնոջը կանչես հանդիպման. կամ պիտի ամուսնին էլ հետը գա, կամ պիտի անընդհատ զանգի, գժվացնի: Էդ խեղճ կինն էլ աս ընկնում վատ դրության մեջ: Ու հետաքրքիր աս, որ ես առաջին բուժօգնության ծրագրով որ հրավիրում էինք կանանց, գալիս-ասում էին՝ «Վա՛յ, խեր տենաս դու, հազիվ հագանք-կապանք տնից դուրս եկանք, մի հատ, երկու հատ լավ շոր ունենք, չգիտենք որտեղ հագնենք...»:* ու զգում ես, որ իրանք էդ մի երկու ժամն էլ տնից դուրս են գալիս, ցրվում են»:

Մարզերում նախաձեռնությունների անդամները առանձնանում են նրանով, որ գործունեություն են ծավալում սահմանամերձ գյուղերում (օրինակ՝ Տավուշի մարզի նախաձեռնությունները), որտեղ բացի մի շարք հիմնախնդիրների լուծումից, անհրաժեշտ է լինում մտահոգվել տարրական անվտանգության պահպանման առումով, ինչը, սակայն, չպետք է նսեմացնի գենդերային հիմնախնդիրների հաղթահարման ջատագով նախաձեռնությունների աշխատանքը:

Հաջողությունների ընկալումը միանշանակ չէ, քանի որ որոշ դեպքերում հարցվողները չունեն «հաջողություն» եզրի և դրա բովանդակության

հստակեցումները, ինչը անմիջականորեն կապված է վերը նշված նպատակների հստակեցման հետ:

Այնուամենայնիվ, անգամ հստակեցումների բացակայության դեպքում հարցվողների կողմից որպես հաջողություն է նշվում նաև **քուիր կանանց հարթակներ ունենալու հնարավորությունը**: «...նենց հզոր կանանց եմ տեսնում, որ իմ համար շատ տարօրինակ էր Հայաստանում տենց հզոր կանանց ու երիտասարդների տեսնելը, որովհետև ես իրանց մինչև էդ չէի ճանաչում... Կան կանայք, ովքեր հետերոսեքսուալ չեն՝ քուիր են, իրանք ունեն երեխա, բայց ամուսին չունեն ու էդ իրանց որոշումն ա եղել երեխա ունենալը... էդ Հայաստանի համար շատ դժվար որոշում ա... Իմ համար կան տենց մի քանի կին, որոնց ես չէի ճանաչում ու նույնիսկ մտքովս չէր անցնում, որ տենց կանայք կան Հայաստանում: Ես տարբերություն շատ եմ զգում՝ ավելի շատ զգում եմ, որ երբ որ կանանց empower անես, իրանք կարան ավելի շատ փոփոխություններ անեն՝ քան տղամարդիկ... Ես տենց եմ զգում, որովհետև տղամարդիկ շատ ջարդված են ու կոտրված են... էդ էլ գալիս ա բանակից... (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Նախաձեռնությունների մի քանի անդամների հետ հարցազրույցների արդյունքում պարզ դարձավ նաև, որ **հաջողություն և մեծ ձեռքբերում է հանդիսանում այն, որ իրենց աշխատանքի արդյունքում տեղի է ունենում փոփոխություն և ամենակարևորը, որ իրենց միջամտության անհրաժեշտությունը անհետանում է**: «...երբ որ դու պետք չլինես էդ տարածքում: Էդ նշանակում ա, որ կան մարդիկ, ովքեր գիտեն անել էն ամեն ինչը, ինչ դու գիտես անել, այսինքն՝ դու իրանց empower ես արել... մինչև նախաձեռնությունը մի կազմակերպությունում մենք վստահության ակումբներ էինք անում, ու, մի երկու խմբից հետո, ես նկատում էի, որ իրանք իրանց սկսում են օգնել, իրանք էին CV-ները լրացնում իրար... Արդեն իրանք նույնիսկ ուրիշին էին օգնում, ոնց որ դու արդեն զգում էիր, որ դու էլ պետք չես...»: (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Հետազոտության նպատակներից մեկն էր նաև պարզել, թե որոնք են այն **հիմնական խոչընդոտները**, որոնց բախվում են կանանց նախաձեռնությունները իրենց աշխատանքային գործունեության ընթացքում: Պարզելով խոչընդոտները կարելի է հասկանալ նաև կարիքների ընդհանուր պատկերը, ինչի մասին ավելի մանրամասն կխոսվի վերլուծության հաջորդ մասում:

Հարցվողների կարծիքով ժամանակակից հայաստանյան իրականությունը ֆեմինիստական և կանանց նախաձեռնությունների գործունեության համար ծնում է բավական լուրջ խոչընդոտներ, որոնք չեն սահմանափակվում միայն օնլայն մամուլում տարածվող անհիմն հողվածներով և մեկնանաբանություններով:

«Ինձ թվում ա՝ հիմնական խոչընդոտը հասարակությունն ա ավելի, հասարակության մեջ առկա բաները, որ շատ ուժեղ են: Շատ-շատ մարդիկ, օրինակ, սեռական բռնության մասին խոսելիս մտածում են տվյալ զոհին ամուսնացնելու մասին: Բացարձակ անգրագիտության բան ա, էն էլ, որ ասենք անչափահասների դեպքում ա տենց բան լինում, որ էդ անչափահասը կարող ա

կյանքում ոչ մեկի հետ էլ չկարանա շփվի, ու՛ր մնաց՝ ամուսնանա ինքը վաղը մյուս օր: Չնայած, երևի տենց տիպի ծնողը, երևի կամուսանցնի իրա աղջկան՝ Էնքան որ անունը դուրս չգա: Բայց հասարակության մեջ առկա բաները շատ են խանգարում մտքերը, որ սեռական բռնությունը անպատժելի ա, որ, եթե ինչ-որ մեկը ծանոթ ունի կամ մի քիչ փող ունի՝ ամեն ինչ կարա էս երկրում, որովհետև, օրինակ, սենց սարսափելի դեպքեր ենք ունենում, բայց ոչ մի ձևով չենք կարողանում ապացուցենք իրանց, որ, եթե դիմեն, իրանք ինչ-որ բանի կհասնեն, որովհետև մենք էլ ենք էս երկրում ապրում: Չգիտեմ, Էդ կաշառակերություն՞ն ա, ի՞նչ ա, բայց արդարացված մտքեր են, Էլի...» (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Խոչընդոտները հարցվողների կարծիքով ավելի խորն արմատներ ունեն: Ինչպես նոր, այնպես էլ համեմատաբար երկար պատմություն և փորձ ունեցող նախաձեռնությունների համար գործունեության ընթացքում մեծ խոչընդոտ է «սև անուն» չունենալու և դրանից խուսափելու ռազմավարություններին անծանոթ լինելը: Որոշ դեպքերում, ինչպես նշում են հարցվողները, կա վախ բացասական թիրախավորումից և դրանից բխող հանրության անլուրջ վերաբերմունքից (ինչն անմիջականորեն կապված է մասնակիցների սղության հետ, որը քննարկվեց հաջողությունների մասին նշելիս), ինչը հիմնականում գալիս է կոնսերվատիվ մտածելակերպի և ավանդապահ մշակույթի կրողների կողմից:

Խոչընդոտների շարքում է նաև «եվրոպական արժեքների», ֆեմինիզմի, կանանց հիմնախնդիրների բարձրաձայնման, գենդերային հիմնախնդիրները հետազոտողների, LQFS և քուիր անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների, խմբերի, անհատների, ընդհանուր առմամբ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին միջերի, կարծրատիպերի, ինչպես նաև դեզինֆորմացիայի հիման վրա հիմնված ագրեսիան: Այս և մի շարք այլ առումներով հարցվողների համար իրենց գործունեության շրջանակներում խոչընդոտ են հանդիսանում նաև մարդու հիմնարար իրավունքների հանրային ոտնահարման, ակնհայտ փորձերը, ատելության խոսքի դրսևորումները, իրենց նկատմամբ մահվան և բռնության սպառնալիքների հանրային քննարկումները: Հատկանշական է, որ որոշ հարցվողների համար, ում նկատմամբ ինչեցվել են սպառնալիքներ և ուլքեր թիրախավորվել են տարբեր խմբերի կողմից, հաճախ միջոցներ ձեռք առնելը համարվում է աննպատակային, երբեմն էլ՝ անհնար:

«Անվտանգության հետ կապված խոչընդոտներ են եղել: 2013 թվականին ես անցել եմ շատ անձնական սպառնալիքների միջոցով, ֆեյսբուքյան շատ տարբեր խմբերում իմ նկարն էին տեղադրում, վիրավորական սպառնալիքներ պարունակող և այլն...Այսինքն ունեցել եմ շատ լուրջ խոչընդոտներ ու սպառնալիքներ են եղել՝ թե՛ լայն քաղաքական առումով, թե՛ նեղ անձնական առումով, իսկ էս պահի դրությամբ մի քիչ ավելի հանգիստ շրջան ա, ես էլ ավելի փոխել եմ իմ մարտավարությունները, հիմա փորձում եմ հասկանալ, թե ինչ եմ ուզում անել ու չեմ ուզում շտապե՛լ: (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Մարգային նախաձեռնությունների կողմից հնչող կարծիքների հիման վրա դուրս են բերվել այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են՝

- **որոշումների կայացման գործընթացներից դուրս լինելը**, անգամ նման խմբերում պաշտոնապես ներգրավված լինելու պարագայում,

«Ա՛յ ըստեղ ես վերջերս զգացի, որ դա խոչընդոտ ա. մեր հայ իրականության մեջ դեռևս ինչ-որ հարցեր կարգավորելու եղանակ ա մտում, որ ինչ-որ մեկը գործնական առաջարկով գալիս ա, հանդիպում են, հետո ըստեղ գալիս ա մեր հայ տղամարդկանց սիրելի ուսուցիչները պահը, ու գալիս ա գենդերային անհավասարության պահը, որովհետև ես կին եմ, ես էդ պրոցեսը չեմ անում ու ինքը իրոք խոչընդոտ ա: Մնացածը ուրիշ ինչ-որ բան չեմ նայել»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Գեղարքունիքի մարզ)

- **այլ սոցիալական ինստիտուտների և ենթակառուցվածքների աշխատանքային գործունեության բացթողումները** (մանկապարտեզների, դպրոցների աշխատանքային ժամերի անհամապատասխանությունները, սոցիալական ոլորտի կառույցների),
- կանանց գործունեության և սոցիալական շարժունության նկատմամբ ճնշումը և սահմանափակումները (կանանց նկատմամբ բռնությունը, ճնշումը, ժամանակի և այցելության վայրերի կառավարումը և այլն),
- կազմակերպությունների և նախաձեռնությունների ներսում մարդկային ռեսուրսների սակավությունը և մեծ հոսունությունը (կազմակերպությունից կազմակերպություն կամ նախաձեռնություն տեղափոխվելը, արտերկիր մեկնելը և այլն),
- Նոր գաղափարների սակավությունը:

Հարցազրույցների ընթացքում փորձ էր արվել պարզել, թե արդյո՞ք հարցվողների կարծիքով իրենց գործունեությունը վերջին 5 տարիների ընթացքում հետընթաց է ապրել, նույնն է մնացել, թե առաջընթաց է ապրել, ինչին ի պատասխան հարցվողները նշել են, որ փոփոխությունները միշտ դեպի ավելի լավ են եղել և անգամ առաջին հայացքից այդպիսին չթվացող չնչին փոփոխությունը նպաստել է թե՛ նախաձեռնության, թե՛ անդամների զարգացմանը: **Եթե կազմակերպությունների ներկայացուցիչները հիմնականում առաջընթացը կապում են կազմակերպության գործունեության հետ, ապա նախաձեռնությունների զգալի մասը ավելի միտված է տեսնելու սեփական զարգացումը և ինքնակատարելագործումը:**⁸⁷

⁸⁷ Հիմնականում քանի որ շատ նախաձեռնություններ հետազոտության իրականացման պահին ոչ այնքան ակտիվ են եղել և/կամ մարդկային և/կամ ֆինանսական ռեսուրսների սղություն են ունեցել:

«Լիքը առաջ ա գնացել...Առաջ նեղվում էի, սենց որ նայում էի, որ Էն մյուս կազմակերպություններն արագ-արագ են առաջ գնում, բայց հետո նայում էի, որ ես էլ շատ-շատ-շատ մեծ քայլերով էի առաջ գնում: Ասում եմ՝ առաջ երագում էինք, որ սեղան, աթոռ, համակարգիչ ունենանք, պրոյեկտոր ունենանք, բայց հիմա փոքր կազմակերպություն ենք, բայց ամեն ինչ ունենք: (կազմակերպության ներկայացուցիչ, Լոռու մարզ)

«Օ՛յ, չէ, միանշանակ առաջընթաց ենք ապրել...Բայց, ասենք նայում ես՝ ամենահոմոֆոբ թերթը հողված ա գրում նույնասեռականության մասին, գրում ա՝ ԼԳԲՏ ու փակագծի մեջ բացում ա՝ լեզբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր: Ու էլ չեն գրում Էլի համասեռամոլ, արվամոլ...հա՛, այլասերվածը գրում են Էլի, բայց, ասենք հիմնականում կոնկրետ տերմինաբանական փոփոխությունն ինքը՝ ահագին լավ ա: Հետո, ասենք, տասը տարի առաջ, երբ որ նոր հիմնադրվեցինք՝ կանգնեինք ասեինք «հայ գեյ», կասեին, որ ըտենց մարդիկ գոյություն չունեն Չայաստանում: Բայց հիմա մարդիկ ճանաչում են, գիտեն, որ ըտենց մարդիկ են, հիմա էլ ասում են՝ «Պրոպագանդա մի՛ արեք...»: Բայց Էդ ահագին փոփոխություն ա, Էլի...»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Խոչընդոտներից նշվեցին նաև **ֆինանսական դժվարությունները** և ցածր աշխատավարձերը ոլորտում՝ «Եթե լիներ ամսեկան մի 3000-4000 դոլար՝ նորմալ կլիներ, կկարողանայինք Էդ ամեն ինչն անել: Օրինակ, մենք հիմա մի հատ փոքր դրամաշնորհ ենք ստացել կայքն անելու համար, բայց Էլի մենք չենք վճարվում դրա համար: Իսկ տենց շատ դժվար ա, որովհետև, եթե ուզում ես գնաս ինչ-որ տեղ, ճանապարհորդես՝ Էլի մենք անում ենք մեր գումարներով, ու ստացվում ա, որ քո աշխատանքը քեզ ոչ մի եկամուտ չի բերում, ու ամուսինդ ասում ա՝ «Բայց դու ի՞նչ ես անում...»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Որպես վերջնական նպատակ ունենալով կանանց հիմնադրամների և դրանց աշխատանքային ուղղությունների մասին հարցվողների կարծիքի ստացումը՝ հետազոտության շրջանակներում փորձ է արվել նաև հասկանալ, թե ինչ **հմտությունների և գիտելիքների կարիք ունեն** վերջիններս: Այդպես, յուրաքանչյուր բլոկում ստացվել է հետաքրքիր մի պատկեր, որը ավելի մանրամասն ներկայացվում է ստորև:

Հարցվողների կողմից հարցազրույցների ընթացքում նշվել է հետևյալ գիտելիքների կատարելագործման կամ ձեռքբերման անհրաժեշտությունը (ցանկը ներկայացվում է ըստ թեմատիկ ոլորտների)

- Ֆեմինիզմ
- Սեռականություն
- Մարդու իրավունքներ
- Ընտանեկան բռնություն
- Հոգեբանական բռնություն
- Գեներ, գեներային կրթություն

Ընդհանուր առմամբ մարզերի մասնակիցները նոր գիտելիքներ ստանալու և/կամ դրանք զարգացնելու մասին քննարկման ընթացքում ավելի ազատ էին և կիսում էին իրենց մտավախությունները ինչ-որ բան չիմանալու վերաբերյալ, ի տարբերություն երևանյան կազմակերպությունների, նախաձեռնությունների, անհատ-փորձագետների, հետազոտողների, ակտիվիստների, որոնք նշում էին, որ չեն դադարում օրեցօր կատարելագործվել և ինքնուրույն զարգանալ, ինչի պատճառով գտնում են, որ քննարկվող շատ ուղղություններ կան (օրինակ՝ միջոցների հավաքագրում, քաղաքականության մշակում և այլն), որոնք ավելի անհրաժեշտ են նորաստեղծ կազմակերպություններին և նախաձեռնություններին: «Իմ համար, ճիշտն ասած, չեմ կարող ասել, որ բացեր ունեմ, որովհետև ես շատ եմ կարդում, ես անըդիատ պրպտում եմ՝ ինչքան հնարավոր է, ինչքան ժամանակս թույլ է տալիս, որովհետև պրոֆեսիոնալ գործունեությամբ էլ եմ շատ ակտիվ, բայց չունեմ, կարծես թե, բաց տեղ»:

(հետազոտող, Երևան)

«...չնայած մենք մեր պոտենցիալն ունենք փորձագիտական կազմակերպության մեջ և մենք անում ենք հետազոտություններ, մենք ունենք նաև էքսպերտային խումբ, որը առանձին հետազոտություններ ա կատարում: Մենք ունենք և՛ գեներային մեյնսթրիմինգի փորձ, զարգացման ծրագրերի՝ դա, ոնց որ, մեր էսպերտային ճյուղն ա, որովհետև կազմակերպությունն իրականում միավորում ա գեներային հարցերով զբաղվող փորձագետների և լրագրողների, բայց այ էդ երիտասարդ անդամների հետ աշխատանքը կարելի էր ավելի շատ անել»:

(կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Ինչ վերաբերում է հմտություններին, դրանք բավական բազմազան են: Կանանց հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների, նախաձեռնությունների, հետազոտողների և ակտիվիստների կողմից նշվել է հետևյալ հմտությունների զարգացման և/կամ կատարելագործման կարիքը.

- Միջոցների հավաքագրում, դիմում-հայտերի լրացում
- Քաղաքականության և ռազմավարության մշակում
- Մոնիթորինգ և գնահատում
- Մենթորություն
- Հանդիպումների և աշխատանքային խմբերի ֆասիլիտացիա
- Հետազոտություններ անցկացնելու հմտություններ
- Բիզնես, մարքեթինգ և կառավարում
- Հասարակայնության հետ կապեր և ռազմավարական հաղորդակցություն
- Աշխատանք նորագույն թվային տեխնոլոգիաներով (մասնավորապես՝ սոցիալական ցանցերի արդյունավետ կիրառում, գովազդ և մարքեթինգ սոցիալական ցանցերում)
- Միջազգային կազմակերպությունների հետ հաղորդակցում և համագործակցություն
- Ջատագովություն (advocacy)
- Առաջնորդություն:

Վերը նշված պրակտիկ հմտությունները հետազոտողների դեպքում կարևոր են այնքանով, որ հետազոտական աշխատանք իրականացնելուց զատ վերջիններիս անհրաժեշտ են ավելի պրակտիկ գիտելիքներ և հմտություններ՝ հետազոտությունները կիրառության մեջ դնելու համար: Հետազոտության դաշտային փուլում պարզվեց, որ հետազոտողները բավական խորը հիասթափություններ են ապրել այն առումով, որ երկար ժամանակ աշխատելով և ուսումնասիրելով գենդերային հիմնախնդիրները, ինչպես նաև առաջարկելով դրանց համար հասանելի և պարզ լուծումներ, մինչ օրս չեն տեսնում իրենց աշխատանքի ազդեցությունը գենդերային քաղաքականության զարգացման վրա: *«Նախ՝ շատ հետազոտություններ ունենալու, շարունակելու, նոր մտքեր գեներացնելու հնարավորություն, և հաջորդը՝ էդ նոր մտքերի արդյունքում, միգուցե, նոր արդյունավետ լուծումների գալու հնարավորություն, որոնք ինձ իմ փակուղուց կհանեն»:* (հետազոտող, Երևան)

Հետազոտության ընթացքում պարզ դարձավ նաև, որ մասնակիցների շրջանում կան նաև զուտ նյութական կարիքներ և դրանց արձագանքելու երբեմն հրատապ անհրաժեշտություն: Բացի վերը նշված գիտելիքներից և հմտություններից՝ հարցվողների կողմից նշվել է նաև տարածքի փոփոխության կամ տարածք

ունենալու կարիքը, վեբ-կայքերի ստեղծման կամ հետագա զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը, որոշակի ծրագրերի համատեքստում տեխնիկայի գնման անհրաժեշտությունը:

Հետազոտության և ընդհանրապես հետագա աշխատանքների պլանավորման տեսանկյունից շատ կարևոր է նաև այն, որ հատկապես մարզերի կազմակերպությունների և նախաձեռնությունների ներկայացուցիչները կարիք ունեն **օտար լեզուներ** (հիմնականում՝ անգլերեն) սովորելու, ինչը վերջիններս անմիջականորեն կապում են իրենց կողմից նշված կարիքները լուծելու հետ (օրինակ՝ միջազգային կառույցների և դոկորների հետ շփումը, կարողությունների զարգացումը և այլն): Բացի այդ հարցազրույցների ընթացքում շատ հաճախ էր հնչում այն առաջարկը, որ անհրաժեշտ են **միջազգային փոխանակման ծրագրեր**, որոնք կնպաստեն կարողությունների զարգացմանը, ինչպես նաև հնարավորություն կտան լայնացնելու աշխատանքային և մտավոր հորիզոնները:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Հարցմանը մասնակցած նախաձեռնությունների և կազմակերպությունների եկամուտները ըստ իրենց տատանվում են տարեկան 500-150 000 ԱՄՆ դոլարի սահմաններում. հետազոտության մասնակիցներից շատերը դժվարացան նշել որևէ կոնկրետ թիվ:

«Էդպիսի մեծ ակնկալիքներ չունենք, հաշվի առնելով նաև մեր կամավորական գործունեությունը՝ առնվազն 25000 եվրոյի կարգի գումար տարեկան, որ Էդ շնչելու հնարավորությունն է, որը կարող է ապահովել՝ թիմը ներկա լինի, կարիքների բացահայտում, հեռախոսազանգեր, մեյլերի ստուգում, կապ-ինֆորմացիա և այլ էն հրատապ բաները, որոնք չեն ենթադրում այլ տեխնիկական ծախսեր, որը որ կարող է լինել օրինակ տարածքի վարձակալումը, վառելիքը՝ մարզեր այցելելու համար և այլն»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Հարցվածներից ոմանք ընդհանրապես դեմ արտահայտվեցին դրամաշնորհային ծրագրերին՝ համարելով դրանք ժամանակակից գաղութացման տեսակներից մեկը:

«Ընդհանրապես ես համարում եմ, որ Էս գրանտեր տալը նոր կոլոնիզացիայի տեսակ ա, որովհետև ինչ-որ մեկը ստանում ա միլիոններ ու քեզ մի երկու գրոշ տալիս ա, որ գնաս քո երկրում մի բան փոխես: Բայց մյուս կողմից՝ Էդ ամեն ինչն ունի երկու երես. եթե դրանք չլինեն, ոչ մի անգամ դու չես կարա downgrade կամ upgrade անես ինչ-որ մեկի աշխատանքը կամ իդեան. պետք ա համադրես Էդ ամեն ինչը, որովհետև Էն Էլ ա կարևոր, Էն Էլ: Վաբշե, լավ ա, որ Էդքան դոնորներից կախված չլինի, ինչքան որ դու կարողանաս մասնավոր ներդրողներ գտնես կամ ինչ-որ self-sustainability գտնես, որ դոնորներից կախված չլինես, որ դու ինչքան ուզենաս կարանաս անես քո գործը»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Նախաձեռնությունների ներկայացուցիչներից շատերը ընդհանրապես դեմ են ֆինանսական փոխհատուցմանը իրենց կողմից իրականացվող գործողությունների և միջոցառումների համար:

«Փողը ինքը պարագիտացնում ա. երբ որ դու փող ես ունենում, դու սկսում ես վարձել մարդկանց, outsource անել. իրանք գործ են անում, դու ես ունենում ռեսուրսային զարգացում: Դրա համար մեծ գումարներով առհասարակ՝ թե՛ լինի բիզնես ծրագիր, թե՛ լինի ինչ-որ միջոցառում, ես դրան դեմ եմ: Պարագիտանում ա մարդը օրինակ, եթե ես տեսնում եմ, որ փողը կա ու ես չեմ կարողանում Էս ինչ բանը անել, ես գտնում եմ մասնագետին, ու ինքը դա անում ա: Բայց դա չի տալիս ինձ զարգացման ոչ մի հեռանկար, իսկ սենց ես ինքնուրույն կգտնեմ ռեսուրսներ, կսովորեմ, հետո արդեն կսովորացնեմ ինչ-որ մեկին, որ ինքը ինձ օգնի, բայց արդյունքում ես ինչ-որ մեկին Էլ նաև ներգրավում եմ Էս բանի մեջ: (անհատ ակտիվիստ, Երևան)

Դոնոր - դրամաշնորհառու հարաբերությունները անհատ ակտիվիստների համար դիտարկվում են որպես զուտ իշխանական հարաբերություններ:

«Ընդհանրապես դոնորի հետ աշխատանքն ի սկզբանե նշանակում ա խնդիր, որովհետև դոնոր և գրանտ հայցող Էդ փոխհարաբերություններն ի սկզբանե հիերարխիկ են, որովհետև մեկը դիտվում ա որպես փող տվող և իշխանություն ունեցող, ձայնի իրավունք ունեցող, իսկ մյուսը՝ որպես կատարող, ում համար կարևոր Է Էդ գումարը, և դեպքերի մեծամասնությունում կատարողները կատարում են նաև դոնորների ցանկությունները կամ պարտադրանքները, առաջարկությունները և այլն, որովհետև իրանք գտնվում են Էդ հիերարխիայի ստորին հատվածում: Հետևաբար, դոնոր- գրանտ ստացող դասական մոդելն արդեն իսկ խնդրահարույց ա: Եթե մշակվեր որոշումների կայացման մեխանիզմ, որտեղ կոնկրետ մի քանի մարդիկ իրանք չեն որոշում, թե ով ա ստանում գրանտը և ով չի ստանում, այլ ինչ-որ մեխանիզմով ա դա իրականացվում, ապա Էդ կոնցեպտուալ խնդիրը կլուծվեր: Համաշխարհային մակարդակով կան երկու- երեք կազմակերպություններ, որոնք նման կերպ են իրականացնում, որտեղ գրանտի դիմողներն իրանք են որոշում, թե ով ա ստանալու գումարը»: (անհատ ակտիվիստ, Երևան)

«Նաև շատ դոնորներ մտածում են, որ եթե իրանք դոնոր են, իրանք շատ խելացի են, ինչը շատ խնդալու ա: Էդ դոնորական համակարգն ամբողջովին արտացոլում ա Էդ գաղութատիրական համակարգերը. ոնց ա արևմուտքից ինչ-որ մեկը գալիս ու քեզ բացատրում, թե դու ոնց պիտի աշխատես... այսինքն՝ դոնոր-գրանտ ստացող Էդ հարաբերություններն ի սկզբանե շատ խնդրահարույց են»: (անհատ ակտիվիստ, Երևան)

«Հիմնական բարդությունը Էդ ա էլի, որ կոնկրետ ուզում ես անես, բայց քեզ դնում են սահմանափակ՝ թե՛ թեմաների մեջ, թե՛ ռեսուրսների օգտագործման մեջ... Հասկանում եմ իրանց, բայց երբեմն, ծրագիր անելիս դու զգում ես, որ մարդիկ այլ բանի կարիք ունեն ու դու ուղղակի փոփոխություն չես անում, որովհետև քո բյուջեով դոնորը տենց բան չի նախատեսել: Օրինակ՝ պրոյեկտորը թանկ ա, ու երբ որ ուզում ես ֆիլմեր ցուցադրես՝ չի ստացվում, որովհետև չունենք ֆինանսավորում դրա համար, ունենք տարածքի խնդիր և այլն: Դրա համար բարդ ա գտնել դոնոր, որը և՛ տարածք կֆինանսավորի, և՛ գույք»: (նախաձեռնության ներկայացուցիչ, Լոռու մարզ)

Մասնավորապես այն հարցվողները, ովքեր ներգրավված են նաև հետազոտական աշխատանքներում, նշում էին նաև հայաստանյան համատեքստից դուրս ծրագրեր առաջարկելը՝ որպես դոնորների կողմից դրվող պահանջ:

«Արհեստական՝ մեր կոնտեքստից չբխող թիրախավորելը, օրինակը դրա չասեմ, բայց, փոխանակ մենք տեսնենք մեր իրականության իրական խնդիրները, այսինքն՝ կանայք ի՞նչ խնդիրներ ունեն, ինչո՞վ են հետաքրքիր, շատ կազմակերպություններ թիրախավորում են կանանց շարժումներ ստեղծելու հնարավորությունները, LQFS կանանց թիրախավորելու անհրաժեշտությունը: Ինձ՝ որպես հետազոտող, Էս կարգի վերացարկված իրականություն... Ես հասկանում եմ, որ հիմա հետազոտական դաշտը գնում ա դրան ու դա ինձ միշտ ա նյարդայնացրել, որ մենք փորձում ենք գտնել Էքսկյուզիվ, քիչ տարածված, կետային խնդիրները, դա անտրոպոլոգիայի մեջ էլ ա Էդպես, օրինակ՝ ամբողջ Հայաստանի բնակչությունը թողած՝ մենք կարող ա գնանք հետազոտենք

Մոլոկաններին, բայց 3 միլիոն մարդ տառապում է, ապրում է և չի կարողանում ապրել, բայց մենք չենք ուզում տեսնել: Դրանք շատ ստանդարտ խնդիրներ են»: (անհատ հետազոտող, ք. Երևան)

Այնուամենայնիվ, հետազոտության մասնակիցների շրջանում հիմնական դժգոհությունը **ծրագրի առաջարկին դիմելու բարդ գարծընթացն է և չափազանց** մանրամասն հաշվետվություններ տրամադրելը, ինչպես նաև դոնորների կողմից դրվող անիրատեսական պահանջները:

«Խնդիր ա դոնորի պրիորիտետները, երբ որ քո պրիորիտետների հետ չի բռնում ու Էտի հիմնականում Էն ժամանակ ա, երբ որ դոնորը ինքն ա քեզ բռնում ու ասում ա՝ «Եկե՛ք ծրագիր անենք...»: Ու, ասենք, իրանք կարող ա force անեն քեզ communicate անես Էն կազմակերպությունների հետ, ում հետ դու նույն արժեքային համակարգը չունես, բայց հիմա ստեղ պետք ա դնես բանի մեջ՝ դու ուզում ես գումարը, որ քո թիմին ինչ-որ մի բանով օգնես, թե՞ Էդ արժեքները պահելը. Էդ մի քիչ դիլեմա ա առաջացնում իրականում»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

«...երկրորդը Էդ բյուրոկրատ դոնորներն են, որ իրանք ամեն մի բան փորձում են անեն քո կյանքը դժոխք սարքելու համար: Իրանք Էդքան care չեն անում, թե դու ի՞նչ ես անում իրականում, ինչքան որ իրենց հաշվետվությունները նորմալ լինի: Ու, ասենք տենց մի հատ դոնոր ունենք, որ ամեն ամիս մենք իրան narrative report ենք տալիս՝ ամեն ամիս: USAID-ն համեմատաբար ավելի լավ ա, քան, օրինակ Եվրոմիության բաները, USAID-ն գոնե հստակությունը կա՝ «...Էս սենց ես անում, Էս սենց ես անում...»: Ի սկզբանե իրանք իրանց հստակությունը դնում են» (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան):

Հատկապես մարզային կազմակերպությունների ներկայացուցիչները որպես մեկ այլ խնդիր նշեցին **դրամաշնորհներ գրելու հմտությունների պակասը**:

«Մեր ամենամեծ պրոբլեմը դրամաշնորհ գրելու հմտությունն ա: Մենք առաջին անգամ ԱՄՆ դեսպանատան կողմից մերժվեցինք ժուռնալիստիկայի ծրագրով, բայց մեկ ամիս հետո, երբ պատասխանատուները եկան մեզ մոտ և մենք պատմեցինք, թե մենք ինչ ենք ուզում Էդ ծրագրով, իրենք զարմացած էին և ասում էին, որ ինչ որ մենք պատմում և ասում էինք, մենք դա չէինք գրել ծրագրում: Այսինքն, խնդիր ա, որ մենք պրոֆեսիոնալ ձևով չենք կարողանում Էդ հայտերը լրացնենք: Էդ իրականում մեր թերություններից մեկն ա: Անցյալ տարի արդեն 2 անգամ դիմել ենք ԵՄ և երկու անգամ Էլ մերժվել ենք, դա Էլ շատ մեծ խնդիր ա, որովհետև, մյուս կողմից, ԵՄ-ն չի կարա իմանա, թե մենք ինչքան լավ կազմակերպություն ենք, եթե դու չես կարողանում ինքդ քեզ ներկայացնել: Ու ֆոնդահայթաթման խնդիր ունենք մենք, որովհետև Հայաստանում մեթոդները փոխվել են, ձևերը փոխվել են: Հայաստանում ոչ մեկ չի մտածում, որ տենց միջոցառումներ կազմակերպի, որտեղ հրավիրեն դրսից տենց դոնոր կազմակերպությունների՝ համաժողովի պես, որ լավագույն փորձերն ու առաջարկները ներկայացվեն: Դու հանդես գաս քո առաջարկներով, որ դոնորը հետաքրքրված ա, նա քո հետ կապի մեջ մտնի, դու Էլ փորձես իրա հետ

աշխատես ու զարգացնես էդ հայտը»: (կազմակերպության ներկայացուցիչ, Սյունիք)

Բարդեցված և երկար հաշվետվությունները ևս նշվեցին որպես ավելորդ դժվարություն, ինչին կազմակերպությունները պարբերաբար բախվում են:

«Հաշվետվությունները: Էլի՛, դոնորներ կան, որ պահանջում են շատ մանրամասն չեկերի scan արած տարբերակները, ստեղ գրած, ընդեղ գրած, որ իրականում ստացվում ա (մանավանդ, եթե ծրագիրը փոքր ա), որ դու ավելի շատ զբաղվում ես ոչ թե աշխատանքով, այլ՝ օմպեո-ներով, ու դա խնդիր ա: Ոչ միայն մենք, Էլի շատ կազմակերպություններ էդ մասին խոսել են...» (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

«... ուզում են մարդկանց ցուցակներ, ու էդ չպիտի փոխվի»: Հնարավոր չի, որովհետև չկա տեղեկ ծրագիր, կամ էլ պիտի ծանոթ-բարեկամի վերցնես, որ համոզված լինես, որ իրանք քեզ չեն թողնի, բայց մենք երբեք տեղեկ չենք աշխատում: Մանավանդ, երբ նոր գյուղ ես գնում, դու ուղղակի չես կարա: Հիմա էլ շատ-շատ ա միգրացիան, ու էդ մարդը թողեց-գնաց, գնաս հետևից Ռուսաստան ու իրան հետ բերե՞ս... Ի՞նչ կարաս անես, ոչ մի բան չես կարա անես... Այսինքն՝ դա ուղղակի աբսուրդ ա ստացվում, Էլի, բայց, կան դոնորներ, որոնք որ շատ...»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Խնդրահարույց են նաև ընդհանրապես ծրագրային **արդյունքների ներկայացման պահանջները:**

«Գիտեք՝ տարբեր դոնորների հաշվետվությունների պահանջները տարբեր են լինում, բայց ունենում ենք դժվարություններ: Ֆինանսական մասով երևի չէ, որովհետև լավ մասնագետներ ունենք, ովքեր ֆինանսական թղթաբանությունը լավ են անում, բայց ծրագրային մասով ենք միշտ պրոբլեմներ ունենում: Մեր ամենամեծ թերությունը միշտ դա ա եղել, որ մենք շատ բան անում ենք, բայց գրում ենք քիչ բան, այսինքն՝ շատ գործ ենք անում, բայց դրա մասին գրում ենք շատ հակիրճ մի բան, որը որ կարող ա բավարար չլինի դնորի համար»: (կազմակերպության ներկայացուցիչ, Սյունիք)

Սակայն հարցվողներից քչերն են դոնորների մոտ բարձրաձայնել իրենց անհանգստացնող հարցերը՝ մտավախություն ունենալով, որ կզրկվեն դրամաշնորհներից:

«Լավ կլինի, որ նաև գումար ստացողներն էդ մասին բարձրաձայնեն, որովհետև շատ հաճախ իրանք վախենում են, որ իրանցից կհրաժարվեն ու փողը կտան ուրիշներին, իսկ էդ գումարն էնքան կենսական նշանակություն ունի իրանց կազմակերպության համար, որ իրանք ուղղակի էդ ամեն ինչը պատրաստ են կուլ տալ»: (կազմակերպության ներկայացուցիչ, Սյունիք)

Այդ առումով հատկանշական է հարցազրույցներից մեկից մեջբերումը՝

Արդյո՞ք երբևէ բարձրաձայնել եք Ձեր մտահոգությունները դոնորների համայնքի մոտ: Եթե ոչ, ապա ինչու՞: Եթե այո, ապա ի՞նչ արձագանք եք ստացել:

Ես վերջերս ըստե՛ս բան եղել ա... ու համարյա լավ չի վերջանում՝ կռիվ-դավ ա էլի ստացվում, չգիտեմ, երբ որ դոնորը խցկվում ա քո կազմակերպական գործունեության մեջ, Էդ հե՛չ լավ չի:

Բավարարված եք արդյոք պատասխանով: Եթե ոչ, ապա ինչու՞:

ՉԷ՛, մի քիչ ավելի Էգոիստական բան ունեն, որ իրանք էլ իրանց կազմակերպության ռեպուտացիայի մասին են մտածում՝ Էդքան էլ բավարարված չեմ: Ու, կան շատ լավ դոնորներ՝ շատ flexible դոնորներ ու Էդ հիմնականում Էն կազմակերպություններն են, որ հենց քո ոլորտում են աշխատում: Իրանք, որ անցել են դրա մեջից, իրանք ասում են՝ «Ok, report-ը չե՞ս հասցնում տաս, ոչինչ, դու գնա քո case-ի հետևից...», ըստե՛ս լավերն էլ կան, բայց քիչ են, ու, իրանց փողերն էլ քիչ են:

Իրավիճակը բարդանում է նաև նրանով, որ դրամաշնորհառուները շատ հազվադեպ են հնարավորություն ունենում հանդիպել դոնորներին և չեն ցանկանում տարվա մեջ մեկ-երկու հանդիպումները վերածել բողոքների և դժգոհությունների քննարկման: Այս խնդիրը հատկապես հատկանշական է մարզային կազմակերպությունների համար:

«Դոնորին հանդիպելու առիթներ շատ դժվար ու քիչ են լինում, բայց ես կուզեի, որ գոնե երկու ամիսը մեկ անգամ կազմակերպե՛նք տե՛սց հանդիպումներ, որովհետև, մանավանդ Երևանում իվենթներ շատ են լինում, գնում են մարդիկ, իսկ մարզերի համար շատ դժվար ա: Գոնե տե՛սց մի միջոցառում պիտի լինի, որ գաս, հանդիպես, բարձրաձայնես քո խնդիրների մասին: Ես առումով շատ-շատ դժվար ա մարզերում»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Հաշվի առնելով բոլոր այս դժվարությունները, հարցվողները չափազանց կարևորում են **ճկուն հիմնադրամների առկայությունը, որը նաև կխրախուսի նոր ստեղծվող կազմակերպություններին և նախաձեռնություններին:**

«Այսինքն, լավ կլինի, որ լինի մի դոնոր կազմակերպություն, որ ինքն ունենա ճկունություն, տեսի, թե որոնք են բացերը և կարողանա հատկացնել գումարներ»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

«Հա՛, իհարկե, կան ֆոնդեր, որոնց դիմելու պրոցեսը բավականին բարդ ա: Հետո, Էնդեղ խնդիր կա նաև ուրիշ բաների՝ ստացվում ա Էդտեղ փակ շրջան, որովհետև եթե դու ուզում ես ստանալ մեծ գումար, կարող ես մեծ ծրագիր գրես, բայց քո background-ի, քո պատմության մեջ չկա Էդ գումարը, այսինքն՝ քո տարեկան շրջանառությունն ավելի ցածր ա, քան Էն գրանտը, որին դու հավակնում ես, բայց դու ունես հնարավորություն ու պոտենցիալ դա իրականացնելու, բայց դու չես կարա ապացուցես, որովհետև քո ապացուցելը Էդ քո ֆինանսական պատմությունն ա: Ու Էդտեղ նոր կազմակերպությունները շատ ու շատ տուժում են... Ես դրա համար առաջարկում եմ՝ ստեղծել հիմնադրամ սկսնակների համար, որպեսզի իրանց հնարավորություն տալ, որ իրանք սկզբից գոնե մի քիչ ոտքի կանգնեն ու կարողանան հետագայում արդեն շարունակել: Եստեղ գուցե ավելի քիչ ռիսկեր կան՝ դաշտը պառակտելու, որովհետև ձեր առաքելությունը կլինի Էդ սկսնակների օգնությունը, որովհետև հենց սկսնակն

ունի և՛ աշխատանքի կազմակերպման, և՛ գիտելիքի, և՛ օֆիս գտնելու ու պահելու բաներ»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ

Հարցվողների մեծամասնության կարծիքով կանանց հիմնադրամները կարող են շատ մեծ դեր խաղալ կանանց շարժմանը աջակցելու տեսանկյունից, ինչպես նաև նպաստել կանանց կազմակերպությունների միջև անհամաձայնությունների և կոնֆլիկտների լուծմանը: Ըստ հարցվողների նմանատիպ հիմնադրամը կարող է շատ լուրջ կատալիզատորի դեր խաղալ հայաստանյան ֆեմինիստական շարժման համար:

«Իրականում շատ կարևոր ա, մանավանդ, որ էս քաղաքական իրավիճակում, երբ որ կնատյացությունը... իրականում շատ կարևոր ա իրանց գոյությունը: Նաև կարևոր ա մեր ներսում, որովհետև, իմ փորձից ելնելով, փորձերը շատ տարբեր են ու Էդ փորձերի տարբեր լինելու պատճառով շատ անհամաձայնություններ են լինում, բախումներ են լինում, նաև դրանից շատերն առանձնանում են, իսկ մեզ ընդհանրապես դա պետք չի, պետք ա որ ավելի համախմբված լինենք: Գուցե դա առիթ լինի, որ մեկս մյուսին աջակցենք, օգնենք: Պարտադիր չի ֆինանսապես, այլ գիտելիքներով, փորձառությամբ»: (Նախաձեռնություն ներկայացուցիչ, Երևան)

«Ես պատկերացնում եմ, որ Էդ ֆոնդը շատ կարևոր շղթա է առաջացնելու, ահագին սոլիդարությունն ա բարձրացնելու: Օրինակ՝ Վրաստանում Women's Fund of Georgia-ն ահագին սոլիդարության խնդիրներ կարողացավ լուծել՝ կանանց խմբերի միջև, LQFS խմբավորումների միջև, որոնք որ մեռան իրար քննադատաբեր, իրար կծելով, բայց Էդ ֆոնդը ինչ-որ առումով դաշտում առաջացրեց Էդ սոլիդարությունը: Այսինքն, ես լիովին դրական եմ նայում ֆոնդի առաջացմանը, բայց պետք ա շատ լավ տեղյակ լինել, թե ինչ խնդիրներ դա կբերի՝ հատկապես, եթե իրա ձևավորման հիմքն արդեն խարխուլ լինի ու մասնակցային չլինի, դրա համար պետք ա լուրջ մտածել Էդ հարցի շուրջ»: (Նախաձեռնություն ներկայացուցիչ, Երևան)

«...ինքը շատ լավ գաղափար ա, ու լավ կլինի, որ մեզ մոտ Էլ լինի տենց բան, որովհետև, կոպիտ ասած, Էլ սար ու ձոր չենք ընկնի, որովհետև կիմանանք, որ կոնկրետ ուր ա պետք դիմել ու Էդ դեպքում ծրագրերն ավելի շատ կլինեն, որովհետև ինչքան Էլ մենք կամավորական ինչ-որ բաներ անենք, ամեն դեպքում ֆինանսական դժվարություններ միշտ ունենում ենք: Էդ շատ կարևոր ա ու շատ լավ կլինի, որ ֆոնդ լինի»: (Նախաձեռնություն ներկայացուցիչ, Լոռու մարզ)

Հարցվողների մեծամասնության կարծիքով Հիմնադրամը միանշանակ կնպաստի Հայաստանի համար գենդերային և կանանց իրավունքների ոլորտում հրատապ հարցերին շատ ավելի արագ արձագանքմանը, քանի որ բնականաբար ավելի տեղեկացված կլինի հայաստանյան հիմնախնդիրներից և կազմակերպությունների կարիքներից:

«Դե շատ լավ բան ա՝ բնականաբար, մանավանդ, եթե, այսպես ասած, urgent Ֆոնդեր լինեն, օրինակ, եթե դու ՀԿ ես, ունես ծրագրեր, բայց ինչ-որ բան ես ուզում անես շտապ, որը շատ կարևոր ա դա անել և կարճ ժամանակում կարաս

ստանաս գումար, դա շատ լավ բան ա: Եվ տենց urgent ֆոնդեր տարբեր տեղեր կան հիմնականում և շատ լավ փորձ ա դա, երբ որ դու 5-10 օրվա մեջ կարաս գրես, ստանաս գումար կամ մի ամսվա մեջ, որ գիտես, որ սա ա պետք անել: Թեկուզ ինչ-որ փոքր գումար. այն, ինչ որ չի հերիքում քո ծրագրին, Էլի, ասենք՝ որպես քո Funding կամ չգիտեմ: Այսինքն՝ դա շատ լավ բան ա իրականում»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

«Էդ շատ լավ բան ա, եթե մեր պետությունը չունի Էդ միջոցները, որ օգնի կանանց կազմակերպություններին, և տենդենցը տանում ա դրան, որ առանց ֆոնդերի հնարավոր չի, նշանակում ա, որ պետք ա մտածել այլընտրանքային հնարավորությունների մասին: Էդ նույն հիմնադրամը ինքը կարա լինի դրսում ապրող հայ և արտասահմանցի գործարարներ, կարան լինեն կանանց կազմակերպություններով հետաքրքրվող Էլի կազմակերպություններ, բարեգործական կազմակերպություններ և անհատներ: Ես բոլորը կարող եմ դառնալ հենց Ես նախաձեռնող խումբը, որը կստեղծի Էդ հիմնադրամը, որը կունենա իրա առաքելությունը՝ աջակցելու Հայաստանում կանանց կազմակերպություններին: Հրաշալի գաղափար ա»: (կազմակերպության ներկայացուցիչ, Սյունիքի մարզ)

«Հա՛, ինչ լավ կլինի՝ մենակ շնորհակալ կլինեի, մանավանդ մեր շրջանի համար՝ շատ շնորհակալ կլինեի: Իրոք, եթե Էդպիսի բան լիներ, որ իմանաս, որ կողքիդ կա աջակից՝ հանձնիս ձեր կազմակերպության, ապա ամեն ինչ լավ կլինի: Ես չեմ ասում, որ ամեն ծրագիր պետք ա հավանության արժանանա ու ֆինանս գտնի՝ մենք կներկայացնենք, դուք կհավանեք՝ կֆինանսավորեք... Դա կլինի նաև ի հպարտություն մեզ. ինչի՞ անընդհատ դրսից կախում ունենանք, ինչի՞ անընդհատ դրսի մարդը գա ու անի իրա ծրագիրը: Որ լինի տենց բաներ տեղական ֆինանսավորմամբ, մենք Էլ մեզ լավ կզգանք, որ մեր երկիրն Էլ ա մեզ աջակցում»: (կազմակերպության ներկայացուցիչ, Արագածոտնի մարզ)

Բացի այդ, ըստ հարցվողների, մեծ դոնորները հիմնականում գումարներ են տրամադրում շահերի պաշտպանության և քաղաքական փոփոխությունների համար, ինչը գրեթե անհնար է՝ եթե չկան որակյալ ծառայություններ խոցելի խմբերի համար: Այսօրվա պայմաններում կանանց ՀԿ-ները շատ այլ գործերի հետ մեկտեղ ստիպված են նաև տրամադրել ծառայություններ կանանց տարբեր խմբերի համար, քանի որ պետությունը այդ գործառույթը չի իրականացնում (օրինակ, ապաստարանների տրամադրում, թեժ գծեր, հոգեբանական, իրավաբանական ծառայություններ և այլն): Կանանց հիմնադրամը, կարող է լրացնել նաև այդ բացը՝ հզորացնելով կանանց տարբերի խմբերի համար ծառայություններ տրամադրող կառույցներին:

«Service providing-ը՝ հոգեբան, իրավաբան, սոցիալական աշխատող, մասնագիտական թիմ, որում լինի նաև բժիշկ, մեկ Էլ կանանց կարողությունների զարգացումը: Ուղղակի, անկեղծ եմ ասում՝ advocacy-ի համար միշտ Էլ կարաս լիքը փող ճարես, բայց service-ի համար չեն տալիս: Իրանք փոփոխություն են ուզում միանգամից բերեն ու իրանց թվում ա, թե, եթե քաղաքական մակարդակում փոփոխություն արեցին՝ բանը կփոխվի, բայց ստեղ տենց չի, ստեղ չի աշխատում: Ու, իրանք ավելի cost effectiveness-ի տեսանկյունից են նայում Ես փողը Էսքան տալիս են մի հատ մարդու համար, բայց ավելի շատ փող

կարան տան լիքը մարդու համար: Հիմա, օրինակ մենք ունենք Գենդերային հավասարության օրենք, ու՞մ ա պետք էդ օրենքը»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Տեղական կանանց հիմնադրամ ունենալու առավելությունը, ըստ հարցվողների, կայանում է նաև նրանում, որ **Հիմնադրամը շատ ավելի ակտիվ ներգրավված կլինի տեղական կազմակերպությունների գործունեության մեջ:**

«Եթե ֆոնդը ստեղծվի, ես կուզեի, որ մինչև դրամաշնորհ տալը կատարվեր հետազոտություն, ու էն մարդիկ, ովքեր ներառված կլինեին հոգաբարձուների խորհրդում, աշխատեին էն մարդկանց հետ, ովքեր ուզում են որոշակի բաներ անել և աջակցություն ստանալ, որովհետև որ ուզում ես ինչ-որ բան անես, ունենում ես երկու խնդիր՝ կամ լավ չես պատկերացնում ինչ անես, կամ պատկերացնում ես ու ուղղակի չգիտես, թե ոնց անես էդ ամեն ինչը: Էլի պայմանականորեն կոչենք ֆասիլիտատոր. ես կուզեի, որ նրանք ոչ թե տային տուփ ու ասեին, որ՝ «Ես փողը վերցրեք ու ինչ ուզում եք արեք, ինձ մենակ թե իմ կտրոնները բերեք, մի երկու հատ նկար բերեք, որ տեսնեմ, թե ոնց եք արել...», այլ կատարվի կենտրոնացած աշխատանք: Երբ որ դու խնդիր ունենաս դոնորի հետ, իրանք օգնեն քեզ որոշակի հմտություններով, ոչ թե ասեն, որ դու լավ չես աշխատում: Ստեղ մի քիչ բան էլ կա, թե դու ինչ ուղղությամբ ես ուզում գնաս... Նույն մոնիթորինգի բաները դու կարաս նենց մարդկանց հետ անես, որ կոնկրետ քո ուզած բաները պատասխանեն... Էդ մի քիչ օբյեկտիվությունը նվազեցնում ա, իսկ եթե լինեն տարբեր ու բազմազան մարդիկ, ավելի անաչառ կլինի»: (նախաձեռնություն ներկայացուցիչ, Լոռու մարզ)

Շատերի համար տեղական դոնորային հիմնադրամ ունենալը կարող է նաև **դյուրացնել դրամաշնորհներին դիմելու գործընթացը**, քանի որ ոչ բոլոր կազմակերպությունները ունեն հնարավորություն պատրաստել անզլերեն լեզվով բարդ հայտեր:

Տղամարդկանց միգրացիայի բարձր աստիճան ունեցող մարզերից հարցմանը մասնակցած կազմակերպությունների ներկայացուցիչները նշում էին նաև Հիմնադրամի գործունեության կարևորությունը հատկապես այն գյուղերում, որտեղ մեծ մասը կանայք են՝

«Ես ավելի շատ կանանց ոլորտով... Կանանց հզորացումը՝ թե՛ լինի տնտեսապես, թե՛ լինի հոգեպես, մեկ էլ կանանց դերի բարձրացումը, որովհետև գիտեք ո՞նց, ոնց ասում են՝ կինը պարանոցն է՝ կինը ոնց կշարժի, մեծ մասամբ նաև ասում են, որ տղամարդը դրսի պատն է, որ գնում է արտագնա աշխատանքի, իսկ կինը պետք է հզոր լինի: Կինը մտնում ա գյուղապետի մոտ ջրի հարց լուծելու, հող ա ուզում վերցնի, ամաչում ա... Տրակտորի վարորդը տղամարդ ա, ո՞նց գնա ասի, որ գա իրա հողն էլ վարի, ամոթ ա՝ տեսնողներն ի՞նչ կասի: Կարևորում եմ այ էս դերի բարձրացումը, որովհետև ընտանիքում ինչ էլ լինում ա՝ կինն էլ ա մասնակցում հարցի լուծմանը: Իրո՞ք, մենք սենց կատակում ենք, որ էս սեզոնին տղամարդ չենք տեսնի գյուղում՝ կա՛մ հիվանդ կտեսնենք, կա՛մ ծեր: Լավ, բա էդ կինը ի՞նչ անի՝ ցանելու սեզոնն ա, ինքը ո՞նց գնա ասի, որ գան ցանեն իրա հողն էլ: Մենք պետք ա իրան հզորացնենք, որ ինքը ինքնավստահություն ձեռք բերի ու գնա իրա հարցերը լուծի: Այ սրանք՝ դերի բարձրացում, ինքնավստահության բարձրացում, առաջնորդության

հմտությունների ձեռքբերում՝ կին առաջնորդների վերապատրաստում»:
(կազմակերպության ներկայացուցիչ, Արագածոտնի մարզ)

Հարցված 35 մասնակիցներից միայն մեկ կազմակերպության ղեկավար դեմ է արտահայտվել Հայաստանում կանանց Հիմնադրամ ունենալու գաղափարին:

«... կարա շատ լավ մեկնաբանի, որ ինքը լավ գործ ա անում, ինքը օգնումա էդ չգիտեմ ում կանանց կազմակերպություններին, ու նորից պետք ա գումարներ գտնի ու էդ պետք ա report անի, թե ինքը ոնց օգնեց էդ կազմակերպություններին: Իսկ ինքը ո՞նց ա օգնելու էդ կազմակերպություններին՝ գրանտներ՞ր ա բաժանելու, կյանքում տենց գործ չի արվի»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Հայաստանում կանանց հիմնադրամի գործունեությունը կանանց կազմակերպությունները և նախաձեռնությունները տեսնում են նախևառաջ **համերաշխության (սոլիդարության) ապահովման և կազմակերպությունների կարողությունների զարգացմանը աջակցելու մեջ:**

Կանանց հիմնադրամի **աշխատանքային ուղղությունները**, ըստ հարցվողների, պետք է ներառեն հետևյալ ոլորտները՝

- Հակամիլիտարիստական ծրագրերի իրականացում:
- Ելնելով կազմակերպության/նախաձեռնության կարիքներից մասնագիտական TOT-ների (trainig for trainers – վերապատրաստում վերապատրաստողների համար) իրականացում:
- Կանանց և գենդերային հիմնախնդիրների վեաբերյալ հետազոտությունների իրականացում:
- Ակտիվիստների և ՀԿ-ների ներկայացուցիչների համար մասնագիտական այրումից դուրս գալու ծրագրերի իրականացում, ինչպես նաև ինքնազարգացմանը և ինքնախնամքին ուղղված ծրագրերի աջակցություն:
- Աջակցություն ֆեմինիստական թարգմանությունների իրականացման գործում:
- Աջակցություն Հայաստանում “տաբու” համարվող թեմաների վերաբերյալ ծրագրերի իրականացմանը՝ սեռականության մասին իրազեկվածության բարձրացման, սեռական բռնության սվազեցմանն ուղղված:
- Կանանց և աղջիկների համար բիզնես հմտությունների զարգացման ծրագրերի իրականացում, սոցիալական ձեռներեցության խթանում:
- Աջակցություն նոր ստեղծվող կանանց խմբերին/նախաձեռնություններին ռազմավարական պլանավորման և առաջնայնությունների ձևավորման հարցերում:
- Սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում, հատկապես մարզերում, ծրագրերի իրականացում:
- Բանավոր պատմությունների հավաքագրում տարբեր խմբերի կանանց շրջանում:
- Կանանց կազմակերպությունների/նախաձեռնությունների համար ուսուցողական այցերի կազմակերպում այլ երկրներ նմանատիպ կազմակերպությունների և ֆեմինիստական խմբերի գործունեությանը ծանոթանալու նպատակով:

- Աջակցությունն ֆեմինիստական արվեստի, այդ թվում նաև քուլի ֆեմինիստական արվեստի ոլորտին և դրա ներկայացուցիչներին:

Հետազոտության ընթացքում առաջարկություն եղավ նաև, որպեսզի Հիմնադրամը տրամադրի գումարներ **կանանց ինքնագարգացման համար**, օրինակ, օտար լեզուներ կամ որևէ այլ անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու համար, հատկապես, 40 անց կանանց համար, որոնք դուրս են մտնում աշխատաշուկայից:

«Ես շատ-շատ կուզեի, որ կանանց իսկապես դրամաշնորհներ տրվեին՝ ինքնագարգացման: Օրինակ ես, Էքսա՞ն տարի, չեմ կարողանում ո՛չ անգլերենս գարգացնեմ, որովհետև ես ստանում եմ 120000 դրամ ախատավարձ Կոալիցիայից, ես ո՞ր մասը իմ ընտանիքին տամ, ո՞ր մասը գնամ զուտ պարապելու... Ժամանակ չտրամադրեցի, բայց գումարն էլ չտրամադրեցի. Էդ նաև ռեսուրս ա: Եվ նաև ուսանողական վարկեր տան, թեկուզ հետագայում նաև իրանց կառույցում աշխատելու տեսանկյունից կամ Էդ կառույցը զարգացնելու տեսանկյունից՝ ուղարկեն սովորելու մարդկանց»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Հետաքրքրական է և որոշ առումով ահագանգող, որ Հիմնադրամի առաջնայնությունները քննարկելու ժամանակ հարցվողների մեծամասնությունը մեզ համար անսպասելիորեն (հատկապես ՀԿ-ների ներկայացուցիչներ) նշում էին, որ Հիմնադրամը կլինի գրեթե միակ կառույցը, որ կարող է տրամադրել նրանց մասնագիտական այրումից դուրս գալու միջոցներ (հոգեբանական աջակցություն, բարօրության հմտություններ (well-being), ընդհուպ մինչև ունենալ ֆիզիկական տարածք, որտեղ ակտիվիստները կարող են գալ և ժամանակ առ ժամանակ վերականգնվել): Հատկապես դաշտում երկար աշխատած կազմակերպությունները և անհատները նշում էին, որ ավելի երիտասարդ կադրերին իրենք են օգնում այդ մասնագիտական այրումից դուրս գալու համար, տրամադրում են որոշ հնարքներ և խորհուրդներ, սակայն դաշտում չկա որևէ մեկը, ով կարող է տրամադրել այդ նույն աջակցությունը իրենց:

«Եթե ես ինչ-որ մի հատ խորհրդի կարիք ունեմ, ես վազում եմ L-ի ու Հ.-ի մոտ՝ երկուսի մոտ առանձին, կամ զանգում եմ Մ.-ին: Հիմա, եթե Էքսպերտը պետք ա լինեն Հ.-ն ու L-ն, ես իրանց տեղը գիտեմ... Բայց Էդ ամենաշատը burnout-ի մեջ լինում են արդեն տարեց կազմակերպությունները, իսկ իրանց համար ո՞վ պետք ա Էքսպերտ լինի... Թող Էս ֆոնդը տոմսեր առնի դեպի Եվրոպա կամ Ճով՝ vacation հովանավորի, Միջերկրական ծովը ավելի նախընտրելի ա»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Ըստ կազմակերպությունների և անհատ ակտիվիստների մեծամասնության, Հիմնադրամի առաջնայնություններից մեկը պետք է լինի նաև կանանց կողմից ստեղծված արտադրանքի խրախուսումը և պահպանումը:

«Քանի որ ասում եմ գիտություն, ուրեմն ոչ մի ձև չէի ուզի, որ արվեստը չլիներ ըտեղ, բայց... լավ կլիներ, որ ֆինանսները տրվեին ինչ-որ քննդատական մտքի ստեղծման, ավելի շատ, հա, որ քննդատական միտքը ձևավորվեր ու ավելի տեսանելի լինի Էն, ինչ որ կանայք անում են, տարբեր ձևերով. ինքը կարա գրքի

տեսքով լինի, կարա ֆիլմի տեսքով լինի, կարա հողվածի տեսքով լինի, չգիտեմ...»: (Ֆեմինիստ ակտիվիստ, Երևան)

Յետագոտության ընթացքում հանդիպեցինք նաև այնպիսի կարծիքի, որ կարողությունների զարգացմամբ պետք է զբաղվի ոչ միայն Յիմնադրամը, այլ նաև ֆասիլիտացնի կազմակերպությունների/նախաձեռնությունների միջև գիտելիքների և հմտությունների պարբերաբար փոխանակմանը:

Կանանց **Յիմնադրամի շահառուները**, ըստ հարցվողների, պետք է նախևառաջ լինեն կանայք խոցելի խմբերից՝

«...Էն ամենախոցելի խմբերի աջակցությունը կամ հզորացումը, դրանք կլինեն կանայք, ովքեր որոշակի գաղափարներ ունեն, բայց ռեսուրսներ չունեն, որպեսզի իրականացնեն, բայց նաև լինեն կանայք, ովքեր թե՛ ֆիզիկապես հնարավորություններ չունեն, թե՛ որոշակի փոքրամասնությունների մեջ են, ու ավելի հեռու են Էդ նպատակն իրականացնելուց»: (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Ըստ հարցման մասնակիցների աջակցության առաջնայնությունը պետք է տրվի կազմակերպություններին: Միևնույն ժամանակ, ըստ կազմակերպությունների ներկայացուցիչների, **Յիմնադրամը պետք է լինի հնարավորինս ներառական և հասանելի՝ մարզերում և հեռավոր վայրերում գործունեություն ծավալող կանանց խմբերի համար:**

Ըստ հարցվողների Կանանց Յիմնադրամը պետք է նաև նապաստի այնպիսի նախաձեռնությունների ֆինանսավորմանը, որոնք չեն կարող ֆինանսավորում գտնել այլ տեղերից: Այսպես, ըստ կազմակերպություններից մեկի ներկայացուցչի՝ *«Յայկական տեղական ֆոնդը պիտի շատ զգայուն լինի Էն ուղղությունների, Էն խմբերի նկատմամբ, որոնք դուրս են գրանտային արդյունաբերական համակարգից: Կան խմբեր, որ իրանք կան, որ իրանք մրցունակ չեն արևմտյան ֆոնդերի համար, ու լավ կլինի, որ տեղական ֆոնդը աջակցի իրանց: Ես Էս պահի դրությամբ հիշեցի Էդ երեք ուղղությունը, մեկ էլ որ Էդ տեղական ֆոնդը ֆինանսավորի կոոպերատիվներ, ակտիվիստական կոոպերատիվներ: Էդ կնշանակի, որ տեղական ֆոնդը կստեղծի պայմաններ, որ մարդիկ դուրս գան ֆոնդերի ազդեցության տակից: Օրինակ՝ շատ վաղուց ասում են, որ ԼԳԲՏ կազմակերպությունները ասում են, որ տրանս մարդիկ դուրս են աշխատանքային շուկայից՝ փորձեք մի հատ կոոպերատիվ ստեղծել Էդ մարդկանց համար, որ երբեմն ստիպված չլինեն դիմել իրենց համար ծայրահեղ քայլերի: Ոչ թե անընդհատ դրա մասին խոսացեք, այլ աշխատատեղ ստեղծեք: Եթե տեղական ֆոնդն օգնի աշխատատեղ ստեղծել Էդ մարդկանց համար, դա իսկապես օգնություն կլինի, ու, եթե տեղական ֆոնդերը իրանց աշխատատեղերը տրամադրեն Էդ մարդկանց, Էդ էլ լավ կլինի»:* (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

«Նախընտրելի՝ չեմ կարծում, որ պետք ա լինի, դա պետք ա լինի շատ ճկուն համակարգ՝ կախված ծրագրից, խնդրից, որը բյուրոկրատական ինչ-որ կառույցի չվերածվի, որովհետև ստեղ վտանգ կա, ինքը պետք ա լինի մատչելի, և, բնականաբար, շատ լուրջ հիմնավորմամբ, ցանկացած պրոյեկտ, ցանկացած գումար պետք ա շատ լուրջ հիմնավորված լինի ու կոմպանիական բնույթ չկրի՝

վերցնենք ոչ թե մոդայիկ ուղղություններ, այլ վերցնենք մեր հանրապետությանը բնորոշ խնդիրները, Էլի»: (հետազոտող, Երևան)

«Շատ տարբեր կազմակերպությունների, ու շատ ցանկալի ա, որ ոչ թե իրանք նայեն, թե ովքեր կան դաշտում, այլ հենց իրենք անեն իրենց հետաքննությունը, օրինակ ես շատ կուզեի տեսնեի, թե ուրիշ ի՞նչ մարդիկ կան, բայց ես Էդ ժամանակը չունեմ: Ու, միգուցե իրենք տան տենց խրախուսական իդեաներ, որոնց շուրջը ինչ-որ մարդիկ ուղղակի փորձեին աշխատել իրար հետ: Ու կարելի ա շատ տարբեր տարիքային խմբեր ներառեն, որովհետև կարող ա դրանով շատ հետաքրքիր բաներ լինեն, երբ որ օգտագործվեն իրանց հայացքներն ու իրանց ռեսուրսները»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Որպես թիրախային խումբ նշվեցին նաև **հետազոտողները և գիտնականները**, որոնցից շատ քչերն են այսօր Հայաստանում հետաքրքրված գենդերային հիմնախնդիրներով: Հանդիպեցինք նաև այնպիսի կարծիքի, որ Հիմնադրամը կարող է խրախուսել հետազոտողներին զբաղվել գենդերային հիմնախնդիրներով՝ նրանց ֆինանսական աջակցություն ցուցաբերելով և, հետևաբար, ինչ-որ առումով «ուղղորդելով», որպեսզի զբաղվեն այս թեմաներով:

«Որպես թիրախային խումբ պետք է դիտարկի կազմակերպություններին, նախաձեռնություններին ու կոալիցիաներին, նաև ակադեմիան՝ թող մի քիչ ակադեմիան ֆինանսավորվի: Մեր մոտ խնդիր կա՝ ակադեմիան լրիվ հեռու ա պրակտիկայից, ակադեմիան մնացել ա Սովետի թիվ: Կոնկրետ, թեկուզ արհեստականորեն թող խթանվի Էդ ամեն ինչը՝ «փող կտանք՝ հողված գրի, փող կտանք՝ հետազոտություն արա», թեկուզ արհեստական, բայց ոչինչ, պետք ա»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Ըստ քուիր և ավելի **ռադիկալ ուղղվածություն ունեցող ակտիվիստների**, Հիմնադրամը պետք է խրախուսի Հայաստանում **քննադատական ֆեմինիստական դիսկուրսի տարածմանը**, քանի որ այլ դոկորներ այդպիսի առաջնայնություններ չունեն:

«Էսօր պետք ա ստեղծագործող մարդկանց աջակցել, որովհետև, իրականում արվեստագետներն են միշտ Էդ քննադատական հայացքով, իրանք ավելի ռադիկալ են ու ավելի լավ ա երևում Էլի սիստեմի բոլոր վատ կողմերը: Բայց, երևի, ինձ թվում ա, որ մենք պիտի ամեն ինչ անենք, որ բոլորս ինքնաֆինանսավորվենք. դուրս գանք Էդ ֆինանսավորումից կախված լինելուց, պետք ա փորձել ինքնակազմակերպվել: Եթե Էդ փողերը օգտագործել, ապա օգտագործել նաև նրա համար, որ ինքնակազմակերպվենք ու սեփական տնտեսություն ունենանք ու հրաժարվենք Էդ ֆոնդերին դիմելուց: Բայց, եթե տենց վերցնենք, ամբողջ Հայաստանը ձրի կապրի, ես չգիտեմ՝ ո՞ր կանանց խմբին առանձնացնեմ, տենց անարդար կլինի. կամ պետք ա բոլորը ստանան, կամ պետք ա Հայաստանում գտնվող բոլոր կանայք գումար ունենան»: (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Մարզերում գործունեություն ծավալող կանանց կարծիքով Հիմնադրամը պետք է նպաստի չգրանցված խմբերին, քանի որ վերջիններս ամենախոցելի են և չեն կարողանում իրականացնել իրենց ծրագրերը:

«Հիմնականում էն ա, որ պիտի արդեն գրանցված ՀԿ լինես, ծրագրեր իրականացրած պիտի լինես... Ես հասկանում եմ իրանց մտավախությունը, բայց եղ դեպքում շատ դժվար ա գտնել անհատական մակարդակով դոնորների, որովհետև շատ դոնորներ տարածքով քեզ չեն ապահովում, տալիս են ուղղակի տրանսպորտի ու սնունդի ծախս, որի պատճառով գլոբալ ծրագրեր չես կարողանում անել: Ես ա հիմնականում առաջացնում բարդությունը՝ գտնել նեց դոնոր, որ տարածքն էլ տա, ռեսուրսն էլ տա: Հիմնականում տենց «Ֆրիդան» Էր, որ անում Էր, Ես տարի փորձեցի գտնեմ... կա Զուլիր Տուևը, որը բոլորին խրախուսում եմ, հորդորում եմ, պրոպագանդա եմ անում գնալ այնտեղ. շատ լավ տեղ ա»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

«Հիմնական բարդությունը Էր ա Էլի, որ կոնկրետ ուզում ես անես, բայց քեզ դնում են սահմանափակ՝ թե՛ թեմաների մեջ, թե՛ ռեսուրսների օգտագործման մեջ... Հասկանում եմ իրանց, բայց երբեմն, ծրագիր անելիս դու զգում ես, որ մարդիկ այլ բանի կարիք ունեն ու դու ուղղակի փոփոխություն չես անում, որովհետև քո բյուջեով դոնորը տենց բան չի նախատեսել: Օրինակ՝ պրոյեկտորը թանկ ա, ու երբ որ ուզում ես ֆիլմեր ցուցադրես՝ չի ստացվում, որովհետև չունենք ֆինանսավորում դրա համար, ունենք տարածքի խնդիր և այլն: Դրա համար բարդ ա գտնել դոնոր, որը և՛ տարածք կֆինանսավորի, և՛ գույք: Իրանք անհատական չեն տալիս, որ կարողանաս գրոյից տարածք ստեղծես: Մեր մոտ կա «Խաղաղության եկրիստությունը», որը պատրաստ ա աջակցել, բայց իմ կարծիքով իրանք դա կանեն կամ կիսատ, կամ պիտի ծրագիրը փակվի ու ստիպված լինես փնտրել ուրիշ ՀԿ, իսկ Վանաձորում փնտրել ուրիշ ՀԿ, որ ավելի սենիթիվ ա ու բաց ա տենց թեմաների համար՝ բարդ ա, որովհետև հիմնականում իրանք են, որ կարաս գնաս ինչ-որ մի բան քննարկես ու բան կազմակերպես»: (Նախաձեռնություն ներկայացուցիչ, Լոռու մարզ)

Մարզերի ներկայացուցիչների կարծիքով Հիմնադրամը անպայման պետք է ունենա մասնաճյուղեր մարզերում, քանի որ միայն Երևանում գործունեություն ծավալելը կհանգեցնի նրան, որ Հիմնադրամը կդառնա «Էլիտար» և «անհասանելի» իրական կարիքներին արձագանքելու համար:

«Որ Երևան չեն ասում՝ ներվերս խախտվում ա... Սաղ Երևանում ա՝ ինչի՞, թո՛ղ ուրիշ տեղ լինի, մի հատ չեն ասի, որ թող Տավուշի մարզում լինի, Էդքան առանձնացած ա Էդ մարզը: Ես Լոռու մարզից եմ, բայց չեմ ասում թո՛ղ մեր մարզում լինի, սաղ Երևանում ա, թող դուրս գա Երևանից, ես նախանձ չեմ, բայց ջղայնանում եմ, որ ամեն ինչը Երևանում ա: Մի հատ կինո եմ ուզում նայեմ Լսիր ինձ-ը, ման եմ գալիս՝ չկա, ընկերներիցս գրել են, որ Երևանում դիտում կա: Բայց ես չեմ ուզում հասնեմ Երևան, ձեզ ընի Ձեր Երևանը, ամեն ինչը Երևան ա. պետական կառույցները սաղ Երևանում են, մարդիկ, փողերը, բոլորը Երևանում են, ՀԿ-ները բոլորը Երևանում են: Բայց ստեղ ավելի շատ մարդիկ կան, պրոստո ստեղի մարդիկ հնարավորություն չունեն ինչ-որ բան անելու: Դուրս, դուրս, Երևանից դուրս... Երևանը ոնց որ երկրի մեջ մի հատ ուրիշ երկիր լինի, ամեն ինչ ուրիշ ա... Ա՛յ, որ տարբեր տեղերը հավասար զարգանա, ավելի լավ կլինի»: (կազմակերպության ներկայացուցիչ, Լոռու մարզ)

«... որովհետև դրա կարիքը շատ մեծ ա, և էն պոտենցիալը, էն ձգտումն ու ցանկությունը, որ կա մարզային կանանց ու աղջիկների մոտ, կարող ա ստեղ

ուղղակի չգտնես էլ: Եվ իսկապես պետք ա ընդեղ աշխատել, պետք ա հավասարացնել, որովհետև մենք հիմա էնքան կենտրոնացած ենք, որ իսկապես խեղդվում ենք հիմա Երևանում: Պետք ա ինչ-որ առումով էդ բալասնը տարածել»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Հարցվողների մեծամասնությունը կարևորում է նաև Հիմնադրամի գործունեությունը Լեռնային Ղարաբաղում:

Ընդհանուր առմամբ հարցվողների մեծ մասը համակարծիք են, որ Հիմնադրամը չպետք է խրախուսի նոր կազմակերպությունների ստեղծմանը, այլ աջակցի արդեն դաշտում գործողներին: Միևնույն ժամանակ, կա ակնկալիք, որ **Հիմնադրամը պետք է աջակցի նախաձեռնություններին, պաշտոնապես չգրանցված կանանց և աղջիկների խմբերին և տարբեր ակցիաների իրականացմանը:**

«Ֆոնդը պետք ա համագործակցի արդեն ինչ-որ առումով նաև կայացած, ֆեմինիստական կազմակերպությունների հետ, ու նաև լավ կլինի, որ ինիցիատիվաների հետ համագործակցեր. ոչ միայն օգնի, որ նոր կազմակերպություններ լինեն: Պետք չի Հայաստանում էդքան կազմակերպություններ, պետք ա ավելի ինիցիատիվաներ դեպի»: (անհատ ակտիվիստ, Երևան)

Ավելի երիտասարդ կազմակերպությունների և նախաձեռնությունների կողմից հնչեցվեց նաև այն կարծիքը, որ **Հիմնադրամը պետք է խուսափի համագործակցել սովետական ոճով աշխատող և տարեց ղեկավարներ ունեցող կանանց** կազմակերպությունների հետ՝ թեև դա կարող է խնդիրներ առաջացնել Հիմնադրամի համար, սակայն, ըստ երիտասարդ հարցվողների, այդ տիպի կազմակերպություններին աջակցությունը միանշանակ բացասական ազդեցություն է ունենում կանանց շարժման զարգացման վրա:

«Բայց ինձ թվում ա միակ սահմանափակումը, երևի, իրոք, տարիքայինի վրա կղնեի, բայց էն տեսանկյունից, որ տարիքով մեծ տնօրենների կազմակերպությունների չէի ֆինանսավորի սկզբնական փուլում, օրինակ, ասենք, եթե տնօրենը 80 տարեկան ա, միանշանակ իրանք, ես շատ եմ նկատել, որ պրոբլեմ են ստեղծում. չեն թույլ տալիս, որ իրանց երիտասարդությունը աճի: Էդ սովետական մոտեցում ա: Ու, եթե կազմակերպությանն եմ որոշել տամ, կնայեի, որ ընդեղ նոր եկող մարդիկ բարի գալուստով են էլի, ոչ թե, որ մի քանի հոգի են ու 100 տարի ա էդ մի քանի հոգին են: Էն որ՝ «ես էս կանեմ, էն կանեմ, ես առողջությունից էլ եմ լավ հասկանում, հոգեբանությունից էլ...», այ սենց տիպի կազմակերպություններին չէի տա, ինչքան էլ ուզում ա իրանք ընկերներ լինեին մեզ ու ինչքան ուզում ա խեղճ վիճակում հայտնված լինեին՝ դոնորների տեսանկյունից»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Անդրադառնալով հիմնադրամի կողմից առաջարկվող դրամաշնորհային ծրագրերի իրականացմանը՝ հարցվողները առաջարկում են ունենալ երկու տարբերակ: Առաջինը **դասական բաց հայտարարությունների տեսքով** (open calls) հայտարարություններն են, իսկ երկրորդը՝ Հիմնադրամը ինքը պետք է անընդհատ գտնի նոր կազմակերպություններ և նախաձեռնություններ և դրանց տրամադրի աջակցություն: Ընդհանրապես հայտերի ընդունման համար որոշակի

թեմաներ հաստատելը հարցվողները սխալ են համարում: Հայտերի ընդունման ժամկետների սահմանումը ևս ցանկալի չէ: Այսինքն՝ Հիմնադրամը պետք է հնարավորինս ճկուն և բաց լինի բոլորի համար:

«Ես կարծում եմ, որ թեմատիկ call-եր չպետք ա լինեն, որովհետև դա նշանակում ա, որ ֆոնդն ունի որոշակի օրակարգ և ասում ա, թե որ թեմայով կարաս դիմես: Ինձ թվում ա, որ ինքը պետք ա ավելի բաց լինի ու սահմանափակումներ չդնի: Եթե ֆոնդն ունենա, օրինակ, երեք հիմնական պրիորիտետային թեմաներ, դա էլի կատաստրոֆիկ կլինի, որ հերիք չի դու մենաշնորհ ես ձեռք բերել Հայաստանում ու ֆեմիլիատական բոլոր խմբերն արդեն քեզ պետք ա դիմեն, մի հատ էլ Էդ մենաշնորհով հանդերձ դու սահմանում ես որոշակի թեմաներ, որոնց շուրջ կարաս գրես ծրագիր, իսկ մնացած թեմաներով ոչինչ չենք կարող ներկայացնել: Ես կառաջարկեի, որ նման բան չլինի, որովհետև շատ ֆոնդեր դա անում են, բայց իմ կարծիքով դա սարսափելի վատ բան ա»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Առաջարկություններ հնչեցին նաև ծրագրերին դիմելու վերջնաժամկետների վերաբերյալ:

«Ինչ վերաբերում ա deadline-ներին՝ դա էլ սխալ ա, որովհետև, եթե օրինակ տրվում ա երեք ամիս, ապա դրա նպատակը էն ա, որ հավասար հնարավորություններ տրվեն բոլորին, իսկ երբ որ ցանկացած պահի կարաս դիմես, Էդ դեպքում, փորձը ցույց ա տալիս, որ սկզբում դիմածների հավանականությունն ավելի մեծ ա լինում, քան վերջում դիմածների, որովհետև վերջում արդեն փողերը սպառվում են և շատ են լինում արդեն մերժումները: Հետևաբար, գուցե իմաստ ունի ուղղակի որոշակի հատվածներում ասելու, որ որոշակի օրերին կարելի ա դիմել հաջորդ տարվա համար, բայց էլի չդնել թեմատիկ որոշակի սահմանափակումներ: Իսկ ինչ վերաբերում ա Urgent fund-ին՝ իմ կարծիքով դա շատ լավ գաղափար ա, որովհետև հաճախ ինչ-որ բան պետք ա անես ու հենց Էդ պահին պետք ա անես և չես ուզում մտնես Էդ բյուրոկրատական բաների մեջ: Միանշանակ արժի, որ դա լինի և դրա մեջ մտնեն շատ տարբեր հարցեր՝ անվտանգության հարցեր, ռեակցիոն մի բան անելը, բռնության ենթարկված անձանց անվտանգության հարցերը և այլն: Այսինքն՝ պետք ա ռեգերվում ինչ-որ գումար լինի, որը անընդհատ դու կարող ես փոքր-փոքր թվերով տալ»: (Նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Հետազոտությունը թույլ տվեց արձանագրել մի հետաքրքիր միտում. ՀԿ-ները ավելի հակված են նրան, որ Հիմնադրամը տրամադրի հիմնական ֆինանսավորում (core funding), իսկ անհատ ակտիվիստները կամ նախաձեռնող խմբերը ավելի շատ ակնկալում են աջակցություն կոնկրետ նախաձեռնությունների և ակցիաների համար:

Հետազոտության ընթացքում հնչեցին նաև այնպիսի կարծիքներ, որ, քանի որ Հայաստանում գրեթե բոլոր կանանց կազմակերպությունները և ակտիվիստները իրար ճանաչում են, հիմանդրամի համար դա կարող է որոշակի բարդություն և առաջացնել: Այս պայմաններում Հիմնադրամի համակարգողները պետք է հենց սկզբից սահմանեն որոշակի սահմաններ, որպեսզի հետագայում չստեղծվի լարվածություն և չառաջանան կոնֆլիկտներ:

«Ֆոնդը թող հասկանա, որ ինքը ֆոնդ ա ու լինի դիստանսավորված. մնացած հարցերը թող մարդիկ իրար օգնելով լուծեն: Ֆոնդը, երբ որ ինքը ֆոնդ ա, լավ կլինի, որ ինքը գիտակցի, որ ինքը ֆոնդ ա, ոչ թե ընկեր: Ու եթե ֆոնդը դիստանսավորված ա, ես հավատացած եմ, որ բոլորի համար շատ ավելի լավ ա լինելու: Եթե ֆոնդը խախտում ա էդ ու ամեն ձևի ուզում ա ցույց տա, որ ինքը էդ դիստանցիան չունի, դա ապագա խռովումների ու էդ այրումների բերելու ա, որովհետև ընդեդ մարդիկ մտածելու են, որ ընկերական են, թող իրանց տան ու ջոկու՞մ ես՝ ինչ պորբլեմներ են առաջանալու: Չեմ ասում, որ ֆոնդում աշխատող մարդիկ չպիտի ընկերներ լինեն, բայց լավ կլինի, որ ֆոնդը դիստանսավորում պահի»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

«Իմ համար շատ կարևոր ա, թե ովքեր են որոշելու ֆինանսավորում ստանալու ա՞ տվյալ խումբը թե չէ. ինչ-որ համակարգ պետք ա ձևավորվի, կարելի ա օգտվել նաև «Ֆրիդայի» մոդելից, որ դա լինի մասնակցային, և ինչ-որ առումով որոշեն նաև նրանք, ովքեր դիմել են: Բայց, քանի որ Հայաստանում միջանձնային խնդիրներ շատ-շատ կան, հնարավոր է, որ ոչ թե ընտրվի լավագույն ծրագիրը, այլ ինչ-որ մի բան լինի ընկերական հարաբերությունների արդյունքում, ու ինչ-որ մեկը, ով ներկայացրել ա շատ լավ ծրագիր, բայց ունի կոնֆլիկտ ինչ-որ մարդկանց հետ, կարող ա իրան չընտրեն: Չեմ մտածում, որ հիմա էն պահն ա, որ մենք պետք ա մեխանիզմների մասին խոսանք, բայց անպայման պետք ա հաշվի առնել, որ լինեն հնարավորինս բաց, թափանցիկ ու մասնակցային մեխանիզմներ»: (Նախաձեռնություն ներկայացուցիչ, Երևան)

Մարզային կանանց կազմակերպությունների/Նախաձեռնությունների ներկայացուցիչների կարծիքով ցանկալի կլինի, որպեսզի Հիմնադրամի խորհուրդը բաղկացած լինի նաև մարզային ներկայացուցիչներից: Հետազոտություն ցույց տվեց նաև այն, որ որոշ կազմակերպություններ ակնկալում են, որ **խորհուրդը լինի հնարավորինս ներառական և բազմազան**, ինչը կապահովի Հիմնադրամի արդյունավետ աշխատանքը:

«Դե, թող board-ում լինեն ներգրավված տարբեր background-ով մարդիկ. մի քիչ diverse լինի board-ը, օրինակ՝ լինի ընտանեկան բռնություն վերապրած, թող լինի արվեստագետ, թող լինի ռադիկալ ֆեմինիստ, թող լինի ՀԿ-ից, թող լինի ակադեմիայից ինչ-որ մեկը... Մի քիչ սպեկտրը ավելի լայն լինի, դիտանկյունը ավելի լայն լինի»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Ինչ վերաբերվում է հենց Հիմնադրամի ֆինանսավորմանը, ապա հարցվողների կարծիքով Հիմնադրամի ֆինանսավորումը պետք է իրականացվի բոլոր հնարավոր ուղիներով՝ սկսած անհատ բարերարներից մինչև միջազգային դոնորներ: Ըստ հետազոտության արդյունքների, որպեսզի Հիմնադրամը կարողանա արդյունավետ գործառնել այն պետք է ունենա առնվազն երկու-երեք ֆինանսավորման կայուն աղբյուր:

«Իրականում, իմ կարծիքով լավ կլինի, որ լինեն կոնկրետ դոնորներ, որոնք իրան ստաբիլ գումար տան: Այսինքն, եթե ինքը ֆոնդ ա ու մեկ ունի գումար, մեկ չունի, դա էլ լավ չի: Իմ կարծիքով շատ կարևոր ա գտնել տեղ ստաբիլ գոնե մի քանի դոնոր ... Ենթադրենք, եթե urgent ֆոնդ ա, ապա ստեղծի կազմակերպությունները իմանան, որ կարան դիմեն ու կլինի ինչ-որ փոքր գումար, որով կարան աջակցեն: Այսինքն՝ պետք ա երևի գտնել կոնկրետ և՛ արտասահմանյան

կազմակերպությունների, որոնք որ կոնկրետ հենց կանանց հիմնադրամներ են և տալիս են կանանց իրավունքի ոլորտում խնդիրներին վերաբերող գումարներ: Իմ կածիքով շատ ճիշտ կլինի տեսնել մի քանի մեծ դոնորների գտնել և իրանց հետ սկսել, որովհետև ֆոնդը չի կարա 5000 ստեղից ստանա, 200 ստեղից ստանա. դա մի քիչ անլուրջ էլ կլինի: Երբ ասում ենք ֆոնդ, պատկերացնում ենք ինչ-որ ավելի ֆունդամենտալ... Ճիշտ կլինի կապակել ինչ-որ կոնկրետ մեծ հիմնադրամների հետ»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Միևնույն ժամանակ, արդեն իսկ կայացած կազմակերպությունները պատրաստ են իրենք էլ աջակցել ֆոնդի կայացմանը:

«Մենք, ինքներս մեր կողմից աջակցության հետ կապված, մենք էլ կարանք ինչ-որ մի ձև մեր input-ը ունենանք՝ նայած ի՞նչ ֆորմատի կլինի, բայց թեկուզ կայացման հետ կապված ֆոնդի, կամ, նույն ասենք, ռեսուրսների տրամադրման: Չգիտեմ, ինչ-որ ուժեղացնող բաներ էլ մենք էլ կարանք ներդրում ունենանք»: (կազմակերպության ներկայացուցիչ, Երևան)

Հարկ է նշել նաև, որ Հիմնադրամի ֆինանսավորման հարցը միանշանակ չի ընկալվում կանանց կազմակերպությունների շրջանում, քանի որ ըստ նրանց, եթե արդեն իսկ սակավաթիվ ֆեմինիստական դոնորները, ինչպիսիք են, օրինակ Global Fund for Women, Kvinna till Kvinna, սկսեն իրենց գումարները տրամադրել Հիմնադրամին, դա կառաջացնի անառողջ մրցակցություն կանանց ՀԿ-ների և Հիմնադրամի միջև:

«Ինքը իրա ֆոնդը շատ տարբեր տեղերից կարա գեներացնի, որովհետև ինքը իրան չի դիրքավորելու որպես մարզինալ, ինքը կարա իրան որպես ավելի լիբերալ ֆոնդ դիրքավորի: Հիմա կան շատ լուրջ հնարավորություններ ֆոնդերի համար, կան ֆոնդերի ցանցեր և կարելի ա էդ ցանցերի անդամ լինել: Էստեղ ուղղակի, եթե օրինակ Global fund for Women-ը ֆինանսավորի Էստեղի ֆոնդին, ապա Էստեղի ՀԿ-ները այլևս չեն կարողանա դիմել իրանց, այլ պետք ա դիմեն Էս ֆոնդի միջոցով ու ստանան գումարները: Ես գիտեմ, որ Վրաստանում սա որոշ խմբերի մոտ առաջացրել ա խնդիրներ, որովհետև արևմուտքից ֆինանսավորվում Էր խումբը, իսկ իրանց ֆոնդի հիմնադրումից հետո այլևս Էդ խմբին չի ֆինանսավորել: Բայց ես դա Էդքան վատ չեմ տեսնում, որովհետև Էստեղի մարդիկ ավելի լավ են տեսնում, թե ով ա գործ անում իրականում, քան Ամերիկայի մարդիկ: Ինձ թվում ա, որ լրկալ ֆոնդ ունենալը դրական ա, ուղղակի Էստեղ ուժի և իշխանության հարցերն են, որ ոնց ա պետք Էդ ամեն ինչը անել: Եթե դու մտնում ես դրա մեջ՝ դու պիտի պատրաստ լինես որոշակի տարածքներից դուրս գալու: Որոշումների կայացման գործընթացն էլ Էլի լուրջ հարց ա լինելու, որովհետև Էն մարդիկ, ովքեր որոշում են, իրանք չեն կարա դիմեն ֆինանսավորման, բայց Էդ դեպքում լիքը մարդիկ դուրս կման ֆինանսավորումից: Էդ դեպքում երևի պետք ա լինի ռոտացիոն, որ ամեն տարի մեկը դիմի: Բայց ամենակարևորը, որ պետք ա լինի շատ թափանցիկ և մասնակցային»: (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

Որպես հնարավոր խոչընդոտ հարցվողների կողմից բարձրացվեց նաև **Հիմնադրամի թափանցիկության** հարցը: Ըստ հարցվողների մեծամասնության, քանի որ Հայաստանում մարդիկ արդեն շատ թերահավատ են դարձել շատ հիմնադրամների, դոնորների նկատմամբ, Կանանց Հիմնադրամը

պետք է ապահովի առավելագույն թափանցիկություն և ռեսուրսների արդար բաշխում:

«Փողերը կերա՛ն, տարա՛ն... Արդար չեն անում, ի՞նչ պետք ա եղևի... Ֆոնդը շատ դժվար բան ա, բայց, օրինակ հիմա տեխնիկան շատ հասանելի ա, ու կարա յուրաքանչյուրը բացի ու նայի, թե ուր են գնացել էդ գումարները, բայց դե չլինի գյուղապետարանի բյուջեի նման, որ բան չհասկանաս, թող պարզ գրվի, որ էսքան գումար ծախսվել ա էս ինչ բանի վրա»: (կազմակերպության ներկայացուցիչ, Լոռու մարզ)

Հետազոտության նպատակներից մեկն էր նաև պարզել, թե ինչ անվանում են պատկերացնում մասնակիցները Հիմնադրամի համար: Կանանց Հիմնադրամի համար առաջարկվող հավանական անվանումներն են՝ «Կանայք հանուն կանանց», «Տարբեր, հավասար և բազմազան», «Կանանց հզորացման հիմնադրամ» «Կանանց աջակցման հիմնադրամ», «Կանանց նախաձեռնությունների հիմնադրամ»:

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, ակնկալիքները Հիմնադրամից բավականին մեծ են և, ինչպես նշեց, հարցվոցներից մեկը՝ «...Որովհետև էդ ֆոնդից ակնկալիքներ իրոք շատ են լինելու, որովհետև, համեմատած Վրաստանի, Հայաստանում ավելի տխուր ա էդ իրավիճակը, ու հույսերը էդ ֆոնդի հետ կապված կարան շատ մեծ լինեն: Ու դրա համար ինքը չպետք ա վերածվի ծառայություն մատուցող կամ ինչ-որ ակցիաներ անող կառույցի, ինքը շատ նեյտրալ պետք ա լինի, պետք ա աշխատի որպես կատալիզատոր: (նախաձեռնության ներկայացուցիչ, Երևան)

LIST OF KEY INFORMANTS

1. Zaruhi Hovhannisyan - Coalition to Stop Violence Against Women
2. Maro Matossian - Women's Support Center, Armenia
3. Lida Minasyan - Society Without Violence NGO
4. Arpi Balyan - Women in Black Armenia, artist
5. Tatevik Aghabekyan - Sexual Assault Crisis Center, Armenia
6. Lilit Zakaryan - Women with University Education, Armenia, Legal Researcher
7. Ruzanna Tsaturyan - Ethnographer, Researcher on Gender Issues
8. Maria Abrahamyan - Tius UP Feminist Discussions Initiator, Article #3, Researcher
9. Anahit Manasyan - Researcher, Happiness Economist, Entrepreneur
10. Lilit Asatryan - Armenian Young Women's Association
11. Zaruhi Hayrapetyan - Commune, feminist, Activist
12. Susanna Vardanyan - Women's Rights Center NGO
13. Tamara Hovnatanyan - Womennet.am, journalist and analyst
14. Syuzanna Siradeghyan - Young Women's Initiative in Voskepar village, Tavush region
15. Bella Murazi, Zemfira Kalashyan - Sinjar National Union of Yezidis
16. Vladimir Osipov - Gender Expert, Researcher, Analyst
17. Lusine Talalyan - Queer Feminist Artist
18. Anna Ishkhanyan - Democracy Today NGO
19. Nvard Margaryan - PINK Armenia
20. Nazik Armenakyan - Woman Photojournalist, Co-founder of 4+ Photo Initiative
21. Aida Maruqyan - Member of Young Women Feminist Initiative in Yerevan
22. Ruzanna Torozyan - Goris Women's Resource Center and Winnet Armenia Network
23. Nvard Khachatryan, Satik Harutyunyan - Meghri Women's Resource Center, Winnet Network
24. Arpine Gyulumyan - Women's Initiative in Dprabak and near by Villages in Gegharkunik
25. Anna Nikoghosyan – Founder, Feminist Library
26. Anna Baghdasaryan - Women's Initiative in Vanadzor
27. Lusine Markosyan - Women's Initiative in Vanadzor
28. Gayane Grigoryan, Anna Ghukasyan - "Agate" Center for Women with Special Needs
29. Ashkhen Babayan - Spitak Helsinki Assembly
30. Gayane Khachatryan - Talin Women's Development Resource Center, Aragatsotn Region
31. Susanna Gyulamiryan - Feminist artist, Art Curator
32. Gohar Aslikyan - Young Women's Initiative in Berdavan village, Tavush region
33. Alvard Tovmasyan, Anahit and other members - Women's Center of Nalbandyan Village, Armavir Region

34. Heggine Babayan - Queer House/Tun

35. Stella Martirosyan - Non-Discrimination and Equality Coalition, Journalist

Skype interviews with the following representatives of Women's Funds were conducted as well:

1. Salome Chagelishvili- Women's Fund Georgia
2. Carolyn Boyd Tomasovic, Ecumenical Women's Initiative
3. Natalia Karbovska, Ukrainian Women's Fund
4. Jonathon Landeck, New Filed Foundation, West Africa
5. Dubravka Kovacevic, Women's Fund in Bosnia and Herzegovina
6. Abigail Burgesson- African Women's Fund